



305

200

Գիրտե Գարու Վ Կրտաւ

84
C

ՍՏՈՒԳԱՄ Է 1951 թ.

Ա Տ Ա Լ Ա

ՕՐԻՈՐԴՆ ՍԻՐԱԶՈՀ՝

305
30074

Որ է սրտառու և պատմութիւն իմն՝ զարդարեալ
իւրեքիկ նկարագրութեամբք բանաստեղծութիւն
Յօրինեալ ՚ի մեծանուն Հատիւբերիանայ Գարշ
ղիպուոյ . և թարգմանաբար վերածեալ ՚ի Հայ
բարբառ երկասիրութեամբք

ՊԱՐՈՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՎԴԱԼԵԱՆՑ՝

Մեոյ յանդամոյ Աստիոն Միւթնաւնէն Բանգաւայ , ԱԶ՝

Տպագրեալ արդեամբք և ծախուք Պարոն Պօ-
լոսի Որդանանեան , ՚ի Տպարանի Մարդասիրական
Ճեմարանի :

՚ի Հայրապետութեան Տեառն Տեառն Երէմայ՝ Խէնայ՝
Հայոց Կոնդէիոսի :

Ի Կ Ա Լ Կ Ա Թ Ա

1826 .



Սէրն միայն Աստուածական ,
առնէ զՍիրող երանական .
Ռեանիւ երկնից Լըցեալ ըզսիրա՝
երջանկաբար նա է միայն :

Արհեստ Աստուածայտութեան

Ազնիւ Պարոն Պօլոս Արդանանեան:

Իմ յարգոյ բարեկամ,

Աւրումի յականաւոր նախնեաց
քաջ խոհականութեամբ կշռեալ զգերա-
զանցութիւն օգտի հասարակաց քան զսո-
կական շահանհատից՝ առէր թէ, և է ճոխ-
ցոցոնէլ ամն ճոխանէլ: Չոյն զայս գովանի ալ-
գասիրական հոգի՝ ո՛ր պատուական սեպուհ
զարդիս անձին քու՛մ կերպարանեալ տեսա-
նեմ. քանզի զհասարակաց բարին գեր ՚ի
վերոյ համարեալ քան զբարիս անձին՝ ո՛չ

դանդաղիս զո՛հ մատուցանել զճախութիւն
քոյ առ ՚ի ճախացոցանել զՏայրենիս քոյին :

Ահաւասիկ՝ գեղեցիկ ապացոյց այսը
ինոյ նախադատութեան յայտ յանդիման
երևի ամենեցուն այս փոքրիկ միանգամայն
և զուարճալի մատեան բանաստեղծութեան
Ատալայի . զորոյ զբերկրատիթ և զպիտե-
ան բանս բազմօք յառաջ ընթերցմամբ ճա-
շակեալ՝ փախաքէիր զնոյնն Տայացոցանել
և Տաղորդել զքաղցրութիւն նորին քմաց
Տամարիւն Հայազգեաց քոց : Արդ՝ եհաս
ժամ լրութեան Տայրենասիրական փախ-
գանայ քոց . և ես ուրախակից լինիմ ընդ
քեզ զի ՚ի ձեռն ապիկար գրչի խոնարհ
մշակիս տանն Առքանազայ , տեսնես այս-
օր զյանկալի բանեղէն լապտերն քոյ լու-
ցեալ ծախուք առատաձեռնութեան քոյ
և եղեալ ՚ի վերայ աշտանակի , ՚ի պայ-
ծառութիւն Տամազգեաց քոց :

Արդ՝ Տաճեաց ընկախուլ և ընդ
քեզ սերունդք մերոյս Հայկայ , զայս դուզ-
նաքեայ աշխատասիրութիւն իմ , զոր քա-
ջիկ խոհականութեամբ ընտրեցեր առ ՚ի
գթօտանս մատաղատունկ Հայազգեաց : Ահն-
ունիմ զի փոքրիկ գրաւոր գործս այս ՚ի
մատակարարելն ախորժակաց մերայնոց լը-

բանս ակորժածաշալս՝ արկցի՛ զնախանձ
'ի սիրոս բազմաց առ 'ի օրինակել յին-
քեանս զտիպ գովելն Տայրենասիրութեանդ։

Կալով Մուամ՝

Իմ յարգոյ բարեկամ՝


Քեզ միշտ պատրաստական
և անձնադիր ծառայ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԴԱԼԵԱՆՑ :

Ի Մարտտերտի՛ն Ճեմարտի՛ն ,

և Կալմոսի՛ն 'ի 30 Սեպտեմբերի՛ն , 1826 .

ՅԱՌԱԶԱՐԱՆՈՒԹԻՒՆ:


 աշխարհայ փոքրիկ գործս այս արտա-
 ղարեալ է 'ի գրչէ գերահռչակ Գաղ-
 ղիայի բանաստեղծին՝ Շատիւբերիանտայ՝ նկարա-
 գրելով զարդարուն և գեղեցկայարմար իմաս-
 տիւք զպատմութիւն Ատալայի և Ճակտոսի՝
 երկոցունց անզուգական սիրականայ ծաղկելոց
 բազմօք յառաջ 'ի հարաւային սահմանս նորոյ
 աշխարհին :

Ապաքէն՝ 'ի ներածութեան մատենիս՝ զոր
 ընթերցողն ունի տեսանել 'ի սկզբան պատմու-
 թեանս՝ լիովին բացատրեալ երևին պարագայք
 այսր գեղեցիկ բանաստեղծութիւն և հանգամանք
 մեծանուն հեղինակին : Յոր 'ի գէպ է ինձ
 յաւելուլ և զայս, զի արժան է ամենայն Հայ-
 կազուն ընթերցողայ հայիլ զգպատութեամբ 'ի
 պանծալի օրինակ ողջախոհ սիրահարութեան այ-
 սոցիկ երկուց անխարդախ տատարակայ՝ զՃակ-

տոսին ասեմ՝ և զԱտալային . յորոյ վերջինն զո՛հ մատոյց զանձն իւր անդրդուելի սիրոյ առաջնոյն . քանզի հաստատուն մնալով նորա յաստուածա- հաճոյ ուխտի իւրում՝ կրօնն յաղթական հանդիսացաւ ՚ի վերայ սիրոյն :

Յիրաւի ըստ տկար կարծեաց իմոց ես զայն պիտի մատեանս ասորժաճաշակ համարիմ քմաց արդի ընթերցասէր Հայկազուն համբակաց , որք ընդ բարոյական և հոգեշահ խրատուց ջամբեսցեն նոցա զբանդէն նիւթս անխառն բերկրանաց և զուարճութեան՝ միաւորեալ ընդ առարկայից անմեղ սիրոյ , որ մեծ ներգործութիւն ունի ՚ի վերայ մարդկայինս բնութեան : Իսկ այս սակաւամանեայ աշխատասիրութիւն մեր կազմեալ է յայսպիսի հոգեշահ և ՚ի սրտագրաւ նիւթոց : Ազա ուրեմն արժան է մտադիր ընթերցողութե՛ն ամենայն գեւապիթիթ Հայկազուն գրասիրաց :

Իսկ՝ եթէ ընթերցողք մատենիս քաղեացեն աստի զպտուղս օգտի և կամ զուարճութեան , զայն նախ խնամոյ երկնից վերաբերեացեն և մի իմում տկար երկասիրութեան . և ապա պանծալիս հայրենասիրութե՛ն Պարոն Պողոսի Որդանանեան . որոյ խնդրանօք և ծախուք ՚ի լոյս ընծայեցաւ այս գրկոյկ ՚ի Հայ բարբառ , և որոյ գովութիւնն արձանագրեալ կայ ՚ի ճակատ սորին

Հանդերձ իմով երախտադարձութեամբ ։
Հուսկ ամենայնի՛ արժան է յուշ առնել
Տեսազօտ ընթերցողաց, զի այսու Տրատարա-
կութիւնք և եթ ոչ չափի ազգասիրութիւն Պա-
րօն Պողոսին . քանզի ունի նա ՚ի մօտ իւրում
բարեմասնանձ դիտաւորութեամբ և զայլ քանի մի
բանաստեղծական մատեանս տպիցուցանել յօգուտ
իւրոյ ազգի . զորոյ զթարգմանութիւնն և զօր-
պագրութիւնն Տէրն յաջողեսցէ ։



ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ՝

Հատիւբրիանո՛ մեծանուն Տեղիկակ Ատա-
լայի ՚ի պատանեկուէ իւրում շարժեալ եռան-
դեամբ Տետազօտութեան՝ կամեցաւ ճանապար-
հորդութիւն առնել ՚ի Լուսիանա . զերկից
մի ասեմ՝ որ միանգամայն նոր է և տարբեր յայլ
ամենայն երկրէ, զոր տեսեալ էրնա յԵւրոպիա ։
Սմին իրի յառի Տեառն 1789 չու արարեալ
զնաց ՚ի Տիւսիսային Ամերիկա ։ Յամայացեալ
վայրս անապատի և մերձ ՚ի խրճիթս վայ-
րենեաց՝ ասէ Հատիւբրիանո՛ գրեցի ես զբա-
նաստեղծական պատմութիւն Ատալայի ։ Ո՛չ գի-
տեմ թէ արդեօք առաջիկայ աշխատասիրութի
իմ հանդիպեսցի հաճութե հասարակայ . քանզի

տարբերի սա յոյժ յայլոց բանաստեղծական գր-
րոց . և նկարագրեալ են ՚ի սմա վարք և սովոր-
ութիւնք միանգամայն օտարք ՚ի վարուց և ՚ի
սովորութեանց երկրին մերոյ : Հետեւելով իմ
օրինակի նախնի Տեղինակաց՝ բաժանեցի զայս մա-
տեան ՚ի պէտքս մասունս . որք են՝ Նախնոր-
Արքայնութիւն և Արքայնութիւն : Զգլխաւոր
մասունս այսորիկ պատմութեան անուանեցի՝ Ու-
որդոցն , Հողագործոցն , ևն . հետեւելով օրինա-
կի հագներգուաց պաշնոց . որք ՚ի ժամանակի
նախնի Յունաստանի երգէին զհատուկոտոր
հատուածս բանաստեղծութեանն Հոմերոսի լնդ
այլ և այլ գլխովք :

Բաջայայտ է ամենեցուն արեամալի վիճակ
Գաղղիոյ . որ յընթացս բազում ամաց իբրև զկոճղ
այլ ծփեալ ՚ի կոհակաց քաղաքական խռովու-
թեան՝ ծովայաւ արեամբ բազմաց անմեղ քաղա-
քացոց : Մեծարոյ մայր իմ և տեն չալի քոյր իմ
բանարգել եղեալ հրամանաւ բոնստորաց՝
զբաւեցան ՚ի կենաց աստի ՚ի շարչարանս խա-
ւարային բանտի : Տրտմեալ իմ հոգևով չափ թ
այս դառնաղէտ պատահար և յաղթահարեալ
՚ի ցաւոց յուսահատութե՝ թողի լքի զաշխարհ
իմ հայրենի . և գնացեալ իմ յաշխարհն Ամե-
րիկոյ՝ թախառական շրջեցայ իբրև պանդուխտ
յետար երկրի :

Յայս երկիր տարագրութեան իմոյ պարագե-
յայ ՚ի յօրինուածս պէսպէս բանաստեղծութիւն . և
յայտոյիկ գրաւորական աշխատանայ իմոյ կարացի
պահպանել միայն զքանի մի հատուկոտոր բանս
և մանաւանդ զբանաստեղծութիւնն Ատալայի :
Արժան համարիմ յիշատակել աստանօր , զի
առարկայ պատմութեանս այսորիկ ո՛չ է բոլորո-
վին մտայածին և ինքնահնար . Ճշմարիտ է՝ զի
վայրենի ոմն եղև գերի ցուկանաւ . և զինք
բազում ամաց գերութեան իւրոյ ամառ Ք կա-
լանաւորաց իւրոյ յարքունիս Լուդովիկոսի չո-
րեքտասաներորդի . Ճշմարիտ է՝ զի Գաղղիացի
միսոնար մի արարեալ է զամենայն գործս՝ զորս
յիշատակեալ եմ յընթացս այսր պատմութեան .
Ճշմարիտ է՝ զի տեսեալ եմ զվայրենի բնակիչս
Ամերիկոյ , որք բարձեալ տանին յուսս իւրեանց
զոսկերս նախահարց իւրեանց . նա և Ճշմարիտ է՝
զի տեսեալ եմ զմատաղաւուրց մայր ոմն՝ որ չորս-
ցուցանէր զմարմին վաղամեռիկ երեխային իւրոյ
՚ի վերայ ստեղանց ծառոյ միոյ : Սոյնգունակ
Ճշմարիտ են և այլ գլխաւոր մասունք այսորիկ
պատմութեան . թէպէտ և զարդարեալ են
նկարագրութեամբ բանաստեղծութեան :

The first part of the book is devoted to a general history of the country, from the earliest times to the present day. It is a very interesting and valuable work, and one which every student of history should read. The author has done his duty, and has given us a full and complete account of the country, and of the people who have lived in it. The second part of the book is devoted to a description of the country, and of the various parts of it. It is a very interesting and valuable work, and one which every student of history should read. The author has done his duty, and has given us a full and complete account of the country, and of the people who have lived in it. The third part of the book is devoted to a description of the country, and of the various parts of it. It is a very interesting and valuable work, and one which every student of history should read. The author has done his duty, and has given us a full and complete account of the country, and of the people who have lived in it.

Ա Տ Ա Լ Ա

Ն Ա Խ Ա Ր Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն :

Գաղղիա 'ի նախնութիւնսն ունէր զլայնատարած տէ-
 րութիւն 'ի հիւսիսային ամիրիգա , որ տարա-
 ծեալ ձգէր 'ի սահմանայն Լապրադորայ մինչև
 'ի սահմանս Փլորիդայ . և 'ի յԱտլանտեան ու-
 կիանոսէ մինչև 'ի հեռագոյն լիճս վերին Կա-
 նադիոյ : Չորս մեծամեծ գետորայք՝ որք բըղ-
 խին յականց այսոցիկ լերանց՝ բաժանեալ տրո-
 հեն զայսոսիկ լայնածաւալ երկիրս . գետն սրբ-
 օոյն Լորինտիոյ յարևելից կուսէ հեղեալ խառ-
 նի 'ի ծոյն ծովուն սրբոյն Լորինտիոյ . գետն
 յարևմտից կուսէ ձգեալ տարածէ զկոհակա
 իւր 'ի ծովս անձանօթս և երկարս . գետն Բոց-

բոնայ ընթանայ 'ի Տարաւոյ 'ի Տիւսիս 'ի ծոյն
Հողսոնայ . և գետն Մեսեսսիպի՝ որ ընթա-
ցեալ գնայ 'ի Տիւսիսոյ 'ի Տարաւ՝ Տեղեալ
մտանէ 'ի ծոյն Մեքսիկոնի :

Այս գետ ուղղէ զդալարագեղ երկիր մի ,
զոր բնակիչք միաւորեալ տէրութեանցն կոչեն
նոր եդեմ՝ որոյ շուրքն տարածեալ հասանեն
յերկիրս Տեւաւորս առաւել քան զերեք հա-
զար մղոնս . սակայն Գաղղիացիք տակաւին յոր-
շորջեն զերկիրննոր եդեմայ քաղցրիկ անուամբս
Լուսիսիանայ : Անհամար փոքրիկ գետորայք ,
որք ստորադաս են քան զՄեսեսսիպի , այսինքն՝
Մեսսուլի , Եղինոս , Աքանզա , ՈՏիոյ , Աա-
բաշ և Թենայոսի՝ գեղեցկազարդ յօրինեն և ար-
գասաւոր առնեն զեզերս նորին : Յորժամ հե-
ղեղք շուրցն ձմեռնային եղանակի լցեալ բարձ-
րացուցանեն զգետորայս զայսոսիկ , յորժամ սաս-
տիկ հողմք և մրրիկք յերկիր կործանեն զբո-
վանդակ սահմանագլուխս անտառայ , ժամա-
նակն ժողովէ 'ի վերայ ւղեսպէս աղբերայ նց
զձառս խլեալս արմատաքի . կապէ միաւորէ ըզ-
նոսա չուանօք սիզոյ . կաւն է մածուցիկ շաղախն՝
յորոյ վերայ Թուփքն գոլով տնկեալ՝ ձեացու-
ցանեն զծածանեալ ծառատունկս , զորս զայրա-
ցեալ կարկաջասահանքն քարջեալ տանին 'ի գետն
Մեսեսսիպի : Կալեալ ըմբռնէ զնոսա գետն

միտքով . և առ ՚ի բաժանել զինքն ՚ի նորոգ մասն ինչ , վարեալ մղէ զնոսա դէպ առ բերանն իւր : Երբեմն երբեմն խոխոջաձայն կոհակք այնորիկ Նեղոսին անապատի հոսանօք լնթայեալ ընդ բարձրաբերձ լեռամբք՝ խռովեն զահաւոր լուծի տեսարանին . կամ սիրեալ տարածին շուրջ զստուերախիտ ծառովքն անտառայ , և զտխրամամ շինուածովք գերեզմանայն արեմտեան շնդկաստանի : Գեղեցկատեսիլ զարդք դալարագեղ բնութեան յօդին միանան : Մինչդեռ միջին սահանք գետոյն ձգեալ մլղեն զանհիւթ և զաղաղեալ բունս սարոյից և կաղնեայ (1) յաին կոյս ծովու , և ընդ հոսանայ ջուրյն երևին ծածանեալ կղզիք Պիտտիայից (2) և Նունուֆարայ , (3) որոյ գեղնագոյն գնտագլուխքն երևին նման վրանայ , օձք կանաչագոյնք , հերոնք կապուտագոյնք , կարմրերանգ ֆլամինգոյք (4) և փոքրիկ կոկորդիլոսք նաւելով գնան յայտոսիկ ծաղկաւետ նաւակս . և գաղթականն ջրային բանալով հորմոյ զոսկերանգ փռագաստս նաւակայ՝ իջանէ ՚ի յամաք տակաւին ննջեալ ՚ի հեղաւոր ամբարտակ ինչ ամանց գետոյն այնորիկ :

Ի բերանոյ գետոյն Մեսեոսիպեայ մինչև ՚ի տեղին յայն՝ յորում միաւորեալ խառնի ՚ի գետն Ոհիոյայ , աչք մարդոյ զուարճայեալ

բերկրի ընդ տեսարանս ուրուակիսն զգատկերաց
 իրաց . յարևմտից կուսէ արօտք և մարգագե-
 տինք բացեալ տարածեն զդալարագեղ կանաչա-
 գոյն վերարկուս իւրեանց , որք 'ի Տեառստ ե-
 րևին ամբառնալ 'ի վեր և միաւորել զդալա-
 րուի իւրեանց ք կապուտակս երկնից . յայնոսիկ
 լայնատարած դաշտորայս դեգերեալ շրջին երա-
 մակք գոմշոյ և բորողմնաց . և երբեմն * բիսն
 Տինաւուրց ճեղքելով զանհամբոյր հոսանս
 ջուրց վաղեմի լանջօք իւրով՝ լուղալով անցանէ
 'ի միւս կողմն գետոյն . և զկայ առեալ գիւրե-
 հանգստեամբ զխոնջեալ բարձս իւր 'ի վերայ
 խոտաւէտ անկողնոց կղզոյ իրիք՝ որ 'ի գետն
 Մեսսեսսիպեայ , մեծարու գլուխ նորա կորա-
 ցեալ լինելով ընդ ծանրութեամբ ոլորտապտոյտ
 եղջերաց նորա , և մօրուսք նորա գոլով տղմա-
 լից երևինա իբրև բառանջող շաստուած գե-
 տոյն , որ վեհանձնական հայեցուածով ակնար-
 կէ 'ի մեծաբանակ ջուրս կոհակայ նորա , և յա-
 մայի դալարագեղ առատութիւն եղերաց նորա ։
 Սակայն զիարդ զուարճալի և ցանկալի է հա-
 կադրեալ տեսարանն որ 'ի կողմն հարաւային .
 զազգի ազգի ծառս , զտունկս և զծաղկունս ա-
 սեմ՝ որք գտանին ծածանեալ 'ի վերայ Տեղեղայ

* Տեսակ իմն վայրենի եղին , որ յաճախ գտանի
 յայնոսիկ երկիրս հիւսիսակողման ։

Ջուրցն գետոյն, ժողովեալ գումարեալ 'ի վիճ
 վիմայ և լերանց, ցրուեալ տարածեալ 'ի միջի
 ձորոց. որք բուրեն զտարբեր անուշահոտութիս,
 ունին զայլայլեալ կերպարանս և զպէսպէս ե-
 րանգս. և գեղեցկատեսիլ հիւսուածովք հիւ-
 սեալ պսակեն զպէսպիսայեալ գլուխս իւրեանց.
 և ամբարձեալ 'ի վեր ելանեն անչափելի բարձ-
 րութեամբ: Բիզնոնիայք, (5) որթք (սաղողոյ),
 և կոլոսինթայք (6) փաթութեն զվտիտ ար-
 մատս իւրեանց շուրջ զքնիւք իւրեանց, բարձ-
 րայեալ հասանեն մինչև 'ի ծայրս ստեղանց
 իւրեանց, և անցանելով 'ի մապել անուն՝ ծա-
 ուոյն առ դալարագեղ կակաչս (7) և Թուփս
 ալսիայից՝ (8) ձևայուցանեն զբազմապատիկ
 կամարակագս և զսարփինայս կանաչաւետս. տա-
 րածելով նց 'ի ծառոյ 'ի ծառ՝ յաճախակի ձը-
 գեն նոքա զմանրաթել ձիւղս իւրեանց 'ի վերայ
 գետոյ. և կերտեալ յօրինեն 'ի վերայ նոցա
 զկամարս տերևոց և ծաղկանց. 'ի մէջ այսոցիկ
 անուշահոտ ծաղկանց՝ գեղապանծ մագնոլիայն
 (9) բարձրայուցանէ զանշարժելի կոնոն իւր՝
 զարդարեալ ձիւնախայլ ծաղկամբք, և գեր 'ի
 վերոյ հանդիսայեալ 'ի վերայ բովանդակ ան-
 տառին՝ չունի զայլ գերագոյն ախոյեան քան
 զգեղեցիկ արմաւենին. դորոյ կանաչաւետ սա-
 ցարթս մեղմով շարժեն հողմքն զուարթարբք:

Քաղմութիւնք կենդանեաց բնակին յայտոսիկ
 բերկրաղուարձ տեղիս , զետեղեալ անդանօր
 ձեռամբ Արարչի իւրեանց առ 'ի զուարթս-
 յոպսանել զտեսարանն ողջոյն . աստանօր արջն
 արբեալ 'ի Տիւթոյ վայրի խաղողոյ՝ դանդա-
 չէ 'ի վերայ ստեղանց կնձնի ծառոյն . երա-
 մակք այժեմանց լողանան 'ի լիճս . սեւթոյր
 սկիւռք խաղան 'ի սողաթակերտ բնակարանս
 իւրեանց . կատակերգակ թռչունք՝ (10) մաք-
 րակենցաղ տատրակք , որք ո՛չ են մեծագոյն քան
 զժիծեռունս՝ իջանեն 'ի վերայ խոտոց կարմրա-
 յելոց ելակօք . կանաչագոյն թռթակք՝ որոց
 գլուխքն փայլին դեղին երանգօք՝ ծիրանեգոյն
 թռչունք կոչեցեալք փայտիորք , և կարմրե-
 րանգ կարդինալք (11) թռուցեալ սաւառնեն
 'ի ծայրս կիպրոսաց . ծաղկենկար թեք մրմնջող
 թռչնոց (12) փայլեալ փողփողին 'ի վերայ
 յասամանոցն Փլորիդայ . և ահաւոր կլանօղն
 թռչնոց՝ օձն սեւթոյր շաչէ սաստկագին , պը-
 տոյտբեալ 'ի վերայ այնոցիկ դալարագեղ սա-
 ղարթակերտ կամարաց : Եթէ լռութիւն թա-
 գաւորէ 'ի մարգագետինս 'ի վրայն կողման
 եզեր գետոյն , յայտ կողման լսելի լինի ձայն
 շարժման և դղրդման . կոչահարեւն թռչնոց
 զժառս անտառին , փշրեւն կենդանեաց զթինս
 պտղոյ , խոխոջաձայն ընթանալն ջուրց և վտա-

կայ, գոռալ և աղաղակելն վայրենի գաղանայ, մեղմաձայն մնչիւն տատրակայ, ձևայուցանեն զքաղցրիկ միանգամայն և զվայրենի դայլայլիկ ներդաշնակութե : Բայց սակայն յորժամ հողմին չ շարժեալ զուարթացուցանէ զայսոսիկ վայրս առանձնութեան, շարժէ զայսոսիկ օդաբնակէակս քաղցրութեամբ, միաւորեալ կցէ ընդ միմեանս զպէսպէս գունաւոր մարմինս, այսինքն ապիտակ, կանաչ, կարմիր և ծիրանեգոյն, և խառնէ ՚ի միասին ներդաշնակութեամբ զամենայն զձայն և զշարժիւն, այնպիսի ահաւոր ձայնք ելանեն յանտառայ անտի, այնպիսի տեսարանք յանդիման լինին աչայ մարդոյ, մինչ զի ընդունայն եղիցին ջանք իմ առ ՚ի նկարագրել զնոսա այնոցիկ մարդկան՝ որք ոչ երբէք գնայեալ են ՚ի տեսութի այսոցիկ նախնական դաշտայն բնութեան :

Յորժամ հայր շաննեպին և տարաբաղդիկն Լասալէ գտին զգետն Մեսսեսսիպի, (13) Գաղղիայիքն այնոքիկ՝ որք զառաջինն բնակէին ՚ի Բելոքսիս և ՚ի նորն Օրլիան, կրուեալ էին զդաշինս բարեկամութե ընդ Նատչեայ, որք էին ազգ երևելի ՚ի յարեմտեան շնդկաստանի. և սոցա կարողութիւնն ահաւոր էր յայնոսիկ կողմունս աշխարհի : Անիրաւութիւն, վրէժխնդրութիւն և սէր անսանձ և

ամենայն կիրք թուճաւորք կանխաւ արտօտաւոր-
 եալ պղծեցին արեան ճապարտօք զերկիրն Տիւր-
 ընկալութեան : Ի միջի վայրենի ժողովրդոցն
 այնոցիկ բնակէր այլ մի Ճակտոս անուն . հա-
 սակ ծերութեան , իմաստութիւն և ընդարձակ
 գիտութիւն մարդկայինս բնութեան՝ արարեալ
 էին զնա նահապետ և սիրական պատկեր այնո-
 ցիկ ամայի անտառայ : Չօրէն այլ ամենայն
 մարդկան շահեալ էր նա զառաքինութիւնս
 ճգանօք և թշուառութեամբ . ոչ միայն ան-
 տառք էին ականատես և վկայ ձախողութեանց
 նորա , այլ և աղէտք թշուառութեան նորա
 հասեալ էին մինչև ՚ի սահմանս Եւրոպիոյ •
 Կագեալ կաշկանդեալ ծանրաբեռնեալ շրջ-
 թայիւք՝ կրեալ էր նա ընդդէմ իրաւանց ըզ-
 րառնաղէտ վիճակ կալանաւորաց ցեղանառ ՚ի
 սահմանս Մարսիլիայ • յորժամ արձակեցաւ ՚ի
 բռնութենէ կապանաց , ածաւ սուաջի Լուդո-
 վիկոսի շորեքտասաներորդի • զրուցատրութիւն
 արար ընդ գերագոյն արանց այնր լուսազայծառ
 ժամանակի • նպաստամատոյց եղև ՚ի մեծածախ
 խնջոյս Վարսիլիայ , յեղերերգութիւնս Ռասի-
 նեայ , և ՚ի գերեզմանական ճառս Բոստետայ •
 Անդամօր այլ ոմն վայրագասուն վայելեաց զբա-
 րիս ընկերութեան և կենցաղակցութեան գերա-
 գոյն իմն պայծառութեամբ :

Յընդերկար ժամանակաց հետէ դարձ արա-
րեալ նորա անդրէն յերկիր իւր բնածին՝ վայ-
ելէր ՚ի բազում ամս զխաղաղութեան կեանս ան-
դորրութեան ՚ի մէջ համազգեաց իւրոց : Թէ-
պէտ և տեսչութիւն հաճեցաւ պարգևել Ճակոտսի
զմխիթարութիւն անդորրաւէտ կենաց, սակայն
աղօտացեալ էին աչք նորա ՚ի ծերութենէ .
և մանկահասակ օրիորդ մի առաջնորդէր նմա
յանապատի անգ, ը որում Անտիգոնա առաջ-
նորդէր Ոգիպոսի ՚ի լեառն կիթերեայ . կամ
բառ որում Մալվինա առաջնորդէր Օստինեայ
՚ի գերեզման նախահարց նորա :

Թէպէտ և Ճակոտս կրեալ էր զսաստիկ ան-
գթութիւն ՚ի Գաղղիացոց, բայց և այնպէս
սիրէր նա զնոսա յոյժ . բարեկամացեալ էր ընդ
մեծին Քենեւոնի . և բաղձալով ցանկայր ծառայ-
ել այնոցիկ ամենայնի՝ որք ծնեալ էին յայնմ՝
երկրի ընդ առաքինազարդ առն այնմիկ . ՚ի վեր-
ջոյ եգիտ նա զբարեպատէճ իմն ժամ առ ՚ի
յագեցուցանել զբաղձանս որորմած սրտի իւրոյ .
յամի տեառն 1725 Գաղղիացի ոմն Ռենի
անուն, վշտագնեալ հարուածովք թշուառութ՝
պարտաւորեցաւ ՚ի ներութիւն երթալ ՚ի Լուիսիա-
նա . ՚ի վեր ելեալ զնայ նա ՚ի Մեսսեսսիդի ,
մինչև եհաս ՚ի բնակութիւն Նատչեայ . և խնդ-
րեայ թախանձանօք ՚ի նոցանէ առ ՚ի ընդունել

զինքն 'ի թիւս պատերազմողայ (14) այնք անդ-
դի : Ճակտոս ընդ վայր ջանայր առ 'ի փոխել
զմիտս նորա 'ի խորհրդոյ նորին . կալաւ զնա
իբրև իւր որդեգիր . և ամուսնացոյց զնա ընդ
մանկամարդ շնդկի միում՝ որոյ անունն կոչիւր
Կելեւտա : Փութանակի զինի կատարման հար-
սանեաց նոցին , վայրենի ժողովուրդքն արարին
զպատրաստութիւնս վան մեծի հանդիսի որսոր-
դութեան բեշկի մշկոյ :

Թեպէտև Ճակտոս զրկեալ էր 'ի զգայութե
տեսողութե , սակայն երէցք խորհրդականաց հա-
մաձայն հաւանութե ընտրեցին զնա հրամանա-
տար այնորիկ արչաւանաց , քանզի սքանչացեալ
էին նոքա մեծապէս ընդ սխրալի առաքինութիւ
նորա : Պահք և աղօթք անդէն սկսան . ձեռ-
նածուքն մեկնեալ բացատրէին զպէսպէս երազն
խորհուրդ հարցանէին 'ի Մանիտովսե . (15)
ձխախոտս ծխէին 'ի վր մեհենից իւրեանց . մեջք
որթու և երնջոյ արկեալ լինէին 'ի հրդեհս
հրոյ . և առ 'ի իմանալ զկամս դիւակամ ոգւոյ ,
սպասէին տեսանել թէ արդեօք այսոքիկ խոր-
հրդաւոր դահամունք ձարձատէին շառաջմամբ
'ի մեջ հրոյ . հուսկ ապա ելեալ գնացին նոքա
յարչաւանս որսոյ , զինի ուտելոյ զշունս դիցա-
նուէր : (16) Թե՛նի էր մի 'ի յորսորդայ ան-
տի : 'ի ձեռն հակադարձ հոսանայ ջրոյ ան-

պատակաւորքն 'ի վեր ելին 'ի Մեսսեստիպի, և մտին յակօսամէջն գետոյն ՈՏիոյ : Յայնժամ էր միջին եղանակ աշնան, և լայնատարած անապատք կենտուկեայ (17) յուցանէին զպայծառափայլ տեսարանս իւրեանց զարմայեալ աչայն Գաղղիայի պատանեկին :

'Ի գիշերի միում՝ մինչդեռ լուսինն արձակէր զընդադրտ իմն նշոյլ լուսոյ, և վայրենիքն ննջէին 'ի յատակս կանուխայից իւրեանց, և այն ինչ նաւատորմորն Հնդկայ բայեալ էր զառագաստս զուարթարար հողմոց, Ճակտոս և Ռեյի գոլով արթուն տակաւին՝ պատանին խնդրեաց 'ի ձերունոցն առ 'ի առնել զպատմութիւն անյից կենայ իւրոց : Ճակտոս նատեալ 'ի խելս նաւակի իւրեանց և յօժարեալ առ 'ի լյուսյանել զտենչանս հետազօտութեան նորա՝ լսկսաւ զպատմութիւն իւր 'ի մէջ անապատին . որոյ լուութիւնն ո՛չ էր բնաւին խառվեալ յառաջագոյն, բայց միայն 'ի խոխոջանայ փրփրայեալ հոսանայ գետոյն :

ՈՐ ՍՈՐԴ Ք Ն Ի

Սիրելի որդեակ իմ, զի՛նչպիսի տարբեր վիճակաւ մտանեմք մեք յայսոսիկ անապատայեալ տեղիս : Ի քեզ տեսանեմ ես զքաղաքաւար մարդն փոխեալ ՚ի վայրագութի. և յիս տեսանես դու զմարդն վայրենի՝ զոր մեծագօր ոգին սակս անյայտ ինչ պատճառի սկսեալ է անտարակոյս փոխարկել ՚ի քաղաքականութիւն. մըտել մեր երկոցունց յընթացս կենաց երկոքումքք հակադրեալ ծայրիւք՝ դու եկեալ ես հանգչիլ ՚ի տեղուջ իմում, և ես ժառանգեմ զտեղին քոյ. սմին իրի և մեք տեսեալ եմք զիրա աշխարհի կարի տարբեր իմն հայեցուածովք : Ոգիքն միայն գիտեն, թէ որ մի ՚ի մէնջ ընկալեալ է զՀԱՏ կամ զվնաս փոփոխութեան վիճակի մերոյ. քանզի փոքրագոյնն յոգւոյ անտի ատաւել իմաստուն և հանձարեղ է քան զամենայն զազգ մարդկան :

Ի միւսում լուսնի ծաղկանց, * եօթնիցս տասն յամանակք ձեան և երեք ձիւնք աւելի անցել

* Ամիսն Մայիսի. ձիւնքն են ամբ, 73 ամբ օ

են 'ի ժամանակէ անտի , յորում մայր իմ էած զիս յաշխարհ յեզերս գետոյն Մեսսեսսիպեայ : Սպանիայիքն նորոգ բնակեալ էին 'ի ծոյն Պենսակոլեայ . սակայն ոչինչ սպիտակ մարդ երբէք մտեալ էր 'ի բնակարանս Լուիսիանայ :

Մինչչև մարթ էր ինձ հաշուել զեօթնևտասն անկմունս տերևոց , ուղեկցութեամբ գնացի ընդ հօր իմում՝ պատերազմողին Ուտալիսսեայ ընդդէմ Մոսկոպոզայ ուք են ազգ հզօրեղ յերկրին Փլորիդայ : Խառնեցաք մեք 'ի գունդս Սպանիայի բարեկամայ մերոց . և քիսաք զպատերազմն յեզերս գետոյն Մոբիլեայ : Արեսկոլին՝ չնձն պատերազմի և Մանիտուլս ոչ հայեցան 'ի մեզ շնորհալի դիմօք . քանզի 'ի պարտութիւն մատնեցաք մեք յերեսայ թշնամեայ . հայր իմ զրկեցաւ 'ի կենաց 'ի պատերազմի անդ . և ես երկիցս վիրաւորեցայ 'ի պաշտպանութեան նորուն : Աւաղ՝ ընդէ՛ր ոչ հետեւեցայ նմա յերկիր հոգեղինաց : Յայնժամ փրկեալ լինէի յամենայն ձախողութեանց՝ որք դարանակալ եղէն ինձ յայսմ դառնաղէտ աշխարհի . սակայն ոգիքն այլազգ անօրինեցին զվիճակ անձին իմոյ , քանզի փախստեայք ոմանք ածին զիս ընդ ինքեանց 'ի սուրբն Օգոստինոս :

Յայնմ քաղաքի՝ յորում Սպանիայիք նորոգ կալեալ էին զբնակութիւն՝ վտանգ կայր ինձ

յանդիման առ ՚ի աքսորիւ ՚ի Տանքս Մեքսի-
 կոնի . յորժամ Տինաւուրց ոմն Աաստիլիայի՝
 Լուպէզ անուն , շարժեալ ՚ի զուարթածաղիկ
 պատանեկութենէ և ՚ի պարզմտութենէ իմմէ՝
 մատոյց ինձ զտեղի ապաւինի . և յանձն արար
 զիս ՚ի խնամս քեռն իւրոյ , ընդ որում բնա-
 կէ՞ր՝ զուրկ լինելով յամուսնական ընկերէ :
 Տուցանէին նոքա զբազում սէր և զգթածուի
 անտերունչ անձին իմոյ . հրահանգեալ մարզէ-
 ին զիս մեծաւ զգուշութեամբ , և կարգեցին
 վասն իմ զվարժապետա ամենայն ուսմանց : Սա-
 կայն զինի անցուցանելոյ իմոյ զերեսուն լուսինս
 ՚ի սուրբն Օգոստինոս , յանկարծակի սկսայ զգալ
 ՚ի սրտի իմում զատելութիւն ընկերական կե-
 նայ , և փութանակի ՚ի վհատութիւն փոխար-
 կիւ : Երբեմն ՚ի ժամս ինչ մնայի ա՛յ շարժ ար-
 ձանայեալ՝ խորհելով զծայրս հեռակայ ան-
 տառայ . կամ նստեալ բազմի առ կողմամբ
 վտակի միոյ՝ տխրութեամբ հայելով յընթացս
 ջուրց նորուն և խորհելով զզուարձալի ան-
 տառս , ընդ որս նա անցանէր . և հոգի իմ կա-
 րօտէր անապատաւոր կենայ : Սիրտ իմ գոլով
 յաղթահարեալ ՚ի ցանկութենէ տեսանելոյ ան-
 գամ մի ևս զբնիկ երկիր իմ՝ յառաւօտու
 միում մտի ՚ի սենեակ Լուպէզին՝ զգեցեալ
 զհանդերձս վայրենեայ . ՚ի միում ձեռին ի-

մեզ ունէի զնեա և զաղէղն իմ, և ՚ի միւսում
կալեալ էի զեւրոպական Տանդերձս իմ. զոր
դարձուցի առատաձեռն պաշապանի իմում, ու
առգելլով զոսս նորա հերմամբ արատաւայ ի-
մոյ: Աշտամբանս դնէի ինձ սակս ապերախտու-
թեան իմոյ. սակայն զկնի կշտամբելոյ զանձն իմ
տասցի, ո՞վ հայր իմ՝ յանդիման կայ ինձ վտանգ
մահոան ... տեսանես դու զայն ... եթէ ոչ հե-
տեւցայց անտանդական կենաց Հնդկայ:

Լոպէզ յապուշ կրթեալ զարմայմամբ՝ ջանայր
փոխել զվիտս իմ յանխոհեմ դիտաւորութի իմմէ:
Յուշ աւնէր նա զվտանգս՝ որոյ պարտ էր ինձ
հանդիպիլ, եթէ վերստին անկածէի ՚ի ձեռս
Մոսկոպողայ: Տեսանելով նորա զի դիտաւո-
րութի իմ էր հաստատուն և անյողդողդ՝ յար-
տասուս փղձկեցաւ. և սեղմելով զիս ՚ի վերնոյ
լանջայ իւրոյ ասայ՝ գնա՛ ո՞վ մեծասիրտ որ-
դիդ բնութեան. գնա՛ և վերստին վայելեա՛ ըզ-
պատուական և զառնայի ազատութիւն կենաց
քոյ, յորմէ Լոպէզ ոչ երբէք կամի զրկել
զքեզ տարազարտ: Եթէ ոչ էր իմ անցեալ
զպատանեկութիւնս, հետեիլ ունէի քեզ յանա-
պատս քոյ, ուրանօր աւանդ՝ թողեալ է իմ
զբաղըր յիշատակս ինչ. և վերստին դարձու-
ցանէի զքեզ ՚ի գիրկս անմխիթար և ապերջանիկ
ժօր քոյ: Յորժամ մնայես յանտառս քոյ, մե՛

էրբէք 'ի մտայծնա արկաներ զհինաւորից Սպանիային զայն՝ որ ընկալաւ զքեզ ասպնջականութեամբ ընդ յարկաւ հիւրընկալութեան իւրոյ . տպաւորեան 'ի մտի քում ուժգնակի զսէր և զբարի կամս առ համասեռս քոյ . և յիշեան զի առաջին փորձն՝ զոր փորձեցեր 'ի վերայ մարդկային սրտի՝ արդիւնաւորեցաւ յօգուտ նորին : Լոպէզ եզերեաց զբանս իւր շերմեռանդն աղօթիւք առ Աճն քրիստոնէից , զորոյ զպաշտօնն կամակորութիւնն ոչ կամեցայ ընդգրկել . և այսպէս մեկնեցաք մեք 'ի միմեանց խորին դառնութեամբ սրտի :

Ապերախտութիւն իմ փութամակի հանդիպեցաւ արժանալայել պատուհասի : Անփորձառութիւնն իսկոյն մոլորեցոյց զիս 'ի մէջ անտառայ : Գունդ ոմանց Մոսկոպոզայ և Սիմֆոնոպայ կալեալ ըմբռնեցին զիս ըստ կանխագուշակ բանից Լոպէզի : Տեսանելով նոցա զհանգերձս իմ և զփետուրս զետեղեալս 'ի վերայ գլխոյ իմոյ՝ իսկոյն ծանեան զիս լինել յազգէն Նատչեայ : Ասպեցին նոքա զանձն իմ , թէ պէտ և մեղմով յաղագս պատանեկութեան իմոյ : Սիմաղան՝ գլխաւոր նոցա կամեցաւ իմանալ զանուն իմ , առ որ պատասխանեցի , թէ անուն իմ կոչի ճակոսս՝ որդի Ավտայիսեայ՝ որդւոյ Մեսկովի , որ հանեալ է զգագաթնամշկս հարիւր

ըստ որդիւնց զանց Մոսկոպոզաց : Միմաղան պա-
տասխանեաց , ուլ ճակտոս՝ որդի Սվտալիստեայ՝
որդւոյ Մեսկովի , զուարճացիր բերկրութիւն .
այրեսցիս դու հրով՝ ի մեծի գեղջ մերում : Չու-
նիմ ինչ փոյթ , աղաղակեցի ես անդրէն . և սկսայ
երգել զերգ մահուան : Թէպէտ և ես կալա-
նաւոր էի նոցա՝ սակայն զարմացեալ էի ի վթ
թշնամեաց իմոց . Մոսկոպոզէն կամ Սիմիոնովն
ոյաշնակիցք և բարեկամք նոցա՝ սեպհականեն
զբերկրալի , զշատացեալ և զխանդակաթ իմն
բնութի . վարք նոցա է անկեղծ և սխրալի . դէմք
նոցա զուարթ և անտրտում . խօսին նոքա յա-
ճախ և երագագոյն . բանք նոցա են ճոխ և քաղց-
րալուր . ձերութիւնն և սո՛չ զրկէ զնոսա ի
բերկրալի զուարթութենէ նոցա : Նման հիւս-
ւուրց թռչնոց յանապատի՝ միաւորեալ խառ-
նեն նոքա զերգս ձերութիւն իւրեանց ընդ զուար-
թագին նուագս պատանեկութեան :

Կանայքն՝ որք զհետ երթային այնր գնդի՝
արտասանէին զարմանալի զգայուածս խանդակա-
թութեան և յուրանէին զփոյթեաւանդն նշանս
գթութեան վասն մատաղաւուրց հասակի իմոյ .
Հարցանէին նոքա զհանգամանս մօր իմոյ , և ըզ-
պատմութիւն անցից տղայութեան իմոյ . ցանկայ-
ին իմանալ էթէ մամուապատ օրօրոց իմ կա-
խեալ կայր ի դաւարագեղ սարփինայս մապել


D


17007

305



Ծառոց : Յանկային գիտել էթէ զուարթարանը
 հողմն տատանեալ շարժէր զիս ընդ փետրա-
 թափ թռչնոց 'ի բոյնս իւրեանց : Երբեմն կա-
 մէին իմանալ զխոկմունս սրտի իմոյ . և հարցա-
 նէին յիս էթէ արդեօք տեսեալ էր իմ յերազի
 զայժեամն մի սպիտակ , և թէ արդեօք ծառքն
 'ի ծածուկ հոլտին շարժեալ էին զիս 'ի ըս-
 կզբունս սիրոյ : Պատասխանեցի ես մեծաւ ան-
 կեղծութեամբ սրտի տիկնաց , կուսանաց և ընկերաց
 մարդկան ասելով , ունիք դուք զգեղեցկութիւն
 երջանիկ առաւօտու : Գիշեր սիրէ զձեզ որ-
 պէս շորացեալ երկիրն սիրէ զցօղն երեկոյեան :
 Մարդս յորժամ ծնանի 'ի կեանս , կախեալ
 մնայ 'ի լանջաց և 'ի շրթանց ձերոց . գիտէք
 դուք զդիւթական բանս՝ որք փարատեն զամե-
 նայն զցաւս սրտի : Մայր իմ այսպէս ասացեալ
 է ինձ : Կուսանք և մանկամարդք նմանին խոր-
 հրդաւոր ծաղկանց՝ ասէր նա՝ որք գտանին յա-
 ռանձնաւոր անտառս , և այլ ոչ ևս ունին տե-
 սանել զիս վերստին : Հաճեցեալ նոցա ք բանս
 դովեստից իմոյ , բերին վասն իմ զազգի ազգի
 պատուական ընծայս : Ետուն նոքա ինձ զընտ-
 բելագոյն մասն ընկուզի , զշաքար մապէլ ծա-
 ռոյն , զսագամիթ , (18) զպուխտ արջոյ , ըզ-
 մորթս կղբոյ , զխեցեմորթս 'ի պէտս զարդուց
 զգեստուց իմոյ , և զկանաչ լուս վասն մահճաց






Յանկարծակի լա այ գլխին Տանգ եր ձ ից Գիւն
 ըսյ խառցե կին մի քօղարկեալ ի կիսոյն եկն
 եկացառ աջի իմ

խնայ . երգէ ին և ճիծայէ ին ընդ իս . և արքայա-
 անուս փղկէ ին՝ խորհելով զլուսնոց արքայոց
 ինոց կենդանոյն :

Ի գիշերք միում . մինչ նստեալ կոյն մերձ
 ՚ի խորոյն անուս ին ընդ պատերազմային ար-
 արչապանէր գտնէ իմ՝ յանկարծակի լուսն ըլ-
 ջը շին Տանդերանց ՚ի մեջ խոսոց . և ահա ցին
 մի քարայրեաց յառ կիսմբ սին և բազմեցա-
 առ կոյնսք ինով : Անուսք Տանդէին յառ
 նոյն . և քարայրեաց արչի խորոյն կառն
 ինձ անուսէլ . գտնիցին պատեր ինկէլու թին
 պիտուսով փայլել ՚ի վերայ լննոց արին .
 պնդիցի կըսա ըստ պատշաճին . և զէ մը կարս
 յալանէր պարսկացիսն հաւանութե՝ և
 սիրոյ . որոց ըն Տեղք ընդդիմանալ ինի .
 սեպհականէր իս . զառաւել հրապարական
 ընդսա զէ ինկութեան . հայկոց անք նորս ար-
 անուսէ ին պատերեաց զպարսկութեան արտի և
 զարար տխրակնութեան մանց . և ի պատեր ՚ի
 կըս զպատեր կէտն ին մարմնոց :

Ըստիցոյց փո ինի զիտք ինի զիտք . զո-
 ղորոց մի ուսով ար անարկեաց է առ կարս-
 նա ին անուսաք . առ ՚ի փայտեւել զարհա-
 յառ ինուսառ կոյնսն ինուս նորս : Խորոց ընդ
 մեզ զարչոյ ան մարք . անկոյն զի զարար ըն-
 ինով ինուս փայլել ինի . և անարկեաց ինի



[Faint, illegible handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.]

խնայ . երգէին և ծիծաղէին ընդիս . և ապա յարտասուս փղձկէին՝ խորհելով զվտանգ այրելոյ իմոյ կենդանւոյն :

Ի գիշերի միում , մինչ նստեալ կայի մերձ ՚ի խարոյկս անտառին ընդ պատերազմողին որ պաշտպանէր զանձն իմ՝ յանկարծակի լուայ ըզշըշիւն հանդերձից ՚ի մէջ խոտոց . և ահա կին մի քօղարկեալ ըստ կիսոյն եկն և բազմեցաւ առ կողմամբ իմով : Արտասուք հոլովէին յաչս նորին . և բորբոքեալ բոցք խարուկին ետուն ինձ տեսանել զոսկեղէն պատկեր խաչելութեն Բրիտտոսի փայլիւ ՚ի վերայ լանջայ նորին . գեղեցիկ էր նա ըստ պատշաճին . և դէմք նորացուցանէր զյարակցութիւն համեստութե և սիրոյ , որոց շէր հնար ընդդիմամարտ լինիւ . սեպհականէր նա զառաւել հրապուրողական շնորհս գեղեցկութեան . հայեցուածք նորա արտասանէին զկատարեալ զգացողութիւն արտի և զքաղցր տխրականութիւն մտաց . և ժպտանք նր էր ժպտանք երկնային մարմնոց :

Համարեցայ զնա լինիւ օրերէ վերջն օրոյ . զօրիորդ մի ասեմ՝ որ առաքեալ է առ կալանաւորն անձնատուր , առ ՚ի փարատել զարհաւիրս մտայլուտ կործանման նորա : Խօսեցայ ընդ նմա դողդոջուն ձայնիւ . սակայն ո՛չ դողայի յերկիւղէ ահաւոր վիճակի իմոյ . և տարակուսեալ

վարանանաբ ասայի՝ ո՛վ օրիորդ, արժանի ես
 դու առաջին սիրոյ. և ո՛չ ես վիճակեալ վեր-
 ջին սիրոյ: Բարակսիւն սրտի միոյ՝ մերձ ՚ի յան-
 ըղգայութի փոխարկելոյ, ո՛չ կարէ ըստ արժար-
 նոյն փոխարկնել զմեզմ՝ տրոփիւնս սրտի քոյ: Ընդ է՛ր մահն միաւորեալ լիցի ընդ կենաց: Տար-
 ցես ինձ մեծապէս աշխարեւ զլինելութիւն կե-
 նաց իմոյ: Գնա՛ յինէն և տո՛ւր այլոյ ումք
 վայելել զայդ բարեբաղդութի. իցէ՛ թէ ան-
 ընդհատ գրկածութիւնք միաւորեսցեն զտարիա-
 ծու բաղդոն ընդ հոյակապ կարնոյն: Նա պա-
 տասխանեաց, ես ո՛չ եմ օրիորդ վերջին սիրոյ:
 Քլիտանեայ ե՛ս դու հաւատով: Ես ասայի
 ջնս, թէ ո՛չ եմ թողեալ զպաշտօն ոգւոյ խրճը-
 թի իմոյ: Գեղեցկատեսիլ օրիորդն շրտեալ
 դողալով, Գթամ ՚ի վերայ քո՝ ասայ օրիորդն՝
 սակս լինելոյ քո կռապաշտ սմն ապերջանիկ:
 Մայր իմ՝ արար զիս քրիստոնեայ: Անուն իմ
 կոչի Ատալա՝ դուքտր Սիմաղանայ: Տանդերձ
 ոսկեպատ ապարանջանօք, որ է հրանմանատար
 այսոցիկ պատերազմողայ. ճանապարհօրդ եմք մեք
 Ապալակուլա, ուր անօր պարտիս դու այրիւ
 հրով: Ասայեալ օրիորդին զայս բան՝ յարեալ
 ՚ի տեղւոջէ իւրմէ և ՚ի բայ գնաց սմտի:

Աստուծոյ ճակտոս հարկադրեցաւ ընդ միջեւ
 զպատմութիւն իւր: Տխրանա՛ծ յիշողութիւն պա-

տեղին զվերաւորեալ միտս նորին • աղբիւրք ար-
տասուայ սկսան հոսիլ յանտես աչայ նորա •
և ՚ի վայր թափիլ ՚ի խողոզայեալ այտից նո-
րուն , ը որում երկու աղբիւրք թագուցեալք
յաղջամղջին լանջս երկրի ՚ի յայտ գան հոսմամբ
գուցնաքեայ կաթլեայ ջրոյ՝ որք հոսին ՚ի մէջ
քարանոց :

Ո՛վ որդեակ՝ կրկնեայ անդրէն Ճակտոս՝
տեսանես թէ զխորդ տկար է սիրտ Ճակտոսի ,
թէ պէտ և մեծ է համբաւ իմաստութեան նո-
րին : Աւանդ՝ սիրելի մանուկ՝ մարդիկ թէ պէտ
և զրկեալ իցեն ՚ի տեսողութեաց , սակայն կա-
րեն գտանիլ զարտասուս յայտ իւրեանոց : Բա-
ղում աւուրք անցին • և դուստր գլխաւորին
գայր առիս յամենայն գիշերի • և խօսակցեը
ընդիս մերձ ՚ի տեղին խարուկի : Քունն մեկ-
նեալ էր յաչայ ինոց • և Ատայա բնակէր ՚ի
արտի իմում զօրէն յիշողութեան մանկական խա-
ղուց ինոց : Յեօթն և տասներորդում աւուր
ճանապարհորդութեան մերում , յայնմ ժամա-
նակի՝ յորում օրակեցիկ որդն (19) արտաքս ե-
լանէ ՚ի ջրոյ , մտաք մեք յընդարձակ մարգագե-
տինս Ալակուայ : Տեղիս այս ջրչապատեալ է
՚ի լեռանոց • որք բարձրացեալ ՚ի վեր քան զբարձ-
րութիւն իրերայ և զարդարեալ խժիւք մեկսի-
կայւոց , անկովք մագնոլիայից և լեմոնայ , նա և

կնձնի և կաղնի ծառովք՝ ամբարձնան զգլխուխա
 իւրեանց մինչև յերկինս : Գլխաւորն ազդ արար
 զժամանակն մեր անդ . և զօրքն բանակեցան առ
 ատորոտովք լերանց . զետեղեալ էին զիս յընդեր-
 կար տեղոջ , մերձ առ մի յայնոցիկ բնական
 ջրհորոց , որք յաճախ գտանին յերկրին Փլո-
 րիդայ . կապեալ էին զիս ՚ի բուն ծառոյ
 միոյ . և զօրական ոմն անհամբեր և անդադար
 զգուշանայր անձին իմում : Ո՛չ Ֆնայի անդա-
 նօր ընդերկար , յորժամ Ատալա երևեցաւ
 ընդ հոսանուտ դեղնագոյն սաթօք (20) այնո-
 ըիկ աղբեր :

Ո՛վ որսորդ՝ ասաց նա պատանի Մոսկոգող
 գին՝ էթէ կամիս պնդիւ (21) զկնի այծեմանց ՚ի
 վերայ վախից , ես ինամով զգուշայայց ան-
 ձին կալանաւորին : Զօրականն յարեաւ զուար-
 թութեամբ ՚ի տեղոջէ իւրմէ . յանձն արար զիս
 ՚ի պահպանութիւն դատեր գլխաւորի իւրում ,
 և ՚ի վայր ընթացաւ ՚ի վերայ դաշտին :

Զիւրդ զարմանալի են փոփոխականութիւնք
 մարդկայինս սրտի . ես՝ որ այսքան փափագանօք
 տենչայի յայտնել զգաղանիս սրտի իմոյ նմա՝ զոր
 սիրէի , անկեալ կայի ՚ի շիտթութեան և ՚ի խը-
 ուովութեան , և առաւել ուրախ լինէի անկա-
 նիւ յաղբիւրն ՚ի մէջ կոկորդիլոսայ , քան թէ
 գտանել զիս միայնակ ընդ Ատալային . պահպ-

պանն աննեղ վայրագին էր այնքան խռովեալ և
 շիտթեալ, որքան կաշկանդեալ գերի նորին և
 Լուսթիւնն կնքեալ էր զմուտս շրթանց մերոց
 ոգի սիրոյ բարձեալ էր ՚ի միջոյ զկարողութի
 բարբառոյ : ՚ի վերջոյ դուստր Սիւսանայ ա-
 սայ վարանմամբ՝ ո՛վ կալանաւոր՝ անգօր են շրթ-
 թայք կապանայ քոյ . մարթ է քեզ դիւրաւ
 զերձանիլ : Այս բան նորոգեայ զքաջութի սրբօ-
 տի իմոյ : Անգօր՝ աղաղակեցի ես՝ ո՛վ կին ... :
 Այլ ոչ ևս կարէի բարբառիլ : Ատալա սա-
 կաւիկ մի դադարեալ՝ կրկնեայ անդրեն զբանս
 իւր . փախիր և փրկեա՛ զքեզ . ասացեալ նորա
 զայս՝ յառաջ մատեաւ և ելոյժ զկապանս իմ :
 Կալայ ես զկապանս, և ետու զայն ՚ի ձեռս
 գեղափայլ օտարականին իմոյ, սեղմելով զքաղց-
 րիկ մատունս նորա ՚ի վերայ շրթայից իմոյ :
 Առ զայն վերստին՝ առ զայն վերստին՝ ասա-
 ցի ցնա : Մի՛ թէ բանականութիւնն լքեալ է
 զքեզ, աղաղակեայ Ատալա մեծաւ խռովութե-
 ո՛վ ապերշտանիկ պատանի՝ մոռացեալ ե՛ս ար-
 դեօք թէ պարտիս կորնչիլ բոցով հրոյ . ո՛չ
 արդեօք զմտաւ աճես թէ ես եմ դուստր մե-
 ծագօր իշխանաւորի միոյ : Ժամանակ մի գոյր՝
 ասացի ես դառնագին արտասուօք՝ Ժամանակ մի
 գոյր, յորժամ ես ևս աճեալ լինէի ՚ի մորթս
 կղբոյ, գոլով կախեալ զուսոց մօր իմոյ : Հայր

իմ և ս ունէր զվայելուչ իմն խրճիթ . և այժօ
 նորա ըմպէին զչուրս պէսպէս վտակաց . սա-
 ճայն այժմ թափառ իմ աստանօր անտուն և աս-
 տանդական : Փութով թողից լքից զաստի կեանս
 և չիք բարեկամ ինձ առ ՚ի ժողովէլ զածիւ-
 նացեալ նշխարս իմ և անպատկէլ զնոսա ՚ի
 հնչմանէ ցնդուցիկ հողմոց : Քանզի ո՛վ ինա-
 մարկէ նշխարաց ազերջանիկ օտարականի միոյ :
 Այս վերջին բանք իմ շարժեցին զսիրտ Ատա-
 լայի . և արտասուք նր կաթեցան ՚ի շուրս վը-
 տակին : Աւա՛ղ՝ կրկնեցի անդրէն ըղձակաթ սի-
 րով՝ եթէ խորհուրդք սրտի քոյ համաձայն
 լիցին խորհրդոց սրտի իմոյ , ո՛չ անպէ՛ն ա-
 զատ է անապատն ողջոյն : Ա՛չ գոյ ՚ի դալարա-
 զեղ հանդերձս անտառաց՝ փարախ մի պաշտ-
 պանութեան առ ՚ի ծածկէլ զմեզ : Արդեօք բա-
 զում իրք խնդրի՞ն սակս երջանկութե՞ որդւոյն
 խրճիթի : Ա՛հ , դու առաւել պայծառափայլ
 ես քան զառաջին զերագս սիրոյ : Ա՛վ նազելիդ
 իմ՝ ի շխեա՛ հետեիլ զնացից իմոց ՚ի մէջ անա-
 պատին : Ատալա պատասխանեաց թրթռուն իմն
 ձայնիւ՝ ո՛վ պատանի բարեկամ իմ , ուսեալ
 ես դու զբարբառ սպիտակ մարդոց : Դիւրին
 իմն է պատրել զմիտս հնդկի միոյ : Չի՞նչ՝
 կոչե՞ս զիս պատանի բարեկամ քոյ՝ ասացի բերկ-
 րութեամբ սրտի : Աւա՛ղ՝ եթէ թշուառական

տմն գերի ... Բարևոք է՝ պատասխանեաց Ատալա՝
 կողացուցանելով զչքնաղաղէմ կերպարան իւր
 առիս ... ո՛վ թշուառական գերույս՝ ասացի ես՝
 ո՛վ իմ Ատալա, մատո՞ ինձ զքաղցը համբոյր մի
 եբբե առ հաւատչեայ փոխադարձ սիրոյ մերոյ։
 Լուաւ նա ձայնի աղաչանայ իմոյ։ Արպէս մա-
 տաղ այժեամն երեւի կախեալ ՚ի ծաղկանց դա-
 լարագեղ ծառոյ, և խածեալ զանոյշ ծաղկունս
 ՚ի վր ժայռից լերանց, այնպէս և ես կախեալ
 կայի ՚ի շրթանց հոգեկորզ սիրելոյն իմոյ։

Ո՛վ սիրեցեալ որդի իմ, ընդէ՛ր տըրտ-
 մութիւնն ձեռն ընդ ձեռն գնայցէ ընդ ուրա-
 խութիւն։ Ո՛վ կարէր երբեք կարծել, զի յո՛-
 ըում ժամու Ատալա ետ ինձ զառայչին առ հա-
 ւատչեայն սիրոյ, ՚ի նմին ժամու միտեաց նա ըզ-
 դաշոյն ՚ի լանջս իմ սաստկագին։ Չի՛նչ էր
 զարմանք վիրաւորեալ սրտի քոյ՝ ո՛վ Ճակտոս՝
 յորժամ օրիորդն անապատին արտասանեաց զայս
 քան. սիրելի պատանի, անզգոյշ իմն եղանակաւ
 կատարեցի զխնդրուած քոյ ... ո՛ւր արդեօք այս
 աճեցուն կիրքն առաջնորդեսցէ մեզ. կրօն իմ
 է արգել իմն անպարտելի ... ո՛վ մայր իմ, զի՛նչ
 է արարեալ քո։ Դադարեցաւ նա յան-
 կարծակի. և մահակիր խորհուրդն այն կիսատ
 արտասանեալ՝ Թօշեցաւ ՚ի վերայ շրթանց նր։
 Բանք նորա ձգեցին զիս ՚ի խորս յուսահատութիւն։

տրամուծիւն իմ՝ սաստիկ էր առ համեմատութիւն
 գուարթութեան յուսադրութեանց իմոց : Ա՛՛՛՛
 աղաղակեցի ես՝ ունիս դու գտանել զիս անագորոյն
 իբրև զքեզ . տեսցես զիս ՚ի կիզողական անօ-
 թին . (22) նկատեսցես զխոշտանգանս մարմնոց
 իմոց և բերկրեսցիս ընդ աղաղակս ցաւոց իմոց :
 Աւա՛ղ , տարաբաղդիկ կուագաչտ՝ ասաց Ատա-
 լա՛՛ կալեալ զձեռանէ իմմէ , կարեկից եմ ընդ
 քեզ ճշմարտիւ և անկեղծութեամբ : Ապա ու-
 բեմն սիրտ իմ՝ ողջոյն լուծցի՛ր յարտատուս : Ըն-
 գէ՛ր ո՛չ կարեմ փախչիլ ընդ քեզ : Տաւա-
 պեալ էր արգանդ մօր քոյ Ատալա՛ . ընդէ՛ր ո՛չ
 ձգեաց նա զիս ՚ի մէջ աղբեր իբրև կերակուր կո-
 կորդիլոսաց : Մինչ խօսէր Ատալա , արեգակն
 յարեմուտս մերձենայր և լսելի լինէր գոչիւն
 աղաղակի կոկորդիլոսաց : Ատալա ասաց , ՚ի բայ
 գնասցուք յայսմիկ խաւարային քարանձաւէ . և
 ես շտապով ածի զդուստրն Միմաղանայ առ ըս-
 տորոտս լերանց , որ ձեացուցանէր զձոց դալա-
 րութեան՝ մերձենալով ՚ի սարաւանդս նոցա որ
 ՚ի մէջ մարգագետնոց : Ամենայն ինչ էր պայ-
 ծառ , վսեմ և տխրամած ՚ի մէջ ընդարձակ
 անապատին : Արագիլն ճչէր ՚ի վերայ բունոց
 իւրոց . անտառն կրկնէր զարձագանգս նոյնաձայն
 նուագայն լորամարգեաց . երկրորդէր զսուլուքն
 թութակաց , զբառանջիւն բոբողնաց և զխրխն-

Չիւն Սիւննորեան մատակ երիւարաց :

Ճեմուճն մեր էր գրեթէ անձայն և լռին :
 Գնայի ես առ կողմամբ Ատալայի . և նա կա-
 լեալ ունէր զկապանս իմ , զոր ստիպեցի նմա
 առնուլ 'ի ձեռս իւր : Երբեճն զարտասուս
 հոսէաք . երբեճն զժպտանս խնդրէաք . երբեճն
 ուղղէաք զդէմս մեր յերկինս . երբեճն յառէ-
 աք զաչս մեր յերկիր . երբեճն զականջս մեր ուղ-
 դէաք եղանակաց թռչնոց , կամ ցուցանէաք մա-
 տամբ զմուտս արեգական , և կամ սեղմէաք ըզ-
 ձեռս իրերաց . փոփոխակի խռովեալ և հան-
 դարտեալ շնչմամբ արտասանէաք զանուանս
 Ատալայի և Ճակտոսի : Ո՛ր առաջին ձեմեցճանս
 սիրոյ՝ զոր արարի յանապատին ընդ Ատալայի :
 Չիարդ սաստիկ տպաւորութիւն արարեր 'ի միտս
 Ճակտոսի . թէպէտ և այսքան բազմապատիկ
 ամբ ձախողութեանց անցեալ են զգլխով իմով ,
 սակայն տակաւին կարես թափանցել 'ի ժանգա-
 հարեալ սիրտ Ճակտոսի :

Չիարդ անհասանելի է միտք մարդոց , յորժամ
 վշտանայ խոշտանգանօք սիրոյ . թողեալ էր իմ
 զընկերակցութիւն առատաձեռն Լոպեզի . և
 գիմագրաւ հանդիսանալով՝ հանդիպեալ էի ա-
 մենայն վտանգաց առ 'ի վերաստանալ զցանկա-
 լին իմ զազատութիւն : 'Ի միում վայրկենի հայ-
 եցուածք կնոջ միոյ յեղյեղեալ փոփոխեցին զիմ

յառ-աջադրութիւն, վեր 'ի վայր շրջեցին զդի-
տաւորութիւն իմ, և փոխեցին զխորհուրդս
մտայ իմոյ : Մտայեալ իմ զԵրկիր, զմայր և
զխորձիթ իմ միանգամայն և զսարսափելի մահն
զոր պատրաստեալ էին վն իմ՝ անփոյթ էի զամ
իւրայ՝ որք ոչ էին Ատալա : Չուրկ լինելով 'ի
Տնարից վերաստանալոյ զկորուսեալ բանականութի
իմ՝ յանկարծակի անկայ 'ի վիճակ մանկութեան.
և ոչ միայն ոչ կարէի գործել և աշխատիլ վն
իմ, այլ և գրեթէ կարօտէի օգնականութեան
այլոյ ուրաք, առ 'ի լնամ ունիլ 'ի վերայ նլն-
ջելոյ և կելակրելոյ իմոյ :

Սին իւրի զինի թախառելոյ մեր 'ի մարգար-
գեանս անապատին, ընդունայն Ատալա էարկ
զինչն յոտս իմ և երդմնեցուցանէր զիս Տնա-
րէլ զփախուտս իմ : Երդուայ ես դառնալ
անդրէն 'ի բանակն միայնակ, եթէ նա ոչ կա-
մեր կապել զիս վերստին 'ի բուն ծառոյ իմոյ :
Հարկադրեցաւ նա հաւանիլ բանից իմոյ՝ յու-
սալով 'ի շրջել զմիտս իմ 'ի դիտաւորութենէ
իմմէ յայլում նուագի : Չկնի առուրն ամբողջ
որ հաստատեաց զվիճակ կենաց իմոյ՝ գունդ զօ-
րաց մերոց դադարեալ կային 'ի հովտի միում
մերձ 'ի Առակովիղայն 'ի մայրաքաղաքն Սիմինո-
ղաւոց : Հնդիկքս այսոքիկ ընդ Մոսկոպողայ
դաշնակցաց իւրեանց ընկերութիւնն զիշխա-

Եւ թիւն թմբոյ և ամբարտակայ գետափանց :
 Օրիորդն երկրին արմաւենեայ եկն յայցելութի
 նն՝ ՚ի մէջ գիշերոյ : Էստ զիս յնդարձակ ան-
 տառ մի սարոյից . և նորգեայ զաղաչանս իւր
 առ ՚ի հաւանեցուցանել զիս ՚ի վախճիլ : Ա-
 ռանց զբառ մի պատասխանելոյ , ստիպեցի վնաս
 թափառիլ քիս յանտառին : Գիշերն էր պարզ
 և պայծառ . ոգին երկնից շարժէր զկապուտակ
 գետս իւր՝ խնկաւորեալ յանուշահոտութիւնս
 սարոյից . օդն հոտաւետեալ էր քաղցր անու-
 շահոտութեամբ սաթի , (23) զոր բուրեխն կո-
 կորիլ լոսք բնակեալք ընդ թամարինդ ծառով
 գետոց . լուսինն վայլէր ՚ի վերայ ամբիժ կա-
 պուտակին հաստատութեան . և նշողէր զարձա-
 թափայլ լոյս իւր ՚ի շիրթեալ ծայրս անտա-
 րայ . ոչինչ ձայն լսելի ընէր անդանօր , բայց
 միայն հեռաւոր իմն ձայն ներդաշնակուէ հնչեալ
 ՚ի մայրաւսխիտ թառառ անտառայ : Թուէր
 թէ հոգին միայնակութեան մեղմով հառաչէր
 յայտուիկ ընդարձակ վայրս անապատի :

Տեսաք մեք ՚ի մէջ ծառոց զպատանի մի՝
 որ կալեալ ունէր ՚ի ձեռին իւրում զջահ մի
 վառեալ : Երևէր նա զօրէն ոգւոյ գարնան
 անյանելով ընդ դաշտն անտառախիտ առ ՚ի վե-
 րանորոգել զերեսս բնութի : Նա էր պատանի
 սիրահար ոմն , որ երթայր իմանալ զքաղդ իւր ՚ի

Խրճթի սիրելոյն իւրոյ : Եթէ կոյսն շիջուցանեւր զՋահն լուցեալ, ընկալնոյր զնա իբրև զամուսին իւր . եթէ քօլ արկանէր 'ի վր երեսայ իւրոյ առանց շիջուցանելոյ զայն, մերժէր նա զուխտսնր : Պատանին թափառելով 'ի խաւարային ստուերի՝ երգէր զայսոսիկ բանս :

Կանխեցից նախ քան զառաւօտն 'ի վր լերինս առ 'ի լմբունել զառանձնակեաց տաւրակն իմ 'ի վերայ ստեղան միոյ յանտառին :

Աչք Միլայի են նման աչաց սպիտակ աքիսի . Տիւսք վարսից նորա շարժին իբրև զդաշտ բրնձոյ . բերան նորա է պատիճ կարմիր՝ ընդելուզեալ մարգարտովք . լանջք նորա է նման երկուց ամբիժ ուլուց ծնելոյ 'ի միում աւօր և 'ի մօրէ միոջէ :

Կապեցի շուրջ զպարանոցաւ նորա զփունջ մի 'յախճապակեաց' (24) յորում գոն երեք կարմիր հատք առ 'ի յայտ առնել զսէր իմ . երեք ծիրանագոյն հատք առ 'ի յայտ առնել զերկիւղ իմ . և երեք կապոյտ հատք առ 'ի յայտ առնել զյոյս իմ :

Իցէ՞ թէ Միլայ շիջուցէ զայս ջահն . Իցէ՞

Թէ շրթունք նորա արկցեն զյանկասիրական ըստուեր իմն ՚ի վր նորա : Բեղմնաւոր արարից ես զլանջս նորա . յոյս ազգին մերոյ յարեացի ՚ի լանջս նորա . և ես ծխեցից զեղէգն խաղաղուէն (25) ՚ի վերայ օրօրոցի որդւոյ իմոյ :

Ո՛հ, Թող ինձ կանխել նախ քան զառաւօտն ՚ի վերայ լերին, առ ՚ի ըմբռնել զառանձնակեաց տատրակն իմ ՚ի վերայ ստեղան միոյ յանտառին :

Այսպէս երգեաց պատանին : Բանք նորա յարուցին զմերիկ իմն ՚ի սրտի իմում . և պատճառեցին զչառագնութիւնս յայտս Ատալայի . և ձեռք մեր երկոցունց սկսան դողալ : Սակայն մտախորհութիւնք մեր վաղվաղակի խռովեցան ՚ի տեսարանէ միջէ, որ առաւել վտանգաւոր էր քան զառաջինն : Անցաք մեք առ գերեզմանաւ մանկան միոյ՝ որ էր իբրև սահման ինչ երկուց ազգաց ՚ի մէջ անազատի : Չեստեղեալ կայր այն առ կողմամբ ընդարձակ հրապարակի միոյ ըստ սովորութեան, զի մանկամարդ կուսանք ի գնալն իւրեանց առ աղբիւրն՝ շնչեացեն և ընկալցին ՚ի լանջս իւրեանց զհոգի անմեղ մանկանն, և վերադարձուսցեն զայն ազգին : ՚ի միջի սոցա կային մանկամարդ հարսունք՝ որք ցան-

կալով բերկրանայ մայրութեան՝ բանային զ շէր-
թունս իւրեանց եռանդեամբ և շանային յին-
քեանս ձգել զհոգի մանկանս, զոր կարծէին
նորա սաւառնել շուրջ զլիթերակայ ծաղկամբք:
Ի վերջոյ եկն մայր մանկանս. և եղ ՚ի վերայ
գերեզմանի զփունջ մի ցորենոյ հնդկաց և շու-
շանայ: Սրսկեաց նա զերկիրն կաթամբ իւրով.
և բազմեալ ՚ի վերայ խոնաւ խոտոյ՝ յարտասուած
հարաւ և սկսաւ անել ցմեռեալ մանուկն իւր
այսպէս:

Ընդէ՛ր լիցի ինձ արտասուել ՚ի վերայ հո-
ղակերտ օրօրոցի քո, ո՛վ անդրանիկ իմ: Յոր-
ժամ մատաղ թռչունն թեւկոխէ նորափետուր
թեւովք իւրովք առ ՚ի գտանել զկերակուր յա-
նապատին, գտանէ նա զբազում թունաւոր և
զգառնահամ հատա: Գրեթէ ոչ երբէք գիտա-
ցեր դու զարտասուած տրամուծէ. և թունաւոր
շունջ մարդկան ոչ երբէք ապականեաց զսիրտ
քո: Աարդն հատեալ ՚ի կոկննի իւրում՝ թօշ-
նի պարփակեալ յանուշահոտութիւնս իւր ող-
ջոյն, ըստ որում մանուկ իմ թառամեցաք
դու հանդերձ ամենայն անմեղութեամբ քով:
Երանի՛ մանկանս այնմի՛ ուր մեռանի յօրսրո-
ցի իւրում: Նա միայն գիտէր զժպտանս և ըզ-
վիշտս մայրական սիրոյ:

Աւարտեալ ուղեկորոյս մօլն զբանս իւր՝

ցաւեցաք 'ի սիրտս մեր սաստկացէս , և մեծա-
 պէս տրտմեցաք ընդ այսոսիկ տեսալանս մայ-
 րական կաթոգնութեան և սիրոյ պատանեկուէ :
 որ երևէր նեղել զմեզ տագնապաւ յաղջամըղ-
 ջին գիշերի : Առաջնորդեցի ես Ատալայի յան-
 տառ մի մայառախիտ . և ասացի նմա զայնպիսի
 բանս՝ զոր ցրտացեալ շրթունք իմ ընդունայն
 ջանասցին պատմել : Սիրելի որդեակ իմ՝ հա-
 րաւային հողմք կորուսանեն զսաստկութիւն ջեր-
 մութեան իւրեանց զկնի անցանելոյ 'ի սահմանս
 ցրտային գօտւոյ . և յիշատակութիւն սիրահա-
 րութեան ձերունի առն միոյ նմանի ճառագայ-
 թից արեգական յարեմուտս հակելոյ , յորժամ
 շողշողուն գունտն գիշերոյ յինքն ձգէ զաղօտ
 նշոյլս նորա . և այսպէս լռութիւն և տխրուի
 տարածեալ սիրուն 'ի վերայ խրճթաց վայրա-
 գասուն մարդկան :

Ոչինչ բայց միայն հրաշք իմն կարէր փրո-
 կել զԱտալա 'ի հրապուրողական խանդաղա-
 տանայ սիրոյ , և 'ի համոզական ձայնէ բնուէ .
 և հրաշքն այն ասն յայտնապէս կատարեցաւ :
 'Իուստրն Սիմաղանայ կարդայ զԱճն քրիստոնէ-
 ից . անզուգական կերպարան նորա գետնամածեալ
 'ի վերայ երկրի՝ խոնարհամիտ ձեռով պաղատա-
 նայ առաքեաց նա յերկինս զուղերձս աղօթից
 ջերմեռանդուէ : Ո՛վ Ռեմի , զինչպիսի վսեմ

[սոկմամբք խորհէի յայնժամ զկրօնէ միջէ՝
 որ 'ի մէջ անապատին և 'ի մէջ կարեաց մարդ-
 կային կենաց, հեղեալ թափէ զանթուելի սփո-
 փանս մխիթարութեան 'ի վերայ ապերջանիկ է-
 ակի միոյ. զկրօն մի ասեմ՝ որ կարէ ըստ հա-
 ճոյից սանձել զսաստկագոյն կիրս մարդկան, և
 յորժամ ծածկութիւն անտառաց, բացակայուի
 մարդոց, և խորհուրդ ստուերայ մթուէ երևին
 համայն առ 'ի մղել զկիրս զայն թելադրութիւն :
 Ջիւրդ երկնային կերպարանօք փայլէր նա՝ վայ-
 րագն հանձարեղ՝ անմեղն Ատալա, յորժամ 'ի
 գուճս խոնարհեալ առաջի անկեալ սարոյի մի-
 ոյ՝ որ երևէր իբրև զպատարագ ինչ առ ստո-
 բոտով սեղանոյն՝ մատուցանէր Տեառն կենաց չ
 թանձրախիտ ծառովք զկարի շերմեանդն ա-
 ղօթս վասն դարձման կուսազատ սիրականին
 իւրոյ : Աչք նր դարձան դէպ առ լուսայրն-
 ցուղ լապտերն գիշերոյ. այտք նորա առողեալ
 լինելով արտասուօք սիրոյ և աճպաշտութեան՝
 երևէր նա իբրև զհոգի անմահական : Թուի
 թէ բազմիցս տեսեալ է իմ զնա վերանալ խոյ-
 անալ յերկինս. Թուի թէ բազմիցս տեսեալ է
 իմ զնա իջանել 'ի կապուտակ երկնից, և լուեալ
 եմ 'ի մէջ ստեղանց՝ զձայն շնչմանց այնո
 ցիկ եթերական էակաց, զորս մեծագօր հոգին
 առաքէ առ մաքրակենցալ ճգնաորս քարանց,

յորժամ կառի նա վերստին կոչել զնոսա ՚ի գիրկս իւր : Չգողանի հարկանէր անձն իմ , քանցի երկնչէի զի Ատալա ունի զսակաւ ժամանակ կենցաղաւարելոյ յայսմիկ մահացաւ աշխարհի :

Հեկեկայր նա մեծագէս . այնպէս սաստիկ արտասուէր և այնպէս վշտացեալ դիմօք էրէր , մինչ զի գրեթէ տեսանէի զիս պարտաւորեալ ՚ի լսել բա՛հից նորա և թողուլ զնա ՚ի բաց , յորժամ աղաղակք մահուան հնչէին ՚ի մեջ անտառաց և չորեքին զինաւորեալ զօրականք էկեալ ընթռնեցին զիս վաղվաղակի : Իմացեալ էին նոքա զիսխոստ մեր . և առաջ նորդ նոցա յլեալ էր զնոսա առ ՚ի ունիւ ըզմեզ ՚ի ճանապարհի :

Ատալա՛ որ էրէկը փոխարկեալ ՚ի կերպարանս հրեշտակի՝ հայեցումք և գնացք նորա լինելով ծանր և փառայի՝ հայեցաւ ՚ի նոսա արհամարհական ակնարկութեամբ . և առանց զբառ մի խօսելոյ , աճապարեալ գնաց վաղվաղակի առ հայր իւր :

Անլուր էր հայր նորա ամենայն աղաչանաց նորին . յաւել նա զթիւս պահագանաց իմոյ . կըրկնապատկեաց զշղթայս կապանաց իմոյ և ոչ թոյլ տայր սիրականին իմոյ գալ առ իս բնակին : Հինգ տուրք անցին ՚ի միջոյ , և ահա՛

տեսաք մեք զԱպալակուլա լինիլ մերձ առ գետն
 Կատաչի : Իսկ և իսկ պսակեալ զարդարեցին
 զիս Տիւուածուլ ծաղկանց . գունաւորեցին զե-
 րեսս իմ կապուտակ և կարմրափայլ երանգօք .
 արկին յունչս և յականջս իմ զհասոս մարգար-
 տի , և եդին ՚ի ձեռս իմ զճիճիկով (26) մի
 քաղցրաձայն : Այսպէս գոլով իմ զարդարեալ
 սակս ողջակիզի՝ մտի ես յԱպալակուլա . և ե-
 կին զկնի իմ անհամար բազմութիւն մարդկան՝
 որք ծափս հարկանելով աղաղակ բառնային ըզ-
 ձանապարհայն : Յուցի զանձն իմ իբրև ան-
 զգայեալ , յորժամ լսելի եղև ձայն սատափի մի-
 ոյ . և Միկով՝ երէցն բովանդակ ազգին հրա-
 մայեաց գումարել զժողովն հասարակայ : Գի-
 տես որդեակ իմ , թէ զինչպիսի սարսափելի
 տանջանս և խոշտանգանս պատճառեն վայրա-
 գաստմէն թշուառական կալանաւորաց պատե-
 րապմի իւրեանց : Միտոնարք քրիստոնէից ՚ի վը-
 տանգ կենաց իւրեանց մեծաւ եռանդեամբ և
 անխոնջ տքնութեամբ յորդորեալ են զպէս-
 պէս ազգս ՚ի կիր արկանել զմեզմ գերութիւն
 փոխանակ տանջանաց մահուան : Մոսկոզողգքն
 տակաւին ոչ էին հաւանեալ զայն մարդասիրա-
 կան սուլորութիւն . սակայն բազումք ՚ի նոցանէ
 կամէին ընդգրկել զայն սուլորութիւն . և յս-
 զագս վճարելոյ զայն խնդիր կենդարդաւոր :

Միկոյն գումարեալ էր զժողով երիցանց : Նք
ածին զիս 'ի դասլիճ ատենաբանութե՛ կառու-
յեալ 'ի մեկուսի տեղւոջ մերձ առ Ապալա-
կուլա : Երեք կարգք սեանց կայուցանէին զգե-
ղեցկայարմար և զամարուեստ ճարտարագետութե
շինուածոյ . յօրինեալ էին նոքա 'ի նոճեաց և
էին բարւոք դրօշեալ և յղկեալ . սիւնքն առ-
աւելուին ձևով և բարձրութեամբ և նուազե-
ին թուով , այն ինչ մերձենայաք առ կեդրոն
տեղւոյն . որ հաստատեալ կայր 'ի վերայ սեան
միոյ միայնոյ , յորոյ գագաթանէ երկայն շերտք
կեղևոյ ծառոյ կորայեալ 'ի վերայ միւս սեանց՝
ծածկէին զբոլորչի շինուածն իբրև զթափան-
ցիկ հովասար :

Անգամք ժողովոյն գումարեցան : Յիսուն մե-
ծարոյ ձերունիք զգեցեալ զչքեղ վերարկոս
կղբոյ՝ բազմեալ կային 'ի վերայ աստիճանաց
սանդղոյ հանդէպ դրան խորանին . և մեծապա-
տիւ իշխանն կանգնեալ կայր 'ի միջի նոցա՝
կալեալ 'ի ձեռին իւրում զեղէգն խաղաղութե՛,
նկարեալ ըստ կիսոյն Երանգա պատերազմի :
Յաջևէ կողմնէ երիցանց ժողովոյն նստեալ կային
յիսուն բամբիչք՝ զգեցեալ զլոյժ հանդերձս յօ-
րինեալս 'ի փափկիկ փետրոյ կարագոյ : Առաջ-
նորդք զօրսկանաց ունելով զուսեր մի 'ի ձեռա
իւրեանց և զփետուրա 'ի գլուխ իւրեանց , լանջք

և դաստակէ ձեռաց նոցա գոլով մածուցեալ արեւմբ, նստեալ կային ՚ի ձախմէ կողմսնէ: Առատորոտով սեանն կեդրոնին բորբոքեալ վառէք Տուրն ժողովոյն: Առաջին ձեռնածուն (27) սպասահարկեալ յութից պճնազգեստ արանց, ունելով զայտուցեալ բու մի ՚ի վերայ գլխոյ իւրոյ՝ էարկ զխէժ ինչ ՚ի մէջ բորբոքեալ Տրոյն. և նուիրեաց զգոհ արեգական: Երեկփին կարգք երիցանց, բամբջայ և զինուորաց, գոլորչիք խնկարկութեց և ողջակէզն ծխեալ Տանայն ընծայէին ժողովոյն վայրագաց զահառոց և զփառացի իմն տեսարան:

Կանգնեալ կայի ես ՚ի մէջ կեդրոնին ծանրաբեռնեալ շղթայիւք: Նուիրումն ողջակիցն գոլով աւարտեալ Միկոնն պարզապէս առաջի արար զՏանգամանս և զառարկայ ժողովոյն, և էարկ ՚ի սենեակն զկապուտակ փողպատ մի իբրև զնշան առարկութեանց իւրոց: Ապա յարուցեալ երէց մի ՚ի ցեղէն արծուոյ ասաց այսպէս: Հայրագատիւ և մեծարոյ Միկոնն, երէցք, բամբիչք և զինուորք ցեղիցն արծուոյ, կղբոյ, օձի և կրիայի. մի փոփոխէք զսովորութիւնս նախահարց մերոց, այրեցէք զկարմաւորն ձեր: Ոչինչ պատճառ. նուազեցուցէ՛ զքաջութիւն սրտի մերոյ: Արք սպեռակէք առաջի արարին զայն առաջարկութիւն:

վասնորոյ և լինելոյ է այն վտանգաւոր . ունի
 ձեզ կարմիր փողպատ մի իբրև առհաւատչեայ
 քանից իմոյ : Եւ այսպէս էարկ նա զփողպատն
 'ի մէջ դահլճին :

Բամբիչ մի յարուցեալ ասաց այսպէս :

Հայրդ տոհմին արծուոյ , սեպհականես դու
 զթափանցիկ սրամտութիւն աղուիսու , և ըզ-
 դանդաղկոտ խոհականութիւն կրիայի : Զօրա-
 ցուցեալ պնդեցից ես զհանգոյցս բարեկամութե
 'ի միջի մեր , և մեք երկոքեանս տնկեսցուք
 զծառն խաղաղութեան : Այլ սակայն 'ի բնոյ
 բարձրութե 'ի սովորութեանց նախահարց մերոյ
 զամենայն ինչ , որ գարշելի է մարդասիրութե
 և բանականութեան : Պահեսցուք զգերիս առ
 'ի հերկել և մշակել զգաշտս մեր , և միայլ
 ևս թոյլ տայուք զի վիշտք և աղաղակք կալա-
 նաւորաց խուլկեսցեն զերեսայս յարգանդս մարց
 իւրեանց : Որպէս մըրկայոյզ ծովն յարուցանե
 զալէ կոծեալ կոհակս իւր , կամ թառամեալ
 տերեքն յաշնանային եղանակի տարութերն և պը-
 տոյտքին 'ի հողմոյ , կամ յորժամ եղեգունքն
 'ի մէջ գետոյն Մեսսեսսիպեայ խոնարհին և
 յանկարծակի յառնեն վերստին 'ի յորդահոս
 կոհակաց , կամ յորժամ երամ սիրատարի եղ-
 ջերուաց գոռան յառանձնաւոր անտառս լռու-
 թեան , նոյնպէս էր և աղաղակ ձայնի գումար

ընկոյն յայնմիկ ժողովի : Երէքք, զինուորք և
 բամբիչք համայն խօսեին 'ի միասին : Կարծիք
 հակառակք երեւցան յամենայն կողմանց, և ոչ
 ոք կարէր գալ յեզրակայութիւն ինչ հաւանա-
 կան : ժողովն մերձ էր վերջանալ : Հուսկ ա-
 մենայնի զօրացաւ կողմն նախնի սովորութեան,
 և առաջի արարին 'ի ժողովի առ 'ի այրել զիս
 կենդանւոյն սովորական տանջանօք : Սակայն պա-
 րագայք ինչ գէպ եղէն առ 'ի յապարէլ զպա-
 տուհաս անձին իմոյ : Տօնախմբութիւն մեռե-
 լոյ, կամ խրախճան ոգւոյ (28) ժամանեաց
 յայնմ ժամանակի, և օրէնք երկրին արգելուին
 սպանանել զկալանաւոր մի յայնոսիկ աւուրա
 նուիրեալս դիցանուէր պաշտամանց : Նք եղին
 զիս լէ զգուշութեալ աշալուրջ պահապանի միոյ,
 և երէքքն անտարակոյս պահեալ էին 'ի թագս-
 տեան պղուտոր Սիմաղանայ, քանզի այլ ոչ ևս
 կարէի տեսանել զկերպարան նորա :

Յայնմիկ ժամանակի ազգք անհամարք գային
 գունդագունդ յամ կողմանց 'ի հեռաւոր տե-
 ղեաց, առ 'ի բաժանորդ լինիլ խրախճանական
 հանդիսի ոգւոյ : Երկարաձիգ խրճիթ մի կա-
 ուուցեալ կայր յառանձնաւոր մասին անապա-
 տին : 'ի պայմանադրեալ աւուր բնակիչք իւրա-
 քանչիւր խրճիթի հանէին արտաքս 'ի գերեզմա-
 նաց իւրեանց զնշխարս նախահարց իւրեանց :

այնոքիկ դիպանուէր նշխարքն մեռելոյ դասաւո-
րեալ կային 'ի մէջ գերդաստանաց . և կախեալ
կային 'ի պարսպաց հասարակաց սրահին նախա-
հարց : Ընտրեալ էին նք սակա այնր հանդիսի
զօր մի մրրկայոյզ , յորժամ սաստիկ հնչումն
հողմոյ լսելի լինէր յանտառի , և աղմկալից ա-
ղաղակք կարկաշատ ջրոյ առաւելուին զահաւոր
արհաւիրս սոսկալի հանդիսադրութի : Հինա-
ւուրց արք երկրին ժողովեալ անդանօր՝ երդնու-
ին յոսկերս հանգուցեալ ծնողաց իւրեանց , առ
'ի ունիլ զխաղաղութիւն և զբարեկամութիւն .
և 'ի վերայ նոցա կնքէին զուխտս դաշնակցուէ
և վաճառականութեան :

Սկան նոքա զխաղաղութիւնս գերեզմանա-
կան , զխաղս գնտակի , (29) ձիւնթայից և
այլոյ զբօսանաց : Երկու մանկամարդ օրիորդք
ջանային հանել զուռենի մի 'ի ձեռաց իրերաց :
Զուարթագոյն կոկոնք 'ի վերայ ձիւնափայլ լան-
ջաց նոցա հանդիպէին միմեանց . շրթունք նոցա
միաւորէին ընդ միմեանս . մատունք նոցա սահե-
ին 'ի վերայ ոստոյն՝ զոր ամբառնային 'ի գլուխս
իւրեանց . գեղեցկատեսիլ ոտք նոցա ոլորեալ
թեքէին . խոնարհեալ նոցա զգլուխս իւրեանց՝
միաւորէին զլոյծ գէսս իւրեանց . շառագուն-

նեալ * երեսօք արկանէին նոքա զերկիւղալից
 հայեցուածս 'ի վերայ մարց իւրեանց . և անեալ
 լինէին 'ի տեղիս իւրեանց ձայնիւ մեծի ծափա-
 հարութեան և գովութեան : Չեռնածուն կար-
 դայր զՄիղաբոն՝ զհոգին ջրոց . խօսէր նա զա-
 ըննայեղց պատերազմէն , որ եղև ընդ մեջ մե-
 ծի նսուպաստակին և (30) կիճիմանիտոնի՝
 շածոյն չարեաց : Պատմէր նա զառաջին մարդոց
 և զգեղեցիկ Աթահենսիկայ՝ զառաջին կնոջէն .
 որք վտարեալ աքսորեցան 'ի դրախտէ սակս
 պատուիրանազանցութե իւրեանց : Պատմէր թէ
 զիարդ հող երկրի տոգորեցաւ հեղմամբ եղբայ-
 րական արեան . և թէ զիարդ ապիրատ Չոսկի-
 կայն եբարձ զկեանս բարեպաշտին հասույիտ-
 սարոնի : Ի կարագրէր զջրհեղէնը համատարած՝
 որ կալաւ զերկիր հրամանաւ մեծի հոգւոյն .
 Մասսովն գոլով փրկեալ միայնակ 'ի կործան-
 մանէ ջուրցն տախտակամած կանովայիւ իւրով
 առաքեաց զագուան առ 'ի որոնել զերեսս երկ-
 րի . և Ենդաւ 'ի ձեռն քաղցր նուագերգութեց
 առն իւրոյ անալ յերկրէն հոգեղէն զուարթնոց :
 Չկնի աւարտման խաղարկութեանց և նուագ-
 երգութեանց , պատրաստեցան նոքա կանգնել

* Հառագնութիւն դիմաց պարզապէս երևի
 ւերեսս մանկամարդ վայրագաւ :

զյաւերժական գերեզման վասն նախահարց իւրեանց : Յեզերս գետոյն կատայուտչեայ կանգնեալ կայր վաղեմի թզենի մի դիցանուէր . զոր ազգք երկրին պաշտէին ջերմեռանդութեամբ և կուսանք սովոր էին լուանալ զհանդերձս իւրեանց յօրինեալ ՚ի կեղևոց ծառոց ՚ի մէջ ջուրց գետոյն . և բանային զնոսա հնչմանց հողմոց ՚ի վերայ ստեղանց վաղեմի ծառոյն . անդանօր փորեցին նոքա զգերեզման մի հոյակապ : Ելին նոքա ամենեքեան ՚ի տաղաւարէ անտի՝ երգելով զսգաւոր երգս մեռելոց , և իւրաքանչիւր գերդաստան տանելով զդիցանուէր նշխարս ազգականաց իւրեանց . և ոչ այսչափ միայն՝ այլ և մանկուք զկնի նոցա երթային՝ կորացեալ լինելով ընդ ծանրութեամբ անկենդան մարմնոց ծընողաց իւրեանց . մեծաշուք հանդիսաւորքն ժամանեցին ՚ի գերեզմանն , ուրանօր ամփոփեալ պահպանեցին զպատուական մարմինս սիրելեաց իւրեանց . և անկենդան գերդաստանքն այնօքիկ բաժանեալ լինէին ՚ի միմեանց մորթովք կղբոց և արջուց : Սգաւոր շեղջակոյտն ամբարձաւ ՚ի վերայ գերեզմանին՝ անկեալ գոլով ՚ի վերայ նորա ծառն արտասուաց և քնոյ :

Սիրելի մանուկ , ո՛րքան մարդիկ արժանի են գթութեան . Հնդիկքս այսօքիկ՝ որոց սովորութիւնքն են այսպէս ազդողական , կանայքս այսօք

քիկ՝ որք զայսքան կարեկցութիւնս ցուցեալ
 էին վասն ձախողութեանց և վշտաց իմոց, այժմ
 մեծաձայն աղաղակէին առ ՚ի մատնել զիս ՚ի
 ջարջարանս մահու. և ոչ այսչափ միայն՝ այլ
 և ազգքն ողջոյն յապաղէին անդամօր առ ՚ի
 տեսանել զտանջանս անմեղ պատանւոյ միոյ :
 ՚ի մէջ ձորոյ միոյ ՚ի կողմն Տիւսիսոյ, և
 օուղ ինչ Տեռի ՚ի գեղջէ անտի, կայր աղչա-
 մղջին անտառ մի կիպրոսայ և սարոյից՝ կոչե-
 ցեալ անտառ արեան : Անձուկ ճանապարհ մի
 տարածեալ ձգէր ՚ի նոյն, ՚ի մէջ կործանեալ
 ժխտակաց նախնի մահարձանաց. որք պատկա-
 նէին ազգի միում՝ որոյ յիշատակն անյայտ է
 այժմ ՚ի մէջ անապատին. լայնարձակ դաշտ մի
 գոյր ՚ի կեդրոնի անտառին՝ յորոյ վերայ զո-
 Տէին նոքա զկալանաւորս պատերազմի իւրեանց .
 ամին զիս անդամօր ձայնիւ բերկրութե և յաղ-
 թանակութեան : Պատրաստեալ էին նոքա զա-
 մենայն ինչ վասն մահուան իմոյ : Տնկեալ կայր
 անդամօր մահառիթ ցիցն Արեակոյի . վարեմի
 կնձնի ծառք, սարոյք և կիպրոսք կործանեալ
 կային ՚ի վր երկրի. խարոյկն էր անդրէն կա-
 ռուցեալ . և ամփիթէատրոնք կերտեալ կանգ-
 նէին վասն հայեցողաց և բազմականաց : Իւրա-
 քանչիւր ոք ՚ի նոցանէ հնարէր զնորաստեղծ
 տանջանս . ոմն կամէր հանել զմորթ ճակատու

իմոյ . և միւսն կամէր խարել զայս իմ կար-
մբախայլ տապարօք : Եւ ես սկսայ զերգ յու-
ղարկաւորութեան իմոյ ըստ հետագայ օրինակի :

Ո՛վ Մոսկոգողգք , ես եմ այր քաջ և ճշ-
մարիտ . ո՛չ երկն չիմ ՚ի հրոյ և կամ ՚ի մահ-
ուանէ . գրգռեմ զձեզ ՚ի մարտ . և համարիմ
զձեզ ստորին քան զկանայս : Հայր իմ՝ պա-
տերազմասէրն Ռվտալիսի՝ որդի Միսկովի ար-
բեալ է զջուր ՚ի սկաւառակս գագաթանոց
բազմայ ՚ի գերահռչակ դիւցազանոց ձերոց :
Ո՛չ կարէք հանել զհառաչանս ՚ի սրտէ իմմէ :

Գրգռեալ ՚ի բանից երգոյ իմոյ՝ մի ՚ի զին-
ուորաց անտի միսեաց զնետ մի ՚ի բազուկն իմ :
Ես ասացի միս՝ եղբայր շորհակալ եմ զքեզ :

Թէ պէտէ շուտափոյթ էին դահիճք և տան-
ջողք իմ , սակայն ո՛չ կարացին պատրաստել զա-
մենայն ինչ վասն մահուան իմոյ նախ քան զմը-
տանել արևուն : Խորհուրդ հարցին ՚ի ձեռ-
նածուէն , և նա արգել զնոսա ՚ի խռովելոյ
զոգիս գիշերոյ . սմին իրի և յապաղեցին նոքա
զբարձումն կենաց իմոյ մինչև ՚ի հետագայ օրն
վաղուեան : Սակայն անհամբեր լինելով նոցա
սա ՚ի տեսանել զտեսարանն սոսկալի՝ և պատ-
րաստ լինիլ վասն ծագման վաղուեան առաւօ-
տու՝ մնացին նք յանտառի անդ . լուցին զհուրն
գիշերոյ . և սկսան զսովորական պարս իւրեանց :

Նորա տարածեցին զիս ՚ի վերայ քամակի ի-
մոյ . և չուամբ արկեալք շուրջ զպարանոցաւ
իմով՝ բազուկք և ոտք իմ՝ պնդեալ կապեցան
՚ի ցիցս ուժգնակի հաստատեալս ՚ի վերայ երկ-
րի . պահապանք նստեալ կային ՚ի վերայ շուա-
նայ կապանայ իմոյ . և ես ոչ կարէի շարժիլ
թարց զգալոյ նոցա զշարժուածս անձին իմոյ ։
Գիշերն սիրեաց զաղջամղջին քօղիւր ՚ի վե-
րայ երկնից . երգքն և պարքն վերջացան . կիս-
այրեաց խարոյկքն արձակեին զընդփոխտ իմն
լոյս , որով երևեին ստուերք ոմանց յաստանդա-
կան վայրագասուն անձանց ։ ՚ի վերջոյ զամենե-
քումբք պատեաց թմբութիւն քնոյ . և մինչ
գործադրաղ մրմունջ մարդկան նուազեցաւ , գո-
ջիւն մրրկին սաստկացաւ . և ապա լսելի եղև
խառնիխուռն աղաղակ շփոթեալ ձայնից ։

Յայնմիկ ժամու նորոգ զերծեալ Հնդիկն մանս
կամարդ զարթնու ՚ի նիրհմանէ քնոյ իւրոյ . և
կարծելով թէ լսէ զաղաղակս ողբոյ անդրան-
կին իւրոյ՝ յառնէ յանկողնոյ իւրոյ առ ՚ի սեղ-
մել զկաթնաբուղիս լանջս իւր ՚ի վերայ կար-
մրերանգ շրթանց նորա ։ Իարձուցեալ զաչս իմ
գէպ առ խաւարչտին երկինս՝ խորհէի զսոս-
կայի վիճակ իմ սաստիկ տրտմութեամբ . Ատա-
լա երևեց ինձ իբրև հրէշ ապերախտութեան ,
քանզի առաւել նախադաս էի համարեալ մե-

ուանիլ շարաչար մահուամբ, քան թէ լքանել
զնա յաւիտեան. եթող նա զիս անմխիթար 'ի
կարի սոսկալի ժամանակի. սակայն յիշէի ես
զի սիրով սիրեցի զնա, և ուրախութեամբ սրը-
տի մեռանէի վասն նորա :

'ի կատարեալ բերկրութեան՝ գաղտնի իմն
ազգեցութիւն առաջնորդէ մեզ 'ի վայելս իւ-
րաքանջիւր պատուական վայրկեանի : 'ի սաստիկ
տրտմութեան՝ ընդհակառակն հոգի մեր վհա-
տեալ և հերձեալ 'ի շափազանց ցաւոյ տագ-
նապի՝ ննջէ գրեթէ նիրհմամբ անզգայութեան.
աչք մեր վշտագնեալ արտասուօք՝ կափուցեալ
լինին 'ի բնէ. և այսպէս տեսչութիւնն ընձե-
ռէ զքաղցր սիրտիանս մխիթարութեան իւրոյ՝
մտայ վշտացելոյ : Զգացի ես ընդդէմ տառա-
պանաց անձին իմոյ զայն քունն վայրկեանական, որ
խուն ինչ արգելեալ պահէ զվիշտս տառապե-
լոյ : Տեսի յերազի զի ձեռն բարերարի միոյ
'ի բաց ելոյժ զկապանս իմ. և ես զգացի զայն
քաղցր զգացողութիւն՝ որ կարի զուարճալի է
ազատեալ կալանաւորին. որոյ բարձքն տրորեալ
էին ծանրաբեռնեալ շղթայիւք :

Զգացողութիւն փրկութեան իմոյ այժքան զօ-
րայաւ, մինչ իսկոյն բացի զկափուցեալ զաջս
իմ : 'ի լուսոյ լուսնին՝ որոյ քաղցրահայեայ
նշողքն նշողէին յերկիր 'ի սպիտակափայլ ամ-

պոյ՝ տեսի զբարձրահասակ կերպարան մի ըզ-
գեցեալ զհանդերձս սպիտակս, և լռելեայն
պարապեալ առ ՚ի լուծանել զկապանս շղթայ-
ից իմոյ: Յայսմ վայրի կամէի աղաղակել բարձա-
րաձայն՝ յորժամ քաջածանօթ ձեռն մի արգել
զբացուն բերանոյ իմոյ: Զուան մի միայն կայր
մնացեալ անլոյծ, և չէր հնար բեկանել զայն ա-
ռանց զարթուցանելոյ ՚ի քնոյ զպահասուցանն զայն՝
որ տարածեալ ննջեալ կայր ՚ի վերայ նորս: Ե-
ւտալա քարչեայ զայն շուան, և զօրականն զար-
թուցեալ ըստ կիսոյ՝ շրտեալ ՚ի տեղոցէ
իւրմէ: Եւտալա անշարժ արձանացաւ, զօրա-
կանն մնաց պշուցեալ, համարեցաւ զնա գոլ
ոգի աւերակաց անտի, և անկաւ ՚ի վերայ երկ-
րի ահաբեկեալ՝ խփելով զաչս իւր և կարդա-
լով զՄանիւտովն իւր յօգնութիւն:

Ահա՛ խորտակեալ լուծան կապանք անձին
իմոյ: Յարեայ և սկսայ հետեիլ ընթացից ա-
զատչի իմոյ: Սակայն ո՛րքան բազմապատիկ վը-
տանգք լինին մեզ յանդիման, արդ մերձ էմք
սահիլ անկանիլ ՚ի վերայ ուրումն վայրագա-
տուն անձին՝ որ ննջէ ՚ի խաւարի, երբեմն պա-
հասցան ոմն աղաղակէ զկնի մեր, և Եւտալա պա-
տասխանէ փոփոխեալ ձայնիւ, մանկուք ճշեմ
աստկապէս, շունքն հաչեն ուժ գնապէս, մինչ-
չէ էր անցեալ մեր թէ ցանկապատն վտանգաւորո

և ասան քանակի կաղկանձիւն և հեծութիւն
 հնչէին ՚ի մէջ անտառին . բանակն ողջոյն երևի
 զարթուցեալ ՚ի քնոյ . վայրագանունքն լու-
 ցանեն զլահն իւրեանց առ ՚ի պնդիւ զհետ
 փախստեան մերոյ . և մեք փութալով փութամք
 ՚ի գնացս մեր . յորժամ առաջին ծագումն ա-
 ռաւօտու սկսաւ երևիլ , տեսաք զի արդէն ան-
 ցեալ էաք մեք ՚ի հեռաւոր տեղիս անապատի :
 Ո՛վ մեծազօր հոգի , դու միայն գիտես թէ ո՞ր-
 քան կատարեալ էր երջանկութիւն սրտի իմոյ ,
 յորժամ գտի զիս վերստին անգամ մի ևս ընդ
 Ատալային իմոյ ՚ի մէջ անապատին , ընդ ազատ-
 չին իմոյ՝ ընդ տարփալի Ատալային իմոյ , որ
 նուիրեաց ինձ զանձն իւր յաւիտեան . և ես արօ-
 կանելով զիս առ ոտս նորա՝ ասացի զնա թըր-
 թուուն ձայնիւ , արք են էակք թշուառք ո՛վ
 դուստր Սիմաղանայ . սակայն յորժամ ոգիք այց
 ելանեն նոցա , երևին նոքա իբրև հիւլէք : Դու
 ես ոգի իմ . դու այց ելեր ինձ . երախտագի-
 տութիւնն ո՛չ կարէ գտանել զբարբառ և ըզ-
 խօսս : Ատալա մատոյց ինձ զձեռն իւր տխրա-
 գին իմն ժպտանօք : Պարտ է ինձ հետեիլ քեզ
 ասաց Ատալա՝ քանզի դու ո՛չ զերծցիս թարց
 ունելոյ զիս ընդ քեզ : Յանցեալ գիշերի կա-
 շառեցի զձեռնս ձեռն . արբուցի զպահագանս

քոյ * Տիւթով Տրոյ • (31) և սրտի մտօք վը-
տանգեցի զկեանս իմ՝ վասն անձին քո, որ ետուր
զկեանս քո վասն անձին իմոյ : Այն՝ պատանի
կռապաշտ դու՝ աղաղակեաց նա այնպիսի ձայնիւ,
որ սոսկացոյց զՏոգի իմ, այն՝ փոխադարձ ե-
ղիցի ողջակեզն այն :

Ատալա ետ ինձ զզէնս՝ զորս բերեալ էր
լնդ ինքեան : պատեաց զվերս իմ տերևովք
Պապիայի • (32) և առոգեաց զայն արտասուօք
իւրովք : Առողջարար սպեղանի իմն է այդ՝
զոր Տեղուս ՚ի վերայ վերայ իմոյ՝ ասացի ես :
Աւան՝ երկն չիմ զի թոյն է : այդ՝ պատասխա-
նեաց սիրելին իմ՝ որ Տեղանի ՚ի ժանգահարեալ
սրտէ միոջէ : Պատարեաց նա զքօղ մի ՚ի լան-
ջայ իւրոյ • և կապեաց զբազուկ իմ Տերովք
իւրովք :

Արբեցութիւնն՝ որ լնդերկար տեէ ՚ի վայ-
րագասուն անձինս և է տեսակ իմն խելագա-
րութեան՝ անտարակոյս արգել զթշնամիս մեր ՚ի
պնդելոյ զՏետ փախստեան մերոյ յառաջնում
աւուր : Եւ եթէ ՚ի խնդիր ելին նոքա վասն
մեր զկնի, գուցէ գնացին նոքա յարեմուտա
կոյս՝ կարծելով թէ գնացեալ էաք մեք ՚ի
Մեսսեսիպի : Սակայն ուղղեալ էաք մեք ըզ-

Ճանապարհ մեր դէպ առ աստղն հաստատուն՝
 * կանոնաւորելով զգնացս մեր 'ի ձեռն մամ-
 ուոյ՝ որ պատեալ էր զկաղնուլք ։

Իմացաք մեք ընդ հուպ զսակաւ օգուան՝ զոր
 շահեալ էաք փրկուք իմով ։ Անապատն զար-
 քիս ցուցանէր զանսահման առանձնութիս իւր
 առաջի աչաց մերոց . գովով մեր անփորձ 'ի
 կեանս միայնակութեան՝ 'ի մէջ միայնակեաց ան-
 տառաց , զարտուղելով յուղիղ ճանապարհեն՝
 դեգերէաք անտէր և անօգնական ։ Մինչ ակնար-
 կէի յԱտալա , յաճախակի յիշէի 'ի միտս իմ
 զպատմութի շագարու յանապատին Բերսաբեայ ,
 զոր Լոպէզ յորդորեալ էր զիս ընթեռնուլ .
 և դիպուածն այն պատահեալ էր յայնոսիկ վա-
 ղեմի ժամանակս՝ յորժամ մարդիկ ապրէին յե-
 ըիս հասակս կաղնեաց ։

Ատալա յօրինեաց վն իմ զվերարկու մի յերկ-
 րորդ կեղևոց հացի ծառոց , քանզի գրեթէ մերկ
 էի ես անձամբ . հերովք ոգնոյ (33) նկարակեր-
 տեացնա զՄոկասայս X յօրինեալս՝ ի մորթոց մըշ-
 կահոտ մկանց ։ (34) Ես ևս փոխարինաբար զգու-
 շանայի զգեստուց և պաճուճանայ նր . և վն նր
 յօրինէի հիւսուածս յայնոցիկ ծիրանագոյն մո-
 լոշից՝ զորս գտանէաք 'ի վերայ ամայայեալ

* Հիւսիսակողմն X Տեսակ ինչ կօշկաց Հնդկացե

գերեզմանայն Չնդկաց . կամ զարդարէի զձիւ-
նատեսիլ լանջս նորա կարմրերանգ հատիւք ա-
զալէաց . (35) և ապա ժպտէի խորհելով ըզ-
հրեշտակային գեղեցկութիւն դիմաց նորա :

Եթէ հասանէաք 'ի գետ մի , անցանէաք յայն-
կոյս նորա օգնութեամբ լաստից . կամ անցանէ-
աք լուղալով , և Ատալա եղեալ զձեռն իւր 'ի վր-
ուսոց իմոց ' երևէաք մեք իբրև երկոքին սիրա-
տարի կարապք ' որք անցանէն 'ի մէջ լճաց :
Յաճախակի 'ի ժամ սաստիկ ջերմութեան ա-
րևու ' խնդրէաք մեք զհովանի ը մամու ապաս-
եղենափայտիւք : Գրեթէ ողջոյն ծառքն յերկ-
րին Փլորիդայ ' մամուանդ եղենափայտքն և
կաղնիքն ' ծածկեալ են սպիտակ մամուով , որ 'ի
բարձրաբերձ ստեղանց հասանէ յերկիր 'ի խո-
նարհ : Եթէ 'ի լոյս լուսնոյ հանդիպեսցիս յամայն
մարգագետինս առանձնակեաց կաղնւոյ միում
զգեսեալ զայն սպիտակ հանդերձս , կարծեսցես
զոգի մի պարփակեալ 'ի ծածկոյթս նորա :

Տեսարանն առաւել զարդարուն և զուար-
ճալի երևի 'ի ժամ տունջեան . բազմութիւն
ճանճից , փողփողիւն ժժմակաց , կոլիբրայից ,
(36) կանաչագոյն թութակաց , և կապուտակ
թռչնոց սաւառնուայեալ շուրջ զայսոքիւք սպի-
տակափայլ մամուովք ' տան նց զերևոյթ զար-
դարուն նկարակերտ գործածոյ ' յօրինելոյ գեղա-

Ֆիայլ երանգօք 'ի վերայ ձեռնատեսիլ երկրի
ճարտարարուեստ ձեռամբ Եւրոպայուոյ :

Ընդ այսոքիւք ստուերախիտ սարփինայիւք
զոր պատրաստեալ է մեծագոր հոգին 'ի մէջ ա-
նապատին՝ զօրացուցաք զխոնջեալ բարձս մեր
'ի ժամ երեկոյին : Եօթն հրաշքն հնոյ աշխար-
հի ոչ երբէք հաւասարեցան այսոցիկ բարձրա-
բերձ նոճեաց . որք յորժամ շարժին 'ի հնչմա-
նէ հողմոյ , հանգուցանեն 'ի քուն զփետրազարդ
բնակիչս յօդային բնակարանս իւրեանց . և 'ի
տերևոց իւրեանց ելանեն ձայնք տրտմութեան :

'ի գիշերի բորբոքեցաք զհուր անհնարին .
և կապեալ զկեղևս արմաւենեաց 'ի չորս ցիցս՝
կառուցաք զխրճիթն ուղևորական : Եթէ որ-
այի ես զհնդկահաւ մի , զաղաւնի մի կամ ըզ-
խայտափիտ փասիան մի , կախէի զնոսա զոստոյ
միոյ առաջի բորբոքեալ կաղնւոյն . և շարժիւն
հողմոյ շարժեր զորս որսորդին : Ուտեաք մեք
զայնոսիկ լօւս՝ որք կոչին ընդերք բարանց .
զբաղչր կեղևս ցախի , և զգլուխս ցորենոյ շնդ-
կաց՝ որք ունին զհամ դեղձի և մորենւոյ . սեաւ
ձառք ընկուզի , աղտորի (37) և մապէլայ մա-
տակարարէին մեզ զըմպելի առատապէս : Եր-
բեմն քաղէի ես 'ի միջի եղեգանց զմի յայնոցիկ
տնկոյ՝ որոյ ծաղիկն ունի զկերպարան եղջեր .
(38) և պարունակէ յինքեան զումպ մի ամենա-

մաքուր ցօղոյ : և մեք գոհութիւնս նուիրէ աք
 Երկնաւորին վն զետեղելոյ 'ի վերայ դալար ծը-
 դօտի զծաղիկ մի՝ որ պարունակէ զայսպիսի մա-
 քուր ըմպելի 'ի մէջ ժահահոտ ճահճայ . ըստ
 որում զետեղեալ է նա զյոյս 'ի սրտի միում
 տրորելոյ տրտմութեամբ , և ըստ որում բղխե-
 ցուցանէ նա զառաքինութիւնս 'ի թշուառու-
 թեանց կենաց :

Աւա՛ղ՝ իսկ և իսկ ծանեաց թէ ո՛րքան եր-
 ևելի պարզութիւն դիմաց Ատալայի պատրեալ
 էր զանձն իմ . մինչ սակաւ առ սակաւ յառաջ
 գնայաք մեք յանապատին՝ սակաւ առ սակաւ
 առաւելոյր տխրուի՛ կերպարանաց նորին : Եր-
 բեմն յանկարծակի սարսափէր նա դողալով . և
 իսկոյն դարձուցանէր զգլուխ իւր . կամ ես ապօ-
 շեցուցանէի զնա՝ արկանելով 'ի վերայ իմ ըզ-
 հայեցուածս ախտակիր դիմաց . և ապա համբառ-
 նայր նա զաչս իւր յերկինս խորին տրտմութե՛ս
 Բայց որ առաւել սարսեցուցանէր զանձն իմ՝
 էր ծածուկ վշտալի խորհուրդ ինչ՝ զոր նա պա-
 հէր յինէն թագուցեալ . սակայն խռովեալ
 կերպարան նորս 'ի վեր հանէր զայն ըստ մա-
 տին : Հանապազ կատարէր նա և մերժէր զաղա-
 ջանս իմ . կենդանացուցանէր կամ կորուսանէր
 զյուսադրութիւնս իմ . յորժամ տեսի թէ ար-
 արեալ էի զյառաջադիմութիւնս ինչ 'ի մուտս

արտի նորին, նա յաճախակի 'ի դերև հանէր
 զակնկալութիւն իմ: Յաճախակի նա ասէր, սի-
 րեմ ես զքեզ, ո՛վ սիրական իմ՝ ըստ որում սի-
 րեմ զստուերախիտ սարսիհնայս 'ի տապախարչ
 շերմութեան արևու. գեղեցիկ ես դու իբրև
 զդալարագեղ նկար դաշտորէից՝ անուշահո-
 տեալ ծաղկամբք գարնանային եղանակի. յորժամ
 մերձենամ առ քեզ՝ զդողանի հարկանիմ. ե-
 թէ ձեռք իմ հաին ձեռաց քոց՝ կարծեմ զիս
 հասեալ 'ի դրունս մահու. յանցեալ աւուր
 մինչ ննջեալ կայիք 'ի ծոցի իմում՝ հնչումն
 հողմոյ սփռեալ տարածեաց զգեսս գլխոյ քոց
 'ի վերայ երեսաց իմոց. և ես կարծէի թէ ան-
 երևոյթ հոգի ինչ շօշափէր զերեսս իմ: Ար-
 դարև տեսեալ է իմ զմատաղ ուլս խաղալ և
 ոստնուլ 'ի վերայ խոտորնակ լերինն Ոկկոնայ.
 ունկնդիր եմ լեալ բարբառոյ հինաւուրց ա-
 րանց: Սակայն հեզութիւն խաղասէր ուլուց,
 և իմաստութիւն ծերունի մարդոց ո՛չ են այնպէս
 քաղցր և հաճոյական՝ որպէս բարբառ բերա-
 նոյ քոյ: Ո՞՞ Ճակտոս, չէ՛ մարթ ինձ երբէք
 լինիլ ամուսին քոյ:

'Իմագորութիւն սիրոյ և կրօնի, անհնարին
 կաթողութիւն նորա, ամբիժ մաքրութիւն նո-
 րա, ազնուութիւն մտաց նորա, կատարեալ ըզ-
 գայողութիւն նորա, վսեմութիւն հոգւոյ նորա

յիրա մեծամեծս , ընդունակութիւն նորա յիրա
մանունս , ցուցին ինձ յանձն Ատալայի զան-
հնարին էակ անխմանալի : Ոչ կարէր նա առ ժա-
մանակ մի տիրել 'ի վերայ սրտի իմոյ . գերա-
կայ սէր նորա և խստակրօն առ սքինութիւն նր
բռնադատէին զմարդ կամ սիրել և կամ ա-
տել զնա :

Զկնի երագլնթաց ուղևորութեան հնգետա-
սան գիշերաց , ժամանեցաք մեք 'ի լերինս Ալ-
լեգանայ , և եկաք յեզերս Թեննասեայ . զգետ
մի ասեմ" որ խառնեալ միանայ ընդ գետոյն
ՈՏիոյայ : Ըստ խորհրդոյ Ատալայի կերտեալ
շինեցի ես զկանովայ մի՝ զոր պատեալ պրկեցի
խժիւք շէրենեայ , կարելով զվարքայն արմա-
տովք սարոյից . և մտեալ մեր 'ի նաւակն յայն
գիւրաբեկ՝ սկսաք նաւել ըստ ընթացից ջրոյն :

Գիւղն Ստիկոյի հանդերձ ամայայեալ խրճ-
թօք իւրովք և բրգաձև գերեզմանօք Հնդկաց
երևեր 'ի ձախոյ կողմանէ մերմէ , մինչ անցա-
նէաք մեք զուարաւանդ մի մեծ . և ընդ աջմէ
կողմանէ տեսանէաք մեք զձորն Քեայ՝ զար-
դարեալ տեսարանաւ խրճթաց Զորայ , որք
հաստատեալ կային 'ի վերայ գագաթան լերին
գեղջն այնորիկ : Յայնկոյս բարձրայեալ սիզոյ
տեպայեալ ցամաքին տեսանէաք մեք զմուտս ա-
րեգական : Ոչինչ մարդ խռովէր զանդորրու-

Թիւնն՝ որ Թագաւորէր ՚ի խորին յառանձնաւոր վայրս յայտոսիկ : Չինի նաւելոյ ընդերկար տեսաք մեք միայն զորսորդ մի Հնդիկ՝ անշարժ արձանացեալ ՚ի վերայ գագաթան ժայռի միոյ, և յեցեալ ՚ի վերայ աղեղան իւրոյ : Երևեա նա իբրև արձան մի կառուցեալ ՚ի վերայ վախից և նուիրեալ ոգւոյն այնոցիկ վայրաց :

Ատալա և ես խառնեցաք զլուծթիւն մեր ՚ի հանդարտութի ահեղ տեսարանին ՚ի նախնական ծի . և յայսմ ժամու դուստրն վտարանդութե թրթուուն ձայնիւ երգեաց զհետագայ բանս :

Երանի՞ նոցա՝ որք ոչ երբէք տեսին զծուխ խնջոցից օտարաց . և բազմեցան միայն ՚ի խրախուսանս հարց իւրեանց :

Կապուտակ Թռչունն Մեծօտեսնիւղեայ պարտէ՞ր հարցանել ՚ի Նոնպարիւլ (39) Թռչնոյն Փլորիդայ, Թէ ընդէ՞ր տրտնջես տրտմութե և Մի՞ թէ չունիս աստ՝ որպէս և յանտառս քոյ՝ զգեղեցիկ հովանոցս, զյստակ աղբիւրս և ըզքաղցրաձաշակ պտուղս : Այո՞ անդրէն պատասխանել ունի Նոնպարիլն . սակայն թողեալ էմ ես զբոյն իմ ՚ի մէջ յասամանաց, և ո՞վ բերցէ զայն ինձ վերատին : Ունի՞ս դու զպայծառամիայլ արեգակն՝ որ փայլէր ՚ի մարգագետինս իմ :

Երանի՛ նոցա՛ որք ոչ երբէք տեսին զծուխ
խնջոյից օտարաց . և բազմեցան միայն ՚ի խրատա-
ճանս Տարց իւրեանց :

Չկնի ընդերկար և տարժանաւոր ճանապարհ-
Տի , խոնջեալ ճանապարհորդն բազմի ՚ի վերայ
երկրի : Հայի նա շուրջանակի ՚ի վերայ ծխա-
պատ գագաթանց խրճթաց . ուղեորն չունի ըզ-
տեղի ինչ առ ՚ի հանգստանալ : Բաղխէ նա
զդուռն . կախէ զաղեղն իւր արտաքոյ նորա . և
խնդրէ Թախանձանօք զՏիւրընկալութիւն : Տա-
նուտէրն առնէ ձեռամբ իւրով զնշան իմն
յաւագին . և ոչ տայ նմա զտեղի բնակու-
թեան . ուղեորն առնուռ անդրէն զաղեղն իւր .
և ուղղէ զխոնջեալ զոտս իւր ոչեպ առ վայրս
անապատին :

Երանի՛ նոցա՛ որք ոչ երբէք տեսին զծուխ
խնջոյից օտարաց . և բազմեցան միայն ՚ի խը-
րատաճանս Տարց իւրեանց :

Ո՛վ զարմանալի պատմութի՛ ասացեալք շուրջ
զկրակարանաւ ծնողաց . ո՛վ քաղցր զեղուածք
հոգւոյ . ո՛վ քաղցր երջանկութի՛ փոխադարձ
սիրոյ . դուք բերկրեցուցանէք զաւուրս նոցա՛
որք ոչ երբէք Թողին Լբին՝ զհայրենիս իւր-

եանց : Առողեալ 'ի ժամ երեկոյին բարեպաշտական արտասուօք բարեկամութեան՝ գերեզմանք նոցա ամբառնան 'ի վեր 'ի բնիկ երկրի նոցուն :

Երանի՛ նոցա՝ որք ոչ երբեք տեսին զճուխ խնջոյից օտարաց . և բազմեցան միայն 'ի խրատօ՞ ճանս Տարց իւրեանց :

Այսպէս երգեաց Ատալա . ոչինչ ընդմիջեաց զտխրագին տրտնջողական բան նորա , բայց միայն ձայն կանովայի մերոյ՝ որ անցանէր ընդ մէջ ջուրց գետոյն : Երբեմն երբեմն անզօր արձագանգն կրկնէր զբանս Ատալային . և միւս արձագանգ կրկնէր զայնոսիկ վերստին և ոչնչանայր 'ի պտոյտս կաղնի ծառոյն . Թուէր թէ հոգիք երկուց սիրականաց՝ նման մեզ ապերջանիկ եղելոյ՝ հրապուրեալ 'ի քաղցրիկ ներդաշնակութենէ ձայնիցն , հաճէին հնչել զվերջին եղանակս երգոյն 'ի վերայ լերին :

Առանձնութիւն վայրին , յաճախական ներկայութիւն սիրեցեալ առարկային , և աղէտք մերոց ձախողութեանց առաւելուին զսէր մեր երկոցունց : Դիտաւորութիւն Ատալայի սկսաւ թողուլ լքանել զնա . և սէր նորա տկարեցուցանելով զանզօր կերպարան մարմնոյ նորա՝ յաղ-

Թական հանդիսանայր 'ի վերայ առաքինութեան
 հորին : Յաճախակի աղօթէր նա առ մայր իւր՝
 զորոյ ցասուցեալ ուրուականն ջանայր նա ըստ
 երևութին առ 'ի զիջուցանել 'ի հանդարտութե
 խաղաղութե : Երբեմն հարցանէր նա՝ եթէ ես
 ո՞չ լսէի զաղաղակս աներևոյթ հոգւոյ միոյ, կամ
 եթէ ես ո՞չ տեսանէի զբոյս արձակեալ յերկ-
 րէ : Ահատեալ իմ 'ի վաստակոյ՝ հաշեալ
 մաշեալ 'ի կրից սիրոյ՝ և խորհեալ 'ի միտս
 իմ զի մոլորեցաք մեք յայտոսիկ յընդարձակ յան-
 տառս մինչև ցյաւիտեան, յաճախակի գիւրկս
 արկեալ սեղմէի զսիրականն իմ 'ի վերայ կըր-
 ծոյ իմոյ . և յառաջադրէի նմա կերտել զխրը-
 ճիթ մի, և անցուցանել զմնացորդս աւուրց
 մերոյ յայնտոսիկ անապատս լուութեան . բայց սա-
 կայն նա կամակորութեամբ մերժէր զյառաջա-
 դրութիւնս իմ ասելով, յիշեա՛ սիրելի՛ բարե-
 կամ իմ, թէ զի՛նչ է պարտական զինուոր մի
 երկրի իւրում : Չի՛նչ է տառապեալ և տկա-
 րամիտ կին մի առ բաղդատութեամբ պէսպէս
 պարտականութեան այնոցիկ՝ զոր պարտիս դու
 կատարել : Քաջալերեա՛ և կազդուրեա՛ զսիրտ
 քոյ՝ որդիդ Ովտալլիսսեայ . և մի տրտնջեր
 զվիճակէ և զբաղդէ քումմէ : Սիրտ մարդոյ
 նմանի սպնգան 'ի մէջ գետոյ . 'ի պարզ եղանա-
 կի ծծէ նա զջուր յստակագոյն . և յորժամ

Տրբիկք սկսին խռովել արէ կոծութեամբ զե-
րեսս ջրոց՝ ուռուցեալ լինի նա տղմալից ջրով ք
Մի՛ թէ սպունգն իրաւունս ունի ասել, թէ
ոչ կարծէի զի պատաստեցին մրբիկք բնաւին,
կամ զի դէպ լիցի ինձ չորանալ ՚ի ջերմութե
կիզողական արևու ։

Ո՛վ Ռենի, եթէ երկնչիս դու ՚ի ցաւոց
սրտի, ՚ի բայ կայ յառանձնաւոր տեղեաց-
կիրք մեծամեծք սիրեն զառանձին տեղիս, և յոր-
ժամ ամէմք զայնոսիկ կիրս ՚ի վայրս անապա-
տի, առաջնորդեմք նոցա յիւրեանց սեպհականօ
ի շխանութիւն ։ Ու շայտեղեալ մեր ՚ի տրտմութե
և յարհաւրաց՝ յիւրաքանչիւր վայրկենի մերձ
լինելով առ ՚ի անկանիլ ՚ի ձեռս Հնդիկ թշնա-
մեաց մերոց, կամ հեղձամուղձ լինիլ ՚ի բարձ-
րացեալ կոհակաց, կամ թունաւորեալ մեռա-
նիլ ՚ի խածմանէ օձից, և կամ գիշատեալ
կլանիլ ՚ի վայրենի գազանաց՝ հապիւ երբէք կա-
րէաք հնարել զդժբաղդ և զանմխիթար ապ-
րուստ մեր՝ ոչ գիտելով ուր արդեօք ուղղել
զգնացս մեր ։ Արծեցաք զի թշուառութիք մեր
ոչ կարէին լինել մեծագոյն, յորժամ կարի վը-
տանգաւոր իմն դիպուած էլից զչափ տառապա-
նաց և աղետից մերոց ։ Այս քսան և եօթն-
երորդ արեգակն էր՝ յորմէ հետէ փախուցել
էաք մեք յանտառէն արեան ։ Լուսինն հրաբուր

բոք սկսեալ էր զընթացս իւր, և ամենայն ինչ գուշակէր զմերիկ մօտալուտ : Յայնմ ժամանակի՝ յորժամ բաժբիշք Նորկայ կախեն զտրու մուխս իւրեանց զստեղանց սալին ծառոց, (40) յորժամ Թութակք կախուն զտեղի ապաւինի՝ ի ջերմութենէ արևու ընդ հովանեաւ դիպանուէր կիպրոսաց, երկիրք սկսան մթագնիլ նսեմութիւն և Լուսութիւն տիրէր յողջոյն յանապատին : Իսկ և իսկ լսելի եղեն Թնդիւն և դրնդիւն որոտմանց՝ զորոց զարձագանգս հնչէին անտառք վաղեմիք իբրև զաշխարհ : Երկուցեալ մեր՝ ի ջրահեղձոյց լինելոյ՝ անապարեալ չողաք ի յամաք առ ՚ի գտանել զտեղի ապաւինի՝ ի մէջ անտառին :

Գնալով մեր՝ ի վերայ ճահաճախուտ երկրի՝ հաղիւ երբէք կարէաք ընթանալ ընդ կամարօք սմիլաքի, (41) ՚ի մէջ կոճեղաց որթոյ իւարողոյ, լեղակի և սողոսկուտ բաղեղայ . որք պատատէին զոտիւք մերովք իբրև զուռկանս, և երկիրն սուզանելով ՚ի նեբբոյ ոտից մերոյ՝ երկնչէաք մեք Թաղիւ ՚ի մէջ տղմոյ : Անհամար ժժմակք և մեծամեծ ելասարք արգելուին ըզտեսողութիւն աչայ մերոյ . լսէաք մեք զվտանգաւոր շաղիւն Թունաւոր օձի . (42) գայլք, արջք, բոբորոնք, կարկաջոկք (43) և վագերք գայլն գունդագունդ առ ՚ի գտանել զտեղի ա-

պատկին ՚ի մէջ անտառին : Պատարէին նորա
զօրն սարսափելի աղաղակօք և կաղկանձմամբք
իւրեանց :

Ընդհանրական խուար մթութեան պատեաց
պաշարեաց զմթնորոշան մեր . խոնարհեալ անպէս
ծածկեցին զձայրս ծառոց . մթաղգեաց վայլա-
տակունք պատարէին զցորայեալ երկինս . մրրկա-
յոյզ հողքն պտոյտքէր զամպս ՚ի վերայ սմ-
պոյ . հաստատութիւնն հերձաւ տարանջատ . և
ասն երեւցաւ ՚ի միջի պատարուածոց նորս նոր
երկինք մի հրդեհեալ բոցովք . ողջոյն տարա-
ծութիւն անտառին խոնարհեցաւ ասեղ յար-
գութեամբ : Ո՞վ գերագոյն և զարհուրելի տե-
սարանիս . որոտումն յերկնից Թափէր զցորայեւ
բոցս ՚ի վերայ անտառաց . բոցքն տարածեալ
սփռէին յովկիւմնոսս հրեղէնս . սիւնք ծխոյ դի-
մէին յերկինս՝ արձակելով զկայծակունս իւր-
եանց յայնմիկ յայնատարած երկնատեղաց հրկի-
զութեան . կայծակն տատանեալ , խորտակումն
ջախջախեալ ծառոց , միջիւն խօլական երևու-
թից , կաղկանձին վայրենի գաղանաց , կարկա-
ջիւն հոսանաց ջրոց , շաչիւն փայլատականց հա-
մայն ընկղմեալ սուզանէին ՚ի մէջ կոհակաց : Ամե-
նայն ինչ երեւեր կործանումն նիւթոյ՝ որ հնչէր
՚ի մէջ անապատին : Մեծազօր հոգին գիտէ զի
՚ի ժամ կործանման բնութեան , զոչինչ տեսա-

նէի բայց միայն զԱտալա . և ոչ երկն չէի վասն
 ուրուք , բայց միայն վասն նորա : Յեցեալ իմ
 'ի ծառն յայն՝ որ եղև մեզ ապաստանարան , մար-
 վին իմ կորացեալ խոնարհեցաւ ընդ չքնաղա-
 տեսիլ կերպարանաւ նորա . և ես ջանայի պաշտ-
 պանեւ զնա յանձրեաց՝ որք հոսէին 'ի ջրա-
 կաթ տերեւոց անտի . բազմեալ իմ 'ի վերայ
 խոնաւացեալ երկրի՝ եդեալ էի զնա 'ի վերայ
 ծնգաց իմոց՝ ջերմացույանելով զցրտացեալ
 զուտ նորա ձեռօք իմովք : Մտադրութեամբ
 ունկնդիր լինելով հնչման մըրկին՝ զգայի զկաթ-
 ուածս արտասուաց Ատալայի , որք անկանէին
 'ի վր տոչորեալ այտից իմոց . և էին նք ջերմ
 իբրև զկաթն հեղեալ յաւատաբուղիս պտկանց :
 Ո՛վ Ատալա՛ աղաղակեցի ես՝ բայ զսիրտ քո և
 յայտնեա՛ զցաւագին խորհուրդս քոյ աներկիւղ ,
 զոր կամակորութք ծածկեալ ես յինէն . քաջ
 գիտես թէ որքան քաղցր է մեզ բանալ զգաղտ-
 նի խորհուրդս սրտից մերոց անկեղծ բարեկամի
 միում : Այո՛ տեսանեմ զի արտասուես դու
 վասն բնածին խրճթի քո : Ո՛վ որդիդ բնուե՛
 պատասխանեաց Ատալա՛ ընդէ՛ր պարտիմ ար-
 տասուել վասն բնածին խրճթի իմոց , մինչ հայրն
 իմ ոչ է ծնեալ յերկրին արմաւենեաց : Չինչ
 ասայի ես զարմայմամբ՝ հայր քո ո՛չ է ծնեալ
 յերկրին արմաւենեաց . ո՛վ ուրեմն եդ զքեզ


յայտ աշխարհ տրտմութեան : Մայր իմ՝ կրկնեաց անդրէն Ատալա՝ գիտացեալ էր զայր մի սպիտակ , նախ քան զբերելն իւր առ Սիմաղանս զերեսուն մատակ ձիս , զքսան եզինս , զհարիւր տակառս իւրոյ , զյիսուն մորթս կղբոյ և զբազում գանձն իբրև զօթիտ ամուսնութեան իւրոյ : Սակայն մայր մօր իմոյ սրահելով զջուր յերեսն նորա՝ պարտաւորեաց զնա ամուսնանալ ընդ ազնուամիտ Սիմաղանայ՝ գլխաւորին մերոյ , զոր ազգ երկրին պատուեն և մեծարեն իբրև ըզմի յաներևոյթ ոգւոյ : Մայր իմ՝ ասաց առն իւրում , արգանտ իմ յի՛ է . ո՛հ սպան զիս է Ո՛չ պատասխանեաց ազատամիտն Սիմաղան՝ մեծազօր հոգին արգելցէ զիս ՚ի գործելոյ զայդպիսի զարհուրելի մեղս : Ես ո՛չ յօշոյից զմարմին քոյ . ո՛չ հատից զունչս և կամ զականջս քոյ . քանզի խօսեցար դու զճմարտութիւն . և ո՛չ պատրեցեր նենգանօք զանկողին ամուսնութե՛ մերոյ : Պտուղ որովայնի քոյ եղիցի որդի իմ . և ես ո՛չ մերձեցայց առ քեզ մինչև թառցեալ իցէ թռչունն բընձոյ . (44) և երեքտասաներորդ լուսինն լուսաւորեալ իցէ զերեսս երկնից : Իբրև յայնմ Գամանակի մայր իմ էած զիս յաչխարհ ծննդեամբ . և մինչ հասակ իմ զարգանայր , իսկ և իսկ սկսայ ցուցանել զամբարհաւածութիւն Սպանիացոյ միոյ՝ խառնեալ ընդ

Տպարտութեան վայրագասուն անձին և Նա արար զիս քրիստոնեայ զօրէն Տօր իմոյ և ինքեան . զկնի սակաւուց տրտմութիւնք սիրոյ յարձակեցան ՚ի վերայ նր . և նա այժմ՝ հանգչի յաղքատին խրճթի անդ ծածկեալ մորթովք , յորմէ ոչ ոք դարձ առնէ բնաւին : Այսպէս Ատալա աւարտեաց զպատմութիւն իւր : Ապա հարցի ես քիս , թէ ո՞վ է հայր քոյ՝ տնուապեալ որբդ անապատի . զի՞նչ անուն կրէր նա ՚ի միջի մարդոց . զի՞նչ անուն ունէր նա ՚ի միջի ոգւոց : Ես ոչ երբէք ուղղեցի զոտս Տօր իմոյ՝ պատասխանեաց Ատալա . զայս և եթ գիտեմ զի բնակէր նա չէ քեռն իւրոյ ՚ի սուրբն Օգոստինոս . և մինչ ցարդ հաւատարիմ է եղեալ նա մօր իմում : Անուն նորա ճանաչիւր ՚ի հրէշտակաց գոլ Փիլիպպոս . սակայն մարդիկ կոչէին զնա Լոպէզ :

Ի լսելն իմ զայս բան վերջին՝ աղաղակեցի ՚ի բերկրութենէ սրտի իմոյ՝ սեղմելով զսիրականն իմ ՚ի վերայ բաբախուն սրտի իմոյ , ո՞վ քոյ՛ր՝ ո՞վ դուստր Լոպէզի՝ ո՞վ զաւակ բարերարի իմոյ : Ատալա շփոթեալ ՚ի բանից իմոյ՝ ես հարց զպատճառ խռովութեան հոգւոյ իմոյ : Սակայն յորժամ լուա թէ Լոպէզ էր ազնուամիտ բարերարն այն՝ որ որդէգրեալ էր զիս ՚ի սուրբն Օգոստինոս , և զոր թողեալ էի առ ՚ի

Թախառիլ յանագատի, բաժանորդ եղև խելա-
 գարեալ բերկրութեան իմում: Արդէն գոլով
 մեր յաղթահարեալ 'ի սիրոյ մերոյ՝ եղբայրա-
 կան սէրն յաղթական հանդիսանայր: Թալկա-
 ցեալն Ատալա ընդունայն շանայր զերձանիլ 'ի
 գրկայ իմոց յնցողական շարժմամբ. ամբառնայր
 նա զձեռս իւր 'ի վերայ երեսայ իւրոց, և ա-
 պա խոնարհեցուցանէր զգեղատեսիլ գլուխ իւր
 'ի վերայ լանջայ իմոց: Արդէն ճաշակեալ էի
 ես 'ի վերայ դողդոջուն շրթանց նորա զարբե-
 ցուցիչ ըմպելին սիրոյ. ամբարձեալ զաջ իմ՝
 յերկինս յայնոսիկ սոսկալի վայրս անագատի, և
 կանգնեալ առաջի յախտենական հոգւոյն՝ փա-
 թութեալ ունէի 'ի գիրկս իմ զցանկալին հո-
 գւոյ իմոյ. ո՛վ շքեղ հանդերձանաց հարսանեաց՝
 որ պատշաճ երևիք շնորհազարդել զկատա-
 րեալ սէր մեր, և արժանապէս հանդիպիք մե-
 րոց թշուառութեանց: Ո՛վ հոյակապ անտառք՝
 որք խոնարհեցուցանէք զգերամբարձ գլուխս
 ձեր 'ի վր մեր 'ի կամալս գալարագեղս զօրէն
 ամպհովանոյ ամուսնական անկողնոյ. ո՛վ բոցա-
 կիցեալ սարոյք՝ որք երևիք իբրև ջահք հիմնա-
 կանք, ո՛վ կարկաջուն վտակք, ո՛վ բարձրաձայն լե-
 րինք, ո՛վ ասարկու և գերամբարձ բնուի, ո՛չ կա-
 րէիք զվայրկեան մի և եթ ծածկել 'ի զարհուրելի
 խորհուրդս ձեր զերջանկուի առնմիոյ միայնոյ:

Ատալա ներհակելով անգոր ընդդիմութիւն
 կամէի ես ճաշակել զերջանկութիւն զմայլական.
 սակայն յայտ վայրի շանթ կայծական յորայեալ
 յայնմ աղջամդին տերոջ՝ յերկիր կործանեաց
 զսարոյ մի առաջի մեր երկոյրուց : Անտառն լը-
 ցաւ ծծմբային ծխով . և մեք ահաբեկեալ դիմօք
 սկսաք փախչիլ : Ո՞ր մեծի զարմայմանա : յոր-
 ժամ լռութիւնն ընդմիջեաց զսոսկալի շաչիւն
 շառաչման բնութեան , լուաք մեք զձայն զան-
 դակի միոյ : Ունկն մատուցանէ աք մեք մտադրութիւն .
 և ահա իսկ և իսկ լսելի եղև Տաշիւն շան միոյ .
 ձայնն սակաւ առ սակաւ մերձեցաւ . շունն ե-
 րևեցաւ և սկսաւ խաղալ , ընդոտնուլ և լիզել
 զոտս մեր ՚ի խոյութենէ : Մեծարոյ ձգնաւոր
 մի գայր զկնի շան ՚ի խաւար մթութեան՝ ու-
 նելով զբապտեր մի ՚ի ձեռին իւրում : Օրհ-
 նեալ լիցի տեսչութիւն երկնաւորին՝ աղաղա-
 կեաց նա՛ յորժամ ակնարկեաց ՚ի մեզ . ընդեր-
 կար որոնէի ես զձեզ . սովոր է մեզ յարաժամ
 հարկանել զզանգակն մեր ՚ի գիշերի ՚ի մրրկա-
 յոյզ ժամանակի առ ՚ի կոչել զձանապար-
 հորդն թախառական : Ըստ օրինակի միայնա-
 կեաց եղբարոյ մերոյ բնակելոյ ՚ի լերինս Ապեան
 և Լիբանանու , դւսուցանեմք մեք շանց մերոյ եր-
 թալ զՏես շաղայ թախառական օտարակա-
 նաց յայսմիկ անասպատի : Ըռն իմ՝ էառ զՏոբ





ձեր յորժամ մըրիկն սկսաւ, և առաջնորդեաց
ինձ յայտ տեղի: Ո՛վ բարերար Տէր իմ, զի՞-
արդ դեռ ահա սակ են նոքա. ո՞ր վ տառապեալ
մանկանցս, զի՞արդ վշտագնեալ են նոքա յայտ-
տիկ վայրս անապատի: Եկնայք մանկո՛ւնք իմ,
բերեալ եմ ես առ ձեզ զմորթ արջու. այս
պիտանի եղիցի քեզ ո՞վ կոյս դու. ահա սա-
կաւիկ մի գինի ՚ի դոմի իմում՝ որ զօրացուսցե-
զսիրտ քո: Օրհնա՛ւ լիցի ամենակա՛ն յամենայն
գործս իւր. մեծ է ողորմութիւն նորա. և ան-
հուն է բարերարութիւն նորին:

Ատալա արկեալ զանձն իւր յոտս ճգնաւոր-
ին ասաց ո՞վ հայր արթից, ես քրիստոնէայ
եմ. Տէր առաքէ զքեզ աստ առ ՚ի փրկեւ
զիս: Ատալա դադարեցաւ ՚ի խօսելոյ. ես ո՛չ
կարէի իմանալ զբանս ճգնաւորին. գթութիւն
նորա այնքան զարմանալի էր և գերբնական, մինչ
զի կարծէի զանձն իմ լինիլ յերազի: Ի ձեռն
լուսոյ լապտերի նորա տեսանէի զի ձիւնա-
փայլ գէսք և մօրուսք ճգնաւորին հոսէին
զկաթուածս անձրեաց. երեսք, ձեռք և ոտք
նորա վիրաւորեալ էին տառասկօք: Ո՛վ ծե-
րունի դու՝ ասացի մնա՛ զի՛նչ պիտի սիրտ գոյ՛ն
քեզ, որ ո՛չ երկեար ՚ի վտանգէ կայծակնահար
լինելոյ: Արժան է՞ ինձ երկն չի՛լ պատասխանեայ
նա անձկանօք. յորժամ տեսանեմ զհամարսեդս իմ՝

Ի վտանգի, և մարթ է ինձ օգնել նց ի վտանգաւոր վիճակի նոցին: Աւաղ՝ եղէց ես ողորմելի ծառայ Քրիստոսի: Այլ սակայն՝ ասացի ես ձգնաւորին՝ գիտես՞ զի ոչ եմ ես քրիստոնեայ:

Ո՛վ պատանի՝ կրկնեաց անդրէն ձգնաւորն՝ Տարցի՛ արդեօք թէ զինչ կրօն պաշտես դու: Քն ոչ երբէք ասաց թէ արին իմ սրբեսցէ պայս ոք և ոչ զայն ոք: Մեռաւ նա միապէս վնձրէից և Տեթանոսաց. և ի մեզ՝ յողորմելի մահկանայութեան զոչինչ ետես նա, բայց միայն զեղբարս: Իռզնաքեայ իմն է օգնականութիս այս՝ զոր այժմ քեզ մատուցանեմ. յայլ գաւառս մարթ է քեզ Տանդիպիլ մեծագոյն օգնականութեան: Այլ փառք նուիրեսցի Տեառն ԱՅ, և ոչ քահանայից: Չի՛նչ եմք մեք քահանայքս. ո՛չ ազաքէն անզօր մարդիկ և խոնարհ գործիք՝ զոր Ամնակարողն ի գործ զնէ առ ի կատարել զգործս իւր: Ո՛վ է ուրեմն վատասիրտ զօրականն այն՝ որ անարգաբար թողու լքանէ զսպարապետ իւր, յորժամ նա խաչն ի ձեռին իւրում՝ ճակատ նորա պսակեալ փշովք՝ աճապարեալ երթայ յօգնութի տառապելոց:

Բանք Տինաւուրց ձգնաւորին թափանց մտին ի սիրտ իմ. և արտասուք զարմայման և երախտագիտութեան սկսան բղխել յայնչայ իմոց: Իմ

սիրելիքի՛ւմ Նորահաւատք՝ ասաց միտմանն՝ ես
 եմ հոգեւոր վերատեսուչ ոմանց՝ ՚ի վայրագա-
 սուն եղբարց ձերոց յայսոսիկ անապատս բնակե-
 լոց . խուղ իմ մերձ է աստի՛ գոլով կառու-
 ցեալ ՚ի վր ընթերակայ լերին : Եկայք զկնի իմ
 և հանգերո՛ւք ՚ի բնակարանի իմում . և թէպէտ
 և ոչ գտջիք անդ զփափկութիս կենաց , սակայն
 գտջիք զապաստանարան մի ընդդէմ երեսաց
 մրրկեալ եղանակի . և պարտիք գոհուիս նուի-
 րել Այ բարձրելոյ . քանզի աւա՛ղ՝ արդ բա-
 զու՛մք գոն յանապատի՛ որք կարօտին անպահով
 անպաստանարանի :

ՀՈՂԱԳՈՐԾ ՔՆ :

Այնքան մեծ է պայծառութիւն խղճի մտաց
 առն այնորիկ բարեպաշտի , մինչ զի ոչ երբէք
 մերձենամք առ նա առանց մասնակից լինելոյ
 քաղցրահոտ խաղաղութեն՝ որ բուրէ ՚ի սրտէ
 և ՚ի մտաց նորա . մինչ բարեբարոյ Ճգնաւորն
 խօսէր զբանս իւր , զիջույանէր զհակառակ
 կիրս յարուցեալս ՚ի հոգւոջ իմում . և ոչ այս-
 չափ միայն՝ այլ և մրկայոյզ տարերքն երևէ-
 ին խաղաղեալ ՚ի ձայնէ նորա : Մըրիկն դադա-

րեցաւ . և մեք իսկ և իսկ կարոյաք թողուլ
 զտեղի առանձնութեան մերոյ : Մեկնելով յան-
 տառէ անտի՛ սկսաք ՚ի վեր ելանել ՚ի լեառն
 մի ժայռաւոր և դժուարելանելի . շունն ոստ-
 նոյր և խաղայր առաջի մեր . և տաներ ՚ի վր
 շերտի միոյ զլապտերն շիջուցեալ . Ատալա յե-
 ցեալ կայր ՚ի վերայ բազկայ իմոյ . և մեք ըզ-
 հետ երթայաք միտոնարին՝ որ ժամանակէ ՚ի
 ժամանակ արկանէր զաչս գթութեան և սիրոյ
 ՚ի վերայ դեռադալար հասակի և ողորմելի
 վիճակի մերոյ : Մատեան մի կախեալ կայր
 զպարանոցէ նորա . և ունէր նա յաջ իւր ըզ-
 գաւազան մի սպիտակ . բարձր էր նա հասա-
 կաւ . գունատեալ այտք նորա խոռոչացեալ է-
 ին հոգովք և պահօք . գծագրութիւն դիմաց
 նորա էր պայծառ և անխարդախ . շունէր նա
 զանհոգի կերպարանս առն միոյ անզգայ եղելոյ .
 և խորին կնճռանք ճակատու նորա ցուցանէին
 զնշանս ուժգին կրից նուաճելոյ առաքինութբ
 և սիրով ԱՅ և ազգի մարդկան : Մինչ նա ան-
 շարժ արձանացեալ կայր առաջի մեր , աչք նորա
 յառեալ կային ՚ի վերայ երկրի . արծուային
 ունչք նորա , ձիւնափայլ մօրուսք նորա , մեծա-
 րոյ կերպարան նր կորացեալ էին իբրու թէ հա-
 սեալ մերձ ՚ի դրունս գերեզմանի . և նա երե-
 կեր իբրև ոգի այնր ժամանակի . ովոք նման ինձ

տեսեալ է զՏայր Աբրին ընթանալ յանապատի
գաւազանաւ և ժամագրքաւ իւրով, կարէ ձեա-
յուցանել զՃշմարիտ պատկեր քրիստոնէի միոյ,
որ ընթանայ յերկրաւոր ճանապարհորդութի իւրե

Չկնի խուն ինչ վտանգաւոր ճանապարհոր-
դութեան՝ որ տեսայ իբրև զկէս ժամ միայն՝
անցանելով մեր ՚ի խորտաբորտ տեղիս ՚ի վերայ
լերին՝ ժամանեցաք մեք ՚ի խուղ Տինաւուրց ճրգ-
նաւորին, որոյ դրունքն գրեթէ փակեալ էին
բաղեղաւ և խոնաւ ջերանմոնդաւ, (45) զորս
Տեղեղք անձրևայ թափեալ էին ՚ի քարանց
՚ի տեղին յայն: Ոչինչ գոյր ՚ի քարանձաւի
անդ, բայց միայն փսիաթ մի Տիւտեալ ՚ի տե-
րևոց պապիայի, դդում մի վասն հանելոյ ըզ-
ջուր, քանի մի փայտեղէն անօթք: և օձ մի
ընտանի. և ՚ի վերայ քարի միոյ՝ որ էր սեղան
ձգնաւորին՝ տեսի զմատեանն քրիստոնէից և
զպատկեր խաչելութեան:

Ողորմած ձգնաւորն փութայաւ լուցանել ըզ-
հուր ՚ի քանի մի չորայեալ բաղեղայ. ծե-
ծեայ նա զյորեան ինչ Հնդկայ ՚ի մէջ երկուց
քարանց. յօրինեայ նովաւ զբլիթ մի. եփեայ
զայն ՚ի վերայ կայծականց հրոյ. և յորժամ
բլիթն սեւայաւ ՚ի հրոյ անտի՝ մատոյց նա զայն
մեզ հանդերձ ընտրելագոյն մասամբ ընկուզի
յանօթ մապելի: Յորժամ գիշերն սկսաւ պար-

զիւ և հանդարտիւ, ծառայ մեծազօր հոգւոյն
 հրաւիրեաց զմեզ առ 'ի նստիւ 'ի վերայ քա-
 ըի միոյ հանդէպ քարանձաւի իւրոյ . մեք գնա-
 ցաք զկնի նորա 'ի տեղին յայն՝ յորմէ մ'արթ-
 էր տեսանել զկարի ընդարձակ տեսարան :
 Ամպքն ցրուեցան յարևելս կոյս . տոջորեալ ան-
 տառն բոցակիզէր 'ի հեռուստ . անտառ մի
 արոյից արմատաքի խլեալ 'ի մրրկէն՝ անկեալ
 կայր առ ստորոտով ժայռին . և յորդահոս
 գետքն ընթանային ուժգին . և թաւալեալ տա-
 նէին լէ սաստիկ կոհակս իւրեանց զբունս ծա-
 ռոյ, զգիակունս վայրենի գազանաց, և զսա-
 տակեալ ձկունս . որոյ արծաթափայլ թեփքն
 փայլեալ փողփողէին 'ի վերայ երեսաց ջրոյ :
 'ի մէջ այսր սոսկալի տեսարանի Ատալա պատ-
 մեաց զյաւագին անցս կենաց մերոյ մեծարոյ
 արբոյն լեռնակեցի . բարերար սիրտ նորա տրտ-
 մեցաւ . և արտասուք քրիստոնէական կարեկցու-
 թեան 'ի վայր հոսէին 'ի խոռոչացեալ այտից
 նորա : Սիրելի մանուկ՝ ասաց նա ց'Ատալա՝
 պարտիս նուիրել զտառապանս քո այնմիկ ԱՅ,
 փառայ և զօրութեանց՝ որոյ վասն արդէն կը-
 ըեալ ես դու զայսքան բազմապատիկ նեղութիս
 և զտառապանս : Նա դարձուսցէ զանդորրուի
 վշտագնեալ հոգւոյ քում : Ահաւասիկ ան-
 տառքն ծխին . հեղեղքս այսոքիկ ցամաքին .

ամագքն աստ և անդ ցրուին . կարծե՞ս դու զի
 նա՛ որ կարէ ցրուել և ՚ի բայ մերժել զկա-
 տաղի մրրիկս՝ ո՛չ կարէ բժշկել զսաստկագոյն
 վէրս սրտի մարդոյ : Եթէ դու ո՛չ կարիցես
 դռանել զբարեգոյն տեղի ապաստանի , կերտե-
 ցից վասն քո զխրճիթ մի ՚ի միջի բարեպաշտ
 ժողովրդեանն այնորիկ՝ զոր բարեբաղդութեամբ
 ամեմ ՚ի ճանապարհս ՔԻ : Հրահանգեալ ու-
 սուցից ես զՃակտոս . և ամուսնացուցից զքեզ
 թ նմա , յորժամ լինիցի նա արժանի ամուսնական
 կենակցութեան քում :

Համբուրեցի ես զոսո ճգնաւորին բերկրութե
 արտի . սակայն Ատալա գունատեցաւ իբրև զկեր-
 պարան մահու : Հինաւորց ասպն ջականն մեր ամ-
 բարձ զիս ՚ի վեր . և ես տեսի զի երկոքին ձեռք
 նորա էին չարաչար վերաւորեալ : Ատալա՛ որ
 իսկ և իսկ իմացաւ զպատճառ նր՛ աղաղակեաց
 ասելով , ո՛վ անագորոյն բարբարոսութե վայրա-
 գացս : Ճգնաւորն ընդմիջեաց զբանս նորա ժպտ-
 մամբ քաղցրութե . դո՛ւստր՛ ասաց նա՛ զի՛ ոչ եմ
 տառապանք և վիշտք իմաւ բաղդատութե վրչ-
 տաց երկնային Տեառն իմոյ : Եթէ կուագաշտ
 Հնդիկքն այսպէս չարչարեցին զիս , աչք նոցա
 էին խաւարաւ կտիուցեալ . և Աճ բացցէ զնս .
 ես յօժարութեամբ և անկեղծութե թողում
 զյանցանս կուրացեալ հալածչաց իմոյ : Ոչ կա-

բելով բնակիլ 'ի բնածին երկրի իմում՝ ուրա-
 նօր գերապայծառ թագուհի մի հաճեցաւ ակն-
 արկել յայսոսիկ դուզնաքեայ նշանս առաքելութե
 իմոյ՝ կարէի՞ ստանալ զմեծագոյն պարգևա-
 տրութիւն քան զարձակութիւնն, զոր ընկալայ 'ի
 գլխաւորէ կրօնին մերոյ, առ 'ի նուիրել զերկ-
 նային պատարագն այսոքիւք պատառեալ ձեռօք:
 Չկնի ստանալոյ իմոյ զայսպիսի ծայրագոյն պար-
 գևս շնորհաց՝ ոչինչ պակասէր յինէն, բայց
 միայն առ 'ի ջանալ և լինիլ առաւել արժանի
 այնմիկ շնորհաց. սմին իրի դարձ արարեալ եկի
 վերստին յանապատս յայսոսիկ առ 'ի անցուցա-
 նել զմնայեալ աւուրս կենաց իմոյ 'ի ծառայութե
 հետն իմոյ ամենակալին: Գրեթէ երեսուն
 ամք են՝ յորմէ հետէ բնակիմ յայսոսիկ յանա-
 պատս. և իբրև քսան և երկու ամք են՝ յորմէ
 հետէ կեամ յայսմիկ խրճթի: 'ի ժամանելն իմ
 աստանօր՝ հանդիպեցայ ես միայն քանի մի թա-
 փառական աղգաց. որոց կեանքն էին ողորմելի և
 թշուառական. և վարք և սովորութիք նոցա
 էին գաղանաբարոյ: Ասուցի ես նց զբանն ԱՅ,
 և բարք նոցա սակաւ առ սակաւ փոխարկեցան
 'ի սկզբունս քաղաքականութեան: Չարդիս բը-
 նակին նոքա 'ի միասին իբրև զգերդաստան մի
 քրիստոնէից առ ստորոտով լերինս այսորիկ:
 Մինչ ես ցուցանէի նց զճանապարհ փրկութե,

Չանայի հրահանգել զնոսա յայնոսիկ արհեստս
 որք կարի հարկաւոր են մարդկայինս կենցաղա-
 վարութեան՝ միշտ խնամ տանելով առ ՚ի պա-
 հել զնոսա յայնմիկ նախնական պարզմտութե-
 որ կայուցանէ զձշմարիտ եւ Չանկութիւն : Եր-
 կնչելով զի ներկայութի իմ խափանարար լիցի
 գործոց նոցա՝ առանձնացայ ես յայսմիկ քարան-
 ձաւի . ուրանոր գան նորքա առ ՚ի խորհուրդ հար-
 ցանել յինէն : Աստանոր հեռի գոլով իմ ՚ի հա-
 ղորդակցութի մարդկան՝ մտախոհ լինիմ զանհուն
 բարերարութի Ամենակալին յայսոսիկ անսահ-
 ման վայրս առանձնութեան . և աստանոր համբե-
 րութեամբ ստատեալ մնամ մօտալուտ գալստեան
 մահուան :

Սրբազան ճգնաւորն սուարտեալ զպատմութի
 իւր՝ ՚ի գուձս անկաւ ՚ի վերայ երկրի . և մեք
 ևս ՚ի ծունր իջաք ըստ նորուն օրինակի . աղօ-
 թէր նա բարձրաձայն . և Ատալա տայր նմա զու-
 ղերսախառն պատասխան : Աղօտ կայծակունք
 փայլատակէին յարեւելս կոյս . երեք պայծառ-ա-
 փայլ արեգակունք (46) ցոլանային յարեւմուտա-
 կոյս . ոմանք թափառական վայրենի գազանք եր-
 ևէին շրջիլ ՚ի վերայ ծայրից սեպուցեալ ժայ-
 ուից . և տունկքն ամբառնալով զգլուխս իւր-
 եանց խոնարհեալս յերկիր ՚ի սաստկութի մըրկին՝
 բանային զխոնարհ կողոնս իւրեանց զուարթացու-

ցիչ հողմոյն երեկորին : Մտաք մեք 'ի խուղ
 միայնակեցին . հայր Աբրին սիրեաց զանկողին
 մի յօրինեալ 'ի մամուոց նոճեաց վասն Ատալայի :
 Նուազեալ աչք նորա արտասանէին զխուղութի
 մտաց նորա . հայեր նա 'ի բարեպաշտ այրն այն
 իբրու թէ կամելով յայտնել նմա զծածուկին չ
 զոր ներկայութիւն իմ , ներքին ամօթխածուի ,
 կամ անպիտանութի խոստովանութե ծածկուեն
 հեղձամուղձ առնէին առանց յայտնելոյ 'ի վերայ
 գողգոջուն շրթանց նորա : Աւա՛ղ յոյս իմ լի
 լինելով եռանդեամբ՝ համարէի զնուազութի
 անձին նորա յառաջացեալ 'ի ջախագանց վաս-
 տակոյ : Չկնի գնալոյ իմոյ առ 'ի հանգչիւ
 գիւրութեամբ քնոյ , տեսի զի յարեալ Ատալա
 առ 'ի որոնել զձգնաւորն . բայց որովհետե
 նա տուեալ էր նմա զանկողին իւր , յայն սակս
 գնացեալ էր առ 'ի նշմարել զպայծառութի
 գիշերոյ և երկիրագագանել ԱՅ իւրում 'ի վր
 գագաթան լերին : Ճգնաւորն ասաց ինձ 'ի վաղ
 տեան աւուր , թէ զիարդ սովոր էր ինքեան ան-
 ցուցանել զողջոյն գիշերս ևս և 'ի ձմեռնայ-
 ին եղանակի՝ զարմանալով 'ի վերայ ծառոց ան-
 տառաց , որք շարժէին զտերեւաթափ ծայրս իւ-
 րեանց , հիանալով ընդ աղջամղջին ամպս՝ որք
 երթեկս առնէին 'ի վերայ լանջաց երկնից՝
 տաստանեալք 'ի մրրկայոյլ հողմոց , և զարմայ-

մամբ նկատելով զփրփրացեալ հեղեղօ ջրոյ՝
որք կարկաջելով հոսէին ՚ի մէջ անապատին ։
Ատալա ընդունայն որոնեալ զձգնաւորն՝ դար-
ձաւ անդրէն յանկողին իւր . և ապա համակե-
ցաւ նա ՚ի նիրհումն քնոյ ։

՚ի միւսում առաւօտու զարթուցեալ իմ ՚ի
քաղցրաձայն եղանակաց կարդինալ անուն թըռ-
նոյ և այլոյ փետրազարօ բնակչաց օդոյ՝ որք
նստէին ՚ի վերայ տնկոյ և դափնեաց շրջապա-
տելոյ զխրճթաւ ձգնաւորին՝ քաղեցի ես զժա-
ղիկ մի ՚ի մագնօլիայէ միոջէ . և եդի զայն տա-
կաւին թացեալ ցօղով ՚ի վր անկողնոյ ննջեալ
Ատալայի՝ յուսալով զի ըստ օրինի հաւատոյ
մերոյ , հոգի ուրումն երեխայի վախճանելոյ ՚ի
վերայ լանջայն Ատալայի , նշանակեսցէ զշիթ մի
՚ի պայծառտիայլ կաթուածոյ ցօղոյ անտի . և
բարեգուշակ երազ ինչ ածցէ զայն ՚ի կուրծս
սիրականին իմոյ ։ Յետ այնորիկ գնացի ես ՚ի
խնդիր ասանջականին իմոյ . գտի զնա իսկոյն .
և տեսի զաղաբողոն նորա պարուրեալ և ժա-
մագիրք իւր ՚ի ձեռին՝ նստէր նա ՚ի վերայ բնի
վաղէմի սարոյի միոյ . խոստացաւ նա ածել զիս
՚ի գաղթականն նորահաւատ քրիստոնէից՝ մինչ-
դեռ Ատալա կայր տակաւին գրկեալ ՚ի լանջս
քնոյ . հաւանեցայ ես զյառաջագրու ՚ի նորա . և
մեք երկօրեանս ելեալ գնացաք անտի ։

Մինչ ի շահեաք մեք ՚ի ստորոտ լերին՝ տեսի
 ես զբազմութիւն կառնեաց, յորոյ վերայ անե-
 րևոյթ ոգիքն երևեին գծագրեալ զխորհրդա-
 ւոր նշանագիծս ինչ: Ճգնաւորն քանդակեալ էր
 ինքնին զայնոսիկ նշանագիծս. գրուածքս այսոքիկ
 էին քաղուածք ՚ի գրոյ վաղեմի բանաստեղծի մի-
 ոյ՝ Հովերոս անուանելոյ, և առակք առաւել
 վաղեմի իմաստնոյ միոյ՝ Սողոմոն կոչեցելոյ. խոր-
 հրդաւոր համաձայնութիւն իմն գոյր ՚ի մէջ ի-
 մաստութեան ժամանակաց. այսինքն՝ գծագրեալ
 տողքն այնոքիկ՝ պատեալք մամուլք. սուրբն այն-
 որ քանդակեաց զնոսա, և կառնիքն այնոքիկ՝ որք
 ՚ի մէջ այսոցիկ անազատաց եղեալ էին նմա պի-
 տանի փոխանակ գրոյ:

Անուն նորա, հասակ նորա և թուական առ-
 ուաքելութեան նորին ևս գծագրեալ էին ՚ի վր
 եղեգան միոյ առ ստորոտով ծառոյ. մինչ ես
 զարմայեալ կայի ՚ի վերայ դիւրաբեկութեան
 այսորիկ յիշատակարանի՝ հայրն աղօթից ասաց՝
 տեսցէ այդ առաւել քան զկեանս իմ. և յա-
 րածամ առաւել արժանաւոր լիցի քան զդուզ-
 նաքեայ արդիւնս վաստակոյ իմոյ:

Ժամանեցաք մեք վաղվաղակի ՚ի հովիտ մի
 խորին, ուրանօր տեսի զկարի զարմանալի իմն տե-
 սարան. այդ էր կամուրջ իմն բնական զօրէն նր՝
 զորմէ լուեալ ես դու ՚ի Վերգինիա: Մար-

դիկ՝ օրիւնքի մանուկ՝ մանաւանդ Եւրոպայիք
 Տեառնն օրինակի բնութե . սակայն որքան շն-
 ջին՝ որքան անկատար է Տեառնողական ջանասի-
 րունի նոյն : Հեռի յոյժ Տեառն են մարդիկ յօրի-
 նակե բնութե , յորժամ բնութն ևս երևի օրի-
 նակել զգործս նոյին : Յայնժամ բնութին ձգե
 զկամուրջս ՚ի վր բարձրաբերձ լերանց , կախե
 զճանապարհս ՚ի վր ամպոց , քանդակե զլէմս
 ՚ի ձև սեանց , խոռոչե զծովս ՚ի ձև լճակաց ,
 և պայթուցանե զծոցս ՚ի ձև խրամոց :

Այլաք մեք ընդ զարմանալի կամարանս այնու
 իկ . և ես տեսի զնոր և զմայրողական իմն տեսա-
 րան . քանզի դեպերեալ իմ ՚ի Տրաշից ՚ի Տը-
 րաշս՝ տեսի զի տեղին այն եր գերեզմանատուն
 քրիստոնէայ վայրագաց . կամ ըստ յորջորջման
 նոցա ասացից , *անբարձր հոհումն շքնաւորն*
 Թոյլ տարլ Նոցա Թաղել զմեռեալս իւրեանց
 ըստ օրինակի նախնի սովորութեանց նոցա՝ կա-
 ուուցեալ եր զխաչ մի առ ՚ի սրբադան գոր-
 ծել զտեղն . * գետինն այն երևե եր նման հասա-

* Հայր Աբրի՛ Տեառեալ եր օրինակի կլնա-
 ւորայն Յսեան կարգի որ ՚ի Չին . որք Թոյլ
 տային նորահաւատ եղբարց իւրեանց Թաղել
 զմեռեալս իւրեանց ՚ի մեջ պարտիզայ՝ ըստ ո-
 րում սովորութիւն է նոցա ամենեցուն :

րակ դաշտայն հնձոյ՝ բաժանեալ ՚ի պէսպէս
 վիճակս ըստ թուոյ գերդաստանայ անտի ։ Իւ-
 րաքանջիւր տեղի ծածկեալ էր սարսիինայիւք՝
 որ տարբեր էին ըստ տարբերութե հաճութե
 և զգացուածոց նոցա, որք տնկեալ հաստատել
 էին զսարսիինայն զայնոսիկ ։ վտակ մի ման
 առեալ պարայածէր շուրջ զանտառօքն, և
 կոչիւր այն զսոյ իւրազո-բեռն ։ Այս մտայնա-
 ծին ապաստանարան հոգւոց փակեալ էր յա-
 րեւելից կուսէ բնական կամրջաւն՝ ընդ որով մեք
 անցեալ էաք ։ շորք լերանց շրջապատէին զայն
 ՚ի հիւսիսոյ և ՚ի հարաւոյ ։ միայն բաց էր տը-
 ւմտեան կողմն նորին՝ հովանաւորեալ յանտա-
 ռէ միոջէ վաղէմի սարոյից ։ Խորտաբորտ բունք
 նոցա զարդարեալ էին կանաչ երանգաւ ։ և երե-
 էին իբրև միապաղաղ սիւնք՝ որք էին իբրև հոյ-
 ալիսայ նախադուռն մի առ այն պայծառաշուք
 տաճարն մահուան ։ Ահա որ ձայն ինչ նման
 հեռաւոր եղանակայ երգեհոնայ քրիստոնէական
 եկեղեցեայ՝ հնչէր ՚ի մէջ անտառին ։ սակայն
 յորժամ մերձենայի ՚ի արբազան տեղին յայն, և
 միայն լսէի զսգաւոր երգս թռչնոց՝ որք երևէին
 եղանակել զահաւոր նուագս ՚ի վերայ մե-
 ռելոց ։

Եկեալ մեր արտաքս յանտառայ անտի՝ իսկ
 և իսկ տեսաք զգիւղն քրիստոնէից կառուցեալ

'ի վերայ եզերայ լճի միոյ 'ի միջի ծաղկաւեա
 մարգագիտնոց . դուռն մի կենդանի կաղնեաց
 և մազնոլիայից առաջնորդէր 'ի նոյն և 'ի տե-
 րանել Հնդկաց զվաղէ մի հօտապետ իւրեանց
 'ի բայ թողին զգործ իւրեանց . և փութացեալ
 եկին հանդիպիլ նմա և Ռմաթ յարգութի համ-
 բուրեին զհանդերձս նորա . այլք սգնէին ան-
 զօր գնացից նորա . մարք բարձրացուցանէին ըզ-
 մանկունս իւրեանց 'ի գիրկս իւրեանց առ 'ի ցու-
 ցանել նոցա զայն Քի՛ որոյ աչքն թացեալ
 էին հայրական արտասուօք . մինչ գնայաք մեք
 յայնմ վայրի՛ հարցանէր նա զամենայն զպարա-
 գայս գաղթականին այնորիկ . ոմանց խրատս տայր .
 զոմանս մեղմով յանդիմանէր . խօսէր զկիթոյ և
 զհնձոյ . պատմէր զհրահանգութի մանկանց և
 զմխիթարութի կարօտաւոր տառապելոց . միշտ
 յուշ առնելով նոցա զողորմութիւն և զանհուն
 բարերարութիւն Այ՛ : Գնայաք մեք անտի հան-
 գերձ բարեպաշտ ժողովրդովքն . և հասաք վաղ-
 վաղակի 'ի գերանբարձ խաչ մի՛ հաստատեալ
 'ի վերայ ճանապարհին : Անդանօր ծառայ Ամե-
 նակային ըստ սովորութե կատարէր զխորհուրդս
 կրօնին իւրոյ : Սիրեցեալ նորահաւատք՝ ասայ
 նա շրջապատեալ ամբօխին՝ եղբայր և քոյր մի
 են արդէն ժամանեալ . և 'ի յաւելումն երջան-
 կութեան ձերոյ տեսանեմ զի տեսչութին յե-

բեկեան աւուր զէր ծոյց զդաշտս ձեր 'ի վնա-
 փուց մըրիին . ահա ձեզ երկու հզօրեղ առիթք
 փառաբանելոյ զԱՅ և շնորհակալ լինելոյ զբա-
 րերարուհի նորա : Մատուցո՛ւք ուրեմն զպատա-
 րագն երկնային . և իւրաքանչիւր ոք 'ի մէջ
 պաշտօն մատուցէ նմա բարեպաշտ մտօք , ջեր-
 մեռանդն հաւատով , անհուն երախտագիտութե
 և խոնարհ սրտիւ :

Ապա քահանայն էարկ զիւրև զսպիտակ պատ-
 մուճան ինչ յօրինեալ 'ի կեղևոց թթեւոյ . և
 եհան արտաքս զսուրբ անօթս 'ի խորանէն որ
 առ ստորոտով սրբոյ խաչին . անտաշ քար մի
 երևէր անդ փոխանակ սեղանոյ . ընթերակայ
 վտակ մի մատակարէր զջուր . և վայրի խաղող
 ինչ պարզեէր զխորհրդաւոր գինին : Մեք ա-
 մենեքեան 'ի ծունր խոնարհեցաք 'ի մէջ բարձ-
 րայեալ խոտոյն . և արարողութիւն գերագոյն
 խորհրդոյն սկսաւ 'ի մէջ անապատին :

Ծիծաղագէմ առ աւօտն ծագեալ 'ի վերայ
 լերանց՝ բացեալ տարածէր զոսկերանք և զծի-
 րանագոյն բոլորակ իւր 'ի մէջ արևելեան երկ-
 նից : Արեգակն պայծառափայլ ելեալ 'ի յոր-
 դաբուղի հոսանայ լուսոյ՝ նշողէր պաւաջին
 ճառագայթս իւր 'ի վերայ մաքրագործեալ նըշ
 խարին՝ քահանայն գոյով վերայեալ մտօք
 յերկինս : Զիարդ մեծ են պարզեքն , զիարդ

պայծառ է պաշտօն քրիստոնէական կրօնին և
 Հինաւուրց ճգնաւոր մի էր սրբակրօն պաշտօ-
 նեայ նորա . մամուլապատ վէմ մի էր սեղան նր-
 անապատն էր եկեղեցի նորա . և անմեղ վայրագ քն
 էին Ժողովուրդ նորա . Արդարեւ Տաւառամ
 աներկ միտ մտօք , զի յորժամ անկաք մեք գետ-
 նամածեալ 'ի վերայ երկրի , ասեղ խորհուրդն
 այն կատարեցաւ . և Տէր ԱՅ երկնից հաճեցաւ
 իջանել յանառան յայն , քանզի զգացի զնա իջա-
 նել 'ի վերայ սրտի իմ' :

Չկնի աւարտման ամային պաշտամանց՝ ուր
 միայն ո՛չ տեսի գողուսոր Կոպեղին՝ ելեալ գը-
 նայաք անդրէն 'ի գեօն . անդանօր վերստին
 զմայլեալ էի 'ի վերայ հրաշի կրօնին քոյ՝
 տեսանելով զքարեյարմար խառնումն ընկերակ-
 ցական և անքաղաքական կենաց :

Հուպ առ վաղեմի անտառ մի տեսի զհունձա
 հասեալ ցորենոյ . ցորեանն շարժ էր զոսկերանգ
 հասկո իւր . անդանօր յառաջագոյն կանգնեալ
 կայր կաղնի մի վաղեմի . և ամառնային տոյցակ մի
 ցորենոյ բուսեալ էր 'ի տեղուջ ծառոյ տասն
 օքարուց . շուրջանակի երև էին բոցակիցեալ ան-
 տառք՝ որք բանային զճանապարհ վն հերկագոր-
 ծութե արօրին՝ որ յամր յամր թաւալէր 'ի մէջ
 պատառեալ արմատոյնց : Արատեսուչ չափողք
 երկարաձիգ շղթայիւք չափէին զտարածութիւն

անապատին • և միջնորդ դատարարք վճռեին
 զառաջին ատայուածս իւրաքանչիւր գերդաստա-
 նի • Թւ չունքն տեղափոխ առնէին զբոյնս իւր-
 եանց • և որչ վայրի գազանայ փոխիւր 'ի խլր-
 ճիթ մի • Սալ դարբնայ Տնչէր ուժգին 'ի բոցա-
 փայլեալ գործարանի երկաթագործայ • և նուա-
 զեալ արձաքանգն մինչ կրկնէր զհարուածս
 պատարուղ տափարին • կորնչէր 'ի միասին ընդ
 անտարայ՝ որք լեալ էին պատսպարանս նորին •

Դեգերէի ես բերկրութեամբ սրտի 'ի մէջ
 այսոցիկ վայրենի տեսարանայ՝ գորով զուարթա-
 ցեալ խոկմամբք Ատալայի և զմայլեցուցիչ ե-
 րազովքն՝ որք հանդարտեցուցանէին զսիրատարի
 սիրտ իմ • Չմայլեալ էի ես ընդ յաղթանակուի
 քրիստոնէսկան հաւատոյ 'ի վերայ վայրագա-
 առն կենայ • տեսանէի զմարդ փոխեալ 'ի քա-
 ղաքականութիւն շորհօք կրօնի • սգնական լի-
 նէի նմա 'ի հարսանիս իւր ընդ երկրի • փոխա-
 դարձ դաշնակցութեամբ մարդ ես երկրի գբըր-
 տուս երեսայ իւրոյ և նա խոստայալ մատա-
 կարարել մարդոյ զառատ արմտիս • և ծածկեալ
 ամփոփել զյրտայեալ մարմինս նորս • յորժամ
 այլ ոչ ևս մնացէ 'ի նմա շունչ կենդանական •

Երեւայ մի ածաւ առաջի միտնարին՝ որ մկր-
 տեայ զնա 'ի մերձակայ վտակին 'ի մէջ անու-
 չահոս յասամանայ • մինչդեռ 'ի միւս կողմանէ

որդի մի կոծ արարեալ 'ի վերայ գունատեալ
մարմնոյ սիրեցեալ հօր իւրոյ՝ երթայր ամիփո-
փել զսուրբ նշխարս նորա յանտառս մահուանս
Պատանի և պատանուհի ոմն ընդունէին
զօրհնութիս պսակի ընդ ստուերախիտ կաղնեալ
միով . գնացաք մեք առ 'ի զէտեղել զնոսա 'ի
նորոգ բնակութեան նոցին . սրբակրօն հօտա-
պետն երթայր առաջի մեր՝ օրհնելով զծառ մի,
զդաշտ մի և զվտակ մի, ըստ որում Աճ յա-
ռաջագոյն օրհնեաց զանհերկ երկիրն՝ զոր ետ
Ադամայ իբրև ժառանգութիւն նորին . Հան-
դիսադիրքն՝ որք խառն լը ամբօխին յածէին 'ի
լեռնէ 'ի լեռն՝ յուշ առնէին ինձ զնախնա-
կան գերդաստանս մարդկան . որք առաջնորդեալ
'ի Սեմայ՝ անցին ընդ անապատն՝ զհետ երթալով
ընթացից արեգական :

'ի հարցանելն իմ թէ զի՛արդ բարեպաշտ
ձգնաւորն կառավարէր զհատուած ժողովրդեան
իւրոյ՝ նա մարդասիրութեամբ ասաց, ո՛չ ետու-
եա նոցա զօրէնս . միայն ուսուցի նոցա սիրել
զմիմեանս իբրև զեղբարս, աղօթել առ ամե-
նակալն Աճ, և յուսալ վասն բարեգոյն աշխար-
հի . ամենայն օրէնք պարունակին յայտոսիկ հա-
մառօտ խրատս իմ : Տեսանես դու 'ի կեդրոնի
գեղջն զխրճիթ մի մեծագոյն քան զայլ ամենայն
խրճիթս, անդանօր ժողովիմք մեք ամենեքեան

յանձրեացին եղանակի յառաւօտու և յերեկոյն
 առ ՚ի փառաբանել զտէր Աճ երկնից . յոր-
 ժամ ոչ երթամ ես յայն ժողով, մի ՚ի ծե-
 րունեաց անտի ասէ զաղօթս . քանզի հասակ ծե-
 րութեան նմանի աստիճանի հայրութեան և է
 տեսակ իմն քահանայութեան բնութեան . յետ
 այնորիկ գնան նոքա ՚ի գովծա իւրեանց . և թէ-
 պէտ և երկիրն բաժանեալ է որոշակի առ ՚ի
 ուսուցանել նոյա զլնկերակցական անօրինուի,
 սակայն արմտիք հնձոց ամբարեալ պահպանին ՚ի
 շտեմարանս հասարակաց առ ՚ի հաստատուն պա-
 հել զեղբայրական սէր ՚ի միջի նոյա : Պաշտա-
 մունք և արարողութիւնք կրօնին մերոյ, երգքն
 բարեբանութեան՝ զոր երգեմք առ ամենակալն
 Աճ՝ խաչն գերամբարձ՝ ուրանօր կատարեցի
 զխորհուրդն փրկագործութեան, կնձնի ծառն
 այն՝ ընդ որով քարոզեմ զբանս ԱՅ, գերեզ-
 մանք մեր՝ որք կան մերձ առ արտորայս մեր,
 վտակն այն՝ ուրանօր նման սուրբ Յովհաննու
 յանապատին ընկղմեմ ես զնորածին երեխայս,
 ցուցցեն ք՛զ համայն զիսկակն պատկեր այսո-
 ըի՛կ երկրաւոր արքայութեան ք՛ն :

Բարձր սրբակրօն ճգնաւորին այնորիկ լցին զիս
 քերիւրութ . և ես իսկ և իս՛կ զգացի ՚ի սրտի իմում
 զանհնարին օգուտ բարոյական, կենցաղասէր և
 աշխատասէր կենաց . որ բարեգոյն է քան զաս-

տանդական, զանախտան և զպարապորդ կեանս
վայրագասուն անձանց :

Ո՛վ Ռենի, ո՛չ երբէք տրանջեմ ես զտես-
չութենէ ամենակալին. սակայն յորժամ զմտաւ
ածեմ զերջանկութի աւետարանական ազգին այ-
նորիկ, խոստովանիմ զի յարաժամ զգամ վան-
հարին ցաւս ապաշաւանայ : Չիարդ բարեբաղդ
լինէի, եթէ ընդ Ատալային իմոյ կարէի անցու-
ցանել զաւուրս իմ ՚ի մէջ նոյա. անդանօր ա-
մենայն վիշտք և տագնապք հոգւոյ իմոյ վեր-
ջանային. անդանօր ընդ մեծարեալ կնոջ միոյ,
անյայտ ՚ի մարդկանէ՝ թագուցանելով զերջան-
կութիւն իմ ՚ի կարի հեռաւոր վայրս աւանձ-
նութեան, աւուրք կենաց իմոյ անցանէին զօրէն
անհամար անանուն գետոց անապատին : Փոխա-
նակ այնր խաղաղութեան և անդորրութեան,
որում ակնկալեալ սպասէի, զիարդ մեծ եղեն
աղէտք թշուառութեանց իմոյ. յարատե խաղա-
լիկ բաղդի գոլով անձն իմ տառապեալ՝ խոր-
տակեցայ ես ՚ի պէսպէս ծովեզերս տարուբե-
րեալ իբրև զնալ ՚ի մըրկայոյզ ալեաց. ընդեր-
կար թափառեալ և տարագրեալ ՚ի բնիկ երկրէ
իմմէ՝ ՚ի դառնալն իմ անդրէն առ նա, զոչինչ
գտի բայց միայն զխրճիթ մի աւերակ, և զգե-
րեզմանս հանգուցեալ բարեկամաց : Աւարձ այսոց
եղև աստերջանիկ վիճակ աղէբէկ Ճակտոսին :

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂ-
ԾՈՒԹԻՒՆ:

Եթէ երազք երջանկութեան իմոյ էին պայ-
ծառափայլ, աւա՛ղ զի էին նոքա կարճատե-
յոյժ. քանզի անողորմ տարաբաղդութիւն սպա-
սեալ Տնայր ինձ 'ի խրճիթի ճգնաւորին: Չարմա-
ցեալ էի հիացմամբ 'ի ժամանելն մեր անդ 'ի
միջօրէի, յորժամ ո՛չ տեսի զԱտալա ընթանալ
առ 'ի հանդիպել մեզ. նախագուշակ արհա-
ւիրք ինչ կալաւ զբաբախիւն սիրտ իմ. և կարճ
ծէի զի դափնիքն ողբաձայն շքնջէին 'ի վերայ
գագաթանց լեռանց. յորժամ հասաք մեք 'ի
խրճիթ ճգնաւորին, երկն չէի կոչել զդուստրն
Լոպեզի՝ նոյնգունակ երկն չէլով 'ի ձայնից կամ
'ի լռութենէ, որք ունէին հետեիլ աղաղա-
կի իմոյ. և ս առաւել ցրտացեալ էր անձն իմ
արհաւրօք, 'ի տեսանել զանհնարին խաւարն. ո
որ պաշարեալ էր շուրջ զդրամբ խրճիթին. սմին
իւրի և ասայի ճգնաւորին, ո՛վ դու՛ զոր երկինք
զօրացուցանէ և հաստատուն պահէ օգնակա-

Նութեամբ իւրով, ո՛հ՛ մոլտ ՚ի օտուերս մը-
թութեան և դարձն ինձ զյանկային իմ Ատալա:

Ո՛հ՛ զիարդ տկար է մարդն այն, որում իշ-
խեն կիրք իւր ուժ գնակի. զիարդ հզօրեղ է
նա՛ որ դնէ զյոյս իւր ՚ի խնամն յաւիտենական
աստուածութեան: Առաւել արիութիւն գտա-
նիւր ՚ի բարեպաշտ սրտի հինաւուրց առն միոյ
եօթանասուն և վեց ամաց, քան թէ ՚ի կուրծա
մատաղաւուրց հասակի իմոյ: Այրն խաղաղութե
եմուտ ՚ի խրճիթն. և ես սողստեալ մնայի իբ-
րև կերակուր ամ աւագնայաց անկնկայութեան:
Մեղկ և անզօր հաւաչանք երևէին ելանել ՚ի
քարանձաւէ անտի. ես աշարակեցի ճշելով, և
գտեալ վերստին զկորուսեալ կարողութի իմ՝
մտի ՚ի քարանձաւն ուժ գնակի: Ո՛վ հոգիք նա-
խահարց իմոյ, դուք տեսիք զաղետայի տեսա-
րանն՝ որ եհար զտագնայեալ զաչս իմ:

Կուսով փոքրիկ ճրագի միոյ վաճականն ան-
կէլկայր ՚ի վր անկողնոյ Ատալայի. տեսի ես ըզ-
ջքնաղաղէմ սիրականն իմ գունատեալ և ճա-
պաղեալ հերօք՝ հիւժեալ վհատեալ կերպա-
րան նորա յեցեալ ՚ի վերայ արձնկան իւրոյ.
կաթուածք զուրտ քրտանց հոսէին ՚ի զամաքեալ
թառամեալ այտից նորա. աչք նորա նսեմայեալք
՚ի թաղանդոյ մօտալուտ մահուան՝ տակաւին
նկրտէին արտասանել զկաթոգնութի սիրոյ իւր-

եանց. և դողդոջուն շրթունք նր ջանային փայտիլ :
 Կայծակնասար եղեալ անձն իմ յաղէխորով
 տեսարանէ անտի՛ աչք իմ յառեցան անքթիթ .
 բազուկք իմ տարածեցան . և ես անշարժ կանգ-
 նեալ արձանայայ : Սուղ ինչ լռեցաք մեք թաղ-
 ձողական լռութեամբ . ապա հայր Աբրին ասաց
 Ատալա ունի զսակաւ ինչ ջերմախտ յաղագս մե-
 ծի վաստակոց իւրոց . և եթէ յանձն առնիցեմք
 մեք զանձինս մեր յողորմութիւն բարերարին ,
 նա գթութեամբ ողորմեսցի մեզ : Բանք նորա
 դարձուցին վերստին զսովորական շարժողութի
 սառուցեալ արեան իմոյ . և երագութք վայրա-
 գասուն անձին իսկ և իսկ անցի յանհնարին
 տրտմութենէ 'ի կազդուրիչ յոյս զուարթութե .
 սակայն աւանդ՝ Ատալա կարի վաղվարակի շիո-
 թեաց զյոյս իմ վերստին . քանզի նշանայի խո-
 սեցաւ նա ը մեզ առ 'ի մերձեւալ յանկողին նր .
 և թրթռուն իմն ձայնիւ ասաց՝ ո՛վ հայր և
 գլուխ աղօթից , զգամ ես զցուրտ ձեռն մահ-
 ուան : Ո՛վ ճակտոս՝ լուր հաջատակութեամբ
 կամայն ԱՅ զաղէտալի ծածուկն՝ զոր թագու-
 ցեալ եմ 'ի քէն՝ ո՛չ կամելով առաւելուլ ըզ-
 ցաւս թշուառութե քոյ . և հնազանդելով կա-
 մաց մօր իմոյ : ... Մի ընդմիջէր զիս պայ-
 թուցեամբ յուսահատութեանն՝ որ շտապեացէ
 զժամն մահակիր . ունիմ ես ծանուցանել զբա-

զուամ ինչս . և յամբ Տառաչանք ցրտայեալ սրտի
 իմոյ գուշակեաց զմտալուտ վախճան անձին իմոյ :
 Չկնի սակաւիկ մի լուելոյ կրկնեաց անդրէն
 Ատալա , ձախողութիւնք և թշուառութիւնք
 իմ սկսան գրեթէ նախ քան զկեանս իմ . մայր
 իմ յղացաւ զիս ՚ի ցաւս և ՚ի վիշտս . ծնաւ զիս
 կորստեամբ կենաց իւրոյ . և ոչ գոյր յոյս վասն
 իմոյ կենդանութե : Առ ՚ի փրկել զիս՝ ուխտեաց
 նա խոստմամբ զի եթէ կենդանի մնայ-
 ցեմ , նուիրիցեմ զանձն իմ թագուհւոյն կու-
 օանայ : Ա՛վ մահակիր խոստմանս և ուխտիս
 այսորիկ՝ որ շտապաւ մղէ զիս ՚ի տարածամ
 գերեզման : Մտեալ էի ՚ի Տասակ վեշտասան
 ամաց , յորժամ կորուսի զմայր իմ կաթոգին .
 քանի ժամօք յառաջ քան զվերջին շունչ իւր ,
 կոչեաց նա զիս առ կողմամբ անկողնոյ իւրոյ .
 որ ուստր՝ ասաց նա առաջի սուրբ Տօրն՝ որ մխի-
 թարէր զնա ՚ի վերջին վայրկեանս իւր , յայտ-
 նի է քեզ ուխտն՝ զոր արարեալ էմ վասն քո .
 խորտակեսցե՛ս արդեօք զահեղ խոստումն կա-
 թոգին մօր քոյ : Ա՛վ իմ Ատալա՝ թողում
 զքեզ յաշխարհ մի անպատշաճ քրիստոնէի մի-
 ում , ՚ի մէջ կուսպաշտ Տալածչաց ԱՅ Տօր
 քոյ և իմ . զայն Ա՛ճն ասեմ՝ որ նուիրելով քեզ
 զկենդանութիւն՝ հաճեցաւ պահպանել զկեանս
 քո երկրորդական հրաշիւք : Սիրելի՛ դուստր

իմ, յընդունիլն քո զքօղն կուսանայ՝ զերձու-
 ցես զքեզ ՚ի հոգոյ խրճիթաց և յայնոցիկ անո-
 ղորմ կրից՝ որք հեթձեալ են զսիրտ իմ վի-
 բաւորութեամբ: Եկ սիրելի իմ, եկ և երդուի՛ր
 ՚ի վերայ այսր պատկերի օրհնեալ Աճամսրն
 մերոյ, առանջի բաւեպաշո քահանայիս այսորիկ
 և հոգեպառ մօր քոյ, զի ոչ երբէք լուծցես
 զսրբազան դաշակցութիւն նորա ընդ երկնից:
 յիշեա՛ զի արարի զայդ ուխտդ առ ՚ի փրկել
 զկեանս քոյ, և եթէ դու զանց արասցես կատա-
 րել զխոստումն իմ, մատնեսցես զհոգի իմ ՚ի
 յաւիտեանական տանջանս: Ո՛վ մայր իմ՝ ըն-
 դէ՛ր արտասանեցեր զայս բան սպառնալեաց:
 Ո՛վ կրօն՝ ցուցեալ ես իբու զտանջանս և զեր-
 ջանկութիւն իմ, որ կորուսանէ և մոխիթարէ
 զանձն իմ: Ո՛վ սիրեցեալ և անմոխիթար առ-
 արկայ կրից սիրոյ, որ տոչորեալ հիւժէ զիս և ս
 և ՚ի դիրկս մահու: Ո՛վ ճակտոս՝ դու գի-
 տես այժմ զճշմարիտ պատճառ ամենայն տրտա-
 մութեանց և ցաւոյ մերոյ: Փղձկեալ իմ յար-
 տասու՝ գիրկս արկի կիսամեռ մօր իմում և
 երդուայ կատարել զամենայն ինչ ըստ ցանկութե
 կամայ նորա: Միտնարն արտասանեաց զահեղ
 բանս իւր, և ետ ինձ զանրակն զայն՝ որ կապէ
 զանձն իմ պարտաւորութիւն մինչև յյաւիտեանս:
 Մայր իմ սպառնայաւ անիծանել զանձն իմ,

Եթէ խորտակիցեմ էրբէք զուխտ խոստման ի-
 մոյ. պատուիրեաց ինձ պահել զայն միանգամայն
 ծածուկ յամենայն կռապաշտ հալածչաց կրօնին
 մերոյ. և փչեաց զոգին իւր ունելով զիս ՚ի
 գիրկս իւր: Ո՛չ զգացի զառաջինն զելս ան-
 խոհեմ խոստման իմոյ. հոգի իմ լի էր ջերմե-
 ուանդութեամբ բարեպաշտ քրիստոնէի միոյ.
 պանծայի ընդ Սպանիական արիւնն՝ որ ընթանայր
 յերակս իմ. յարս շրջապատեալս զինն տեսա-
 նէի միայն զամուսինս անարժանս ձեռին իմոյ. և
 զուարճացեալ բերկրէի լինիլ հարսն ԱՅ մօր
 իմոյ: Տեսի զքեզ՝ ո՛վ պատանի և գեղատեսիլ
 կալանաւոր. արտասուեցի ՚ի վերայ ձախորդու-
 թեանց քոյ. և ապա զառաջինն զգացի զամե-
 նայն արհաւիրս անխորհուրդ ուխտի միոյ:

Զորժամ Ատալա եզերեաց զբանս իւր, սեղ-
 մելով զբռունս իմ, և խելագարեալ աջօք հայ-
 ելով ՚ի ճգնաւորն, ես աղաղակեցի՝ այսպէ՛ս
 է ուրեմն կրօնն այն՝ զոր այսքան գովեցեր ա-
 ռաջի իմ: Ամօ՛թ երդմանն այնմիկ՝ որ զրկէ
 զիս յԱտալայէ. ամօ՛թ ԱՅն ձերոյ՝ որ այս-
 պէս թշնամի է մարդկայինս բնութեան: Ա՛յր
 դու՛ քահանայ դու, ընդէ՛ր ես եկեալ դու
 յանապատս յայտոսիկ: Առ ՚ի փրկել զքեզ
 պատասխանեաց ճգնաւորն սարսափելի իմն ձայ-
 նիւ, առ ՚ի սանձել զկիրս քոյ, և հեռացու-

ցանել զբարկութի երկնից ՚ի քեն՝ ո՛վ անաս-
 տուած հայհոյիչ : Չի՞նչ իրաւունս ունիս դու՝
 անմիտ պատանի՝ տրտնջել զերկնային նախախը-
 նամութենէ : Չի՞նչ են արդիւնք արժանաւորուե-
 քոյ : Չի՞նչ անիրաւութիւնս ես կրեալ : Ա՛ւր
 են նշանք շարշարանայ և վշտայ քոյ : Չի՞նչ
 են առաքինութիւնք քոյ : Չի՞նչ բարի գործս
 գործեալ է քո : Ա՛ւր են կարօտաւորքն՝ որոյ
 ՚ի թիկունս ես հասեալ օգնականութք : Ա՛վ
 այր թշուառական՝ դու միայն կարես առաջի
 առնել զզայրացեալ կիրս , և հայհոյութիւնս
 խօսիլ զամենակալ Արարչէն համայնից : Յոր-
 ժամ իբրև հայր Աբրին անցուսցես զերեսուն
 ամս կենայ քոյ ՚ի տարագիր պանդխտութեան
 ՚ի վերայ լերանց , ո՛չ այսպէս վաղձաղակի ամ-
 բաստան լիցիս զդիտաւորութեանց տեսչութեանն
 երկնից . ապա գիտասցես զի ոչինչ գիտես , զի
 դու ոչինչ ես . և զի չիք տանջամք և շարշա-
 րանք՝ որքան մեծ և իցեն նոքա՝ զորս ապականա-
 ցու մարմին մարդոյ չիցէ արժանի առ ՚ի կրել և

Այսպէս խօսեցաւ ճգնաւորն . հուրն՝ որ ցոլա-
 նալով ցայտէր ՚ի զայրացեալ յաջայ նր , պատ-
 տական մօրուսք նր՝ որ բաբախէր ՚ի վր լանջայ
 նր , և որոտաձայն բարբառ բերանոյ նր տային
 նմա երևիլ զօրէն մեծազօր հոգւոյն : Չարհու-
 րեալ իմ ՚ի վսեմական հայեցուածոյ նր՝ անկայ

գետնամածեալ յոտս հորին՝ թողուի հայցելով
 վն հայհոյութեց և չարամաղթութեանց իմոց ։
 Ամնականն պատասխանեաց ձայնիւ իմն քաղցրու-
 թեան՝ որ ելոյժ զսիրտ իմ՝ ի ստրջանս ապա-
 շաւութեան՝ ոչ վասն իմ եր կշտամբա՛քն այն՝
 որով յանդիմանեցի զքեզ ։ ո՛վ որդեակ իմ . ա-
 ւա՛ղ՝ յոյժ տւղիղ ես դու ի բանս քոյ . եկի
 աստանօր առ ի առնել զդուզնաքեայ գործս
 քարութեան . և ամենակալն ջունի զառաւել ան-
 արժան ապարդիւն ծառայ քան զիս . սակայն որ-
 դեակ իմ՝ չէ պարտ մեզ երբէք չարիս խօսիլ
 զԱՅ և զնախախնամութենէ երկնից ։ Թող ինձ
 զմեղս իմ , եթէ վշտացուցեալ եմ զքեզ . այլ
 արժան է մեզ լսել բանից քեռն քոյ . գուցե
 լինիցին հնարք ինչ մնայեալ վասն քո . ընդէ՛ր
 համակիս ի վիշտս յուսահատութեան ։ Ո՛վ
 Ճակտոս՝ կարի գերագոյն է կրօնն այն՝ որ ա-
 րարեալ է զառաքինութիւն յուսոյ ։

Ամենասիրելի բարեկամ իմ՝ կրկնեաց անդ-
 ըն Ատալա՛ տեսեալ ես դու զնեղութիւնս
 և զչարչարանս իմ . սակայն տեսեալ ես դու
 միայն զփոքրիկ մասն տառապանաց և նե-
 դութեանց իմոց ։ Աւա՛ղ՝ խափշիկ գերին այն՝
 որ ուռգանէ քրտամբք իւրովք զհրաբորբօք
 զաւազս Փլորիդայ , նուազ թշուառական է
 քան զապերջանիկն Ատալա . աղաչէի զքեզ հը-

նարեւ զհասնուստ քոյ, թէպէտ և գիտէի զի
 ունէի մեռանիլ՝ եթէ թողեալ լքանէիք զանձն
 իմ. երկնչէի գալ զկնի քո յանապատին, սա-
 կայն կարօտեալ ընթանալով առ անտառն ստուե-
 ըսիսիտ՝ խնդրէի զվայրս խորին առ անձնութե.
 և ոչ այսչափ միայն այլ և եթէ միայն պար-
 տաւորեալ էի թողուլ զձնողս իմ, զբարեկամս
 իմ և զերկիր իմ, նա և (սարսափելի է
 ասել) եթէ միայն երկնչէի վասն կորստեան
 Տոգոյ իմոյ, Տոգի քոյ ո՛վ մայր իմ, յա-
 ըածամ պնդէր զկնի իմ, յարածամ կշտամ-
 քէր զիս տանջանօք քովք. լսէի զաղաղակս քո
 և զցաւս սրտի քո. և տեսանէի զբոցս դժո-
 խոց կլանել զքեզ ողջոյն : Անցուցանէի զգի-
 ջերս իմ առանց քնոյ. ահեղատեսիլ մնորք երե-
 տին ինձ յերազս իմ. վերագարձեալ օրն վե-
 ըանորոգէր զյուսահատութիւն իմ. երեկոյեան
 ցօրն ցամաքէր ՚ի վերայ կիզեալ մորթոյ իմոյ.
 և Տրաբորբօք շունչն իմ ջերմացուցանէր զսիւզն
 զովայուցիչ : Բայց տրտմութիւն իմ այն էր,
 զի յորժամ տեսանէի զիս լէ քեզ Տեռի ՚ի տե-
 աութենէ մարդկան և յանմարդաբնակ անապատս
 միայնակութեան, յարածամ գտանէի առաջի ա-
 չաց իմոց զանյաղթելի խոչընդակն ինչ երջան-
 կութե մերոյ ... : Անցուցանել զկեանս իմ առ-
 տալիք քով, ծառայել քեզ զօրէն նուստ

աղախանոյ միոյ, պատրաստել զկերակուրս և
 առկախել զմահիճն քո յանյայտ մասին ինչ
 աշխարհի, ունէին պատճառել ինձ զգերա-
 գոյն երջանկութիւն : Մերձեցայ ես յառար-
 կայ այնորիկ երջանկութեան, սակայն ոչ կարա-
 ցի վայելել զայն : Չինչպիսի երազք, զինչպի-
 սի սարսափելի մտածմունք խռովէին զյնորեալ
 ուղեղն իմ, երբեմն արկանելով զսիրատարմի
 զաչս իմ ՚ի վր քո՝ խորհելով զգայի զկարի մեղ-
 սագրգիռ ցանկութիւնս . եր՛ զի կամէի լինիլ
 մի միայն կենդանի էակ ՚ի վերայ երկրի . և եր՛
 զի ձայն մեծագոր հոգւոյն դատապարտեալ զայ-
 լանդակ բռնութիւն կրից իմոց, կամէի զի բը-
 նութիւնն ինքնին ջնջեալ ՚ի չիք դարձցի, եթէ
 ես անկեալ գոլով ՚ի գիրկս քո՝ թաւալեալ գը-
 լորէի յանդնոց յանդունդս ընդ աւերակայ աշ-
 խարհի . այժմ՝ յայսմ ժամու ևս, յորժամ
 հանդերձեալ եմ երևիլ առաջի անողոքելի դա-
 տաւորին, յորժամ յախտենականութիւնն բանայ
 զչրջագոյտ լաբիւրինթոս իւր առաջի իմ,
 և ես մեռանիմ զմահ մարտիրոսի սակս որդի-
 ական հնազանդութեան՝ ասայից քեզ, թե
 տանիմ ընդիս ՚ի գերեզման զյաւս տրամութիւն,
 յաղագս ոչ արժանանալոյ իմ լծակցուեք քում :
 Դուստր ընդմիջեաց սրբակրօն քահանայն՝
 տրտնութիւն քո խռովէ զմտորեալ միտս քոյ :

Չափազանց վիշտ քոյ ո՛չ է յառաջացեալ ՚ի բնութենէ քումմէ . սին իրի և յուսամ՝ զի սակաւ անհաճոյ երևեսցի այն յոչս ԱՅ : Քաւ լիցի . տառապանք քո առաւել յառաջացեալ է ՚ի ցնորեալ մտայ , քան թէ յապահանեալ արտէ : Պարտ էր քեզ ճնշել զայսպիսի զառանցեալ խորհուրդս անարժանս անմեղութեանն քում : Թուի ինձ ևս՝ սիրելի գուստր իմ՝ զի բուռն երևակայուի քո արարեալ է զուխտ քոյ կարի ահաւոր : Արօնն ո՛չ ինդրէ ՚ի մէջ զպատարագս գերագոյնս քան զկար մարդկան . բարեպաշտական խորհուրդք նորա , բարեխառնեալ առաքինութիւնք նորա են կարի գերագոյն քան զվսեմական զգացողութիւնս և քան զտարածեալ կատարելութիւնս կեղծեալ դիւցազնութեան . եթէ զարտուղեալ էր քո ՚ի ճանապարհէն ԱՅ , եթէ նմանէ իր միում ՚ի կորուսեալ ոչխարայ , հովիւն քաջ ունէր որոնել զքեզ և դարձուցանել անդրէն ՚ի սխարախ հօտի իւրոյ . քանզի գանձք ապաշխարութեան լինէին բայեալք վանս քո . թէպէտ և պարտէ հեղուլ զհեղեղս արեանս առ ՚ի զիջուցանել զբարկութիւն մարդկան , սակայն կաթիլ մի արտասուայ հաճէ զկամս ողորմածին ԱՅ : Ապա ուրեմն քաջալերեան զիբրտ քո՝ սիրելի գուստր իմ՝ խրախուսեան զհոգի քո և դիմկայութեալ առ

զօթիւք առ ամենակարն Աճ, որ բժշկեալ ապա-
 քինէ զամենայն զվիրաւորեալ սիրտս ծառայից
 իւրոց : Եթէ կամք իցեն տեսուն դարձուցանել
 զքեզ յառողջութիւն՝ որպէս և ես ՚ի սրտէ
 յուսամ զի առողջասցիս դու՝ գրեցից զթուղթ
 մի առ եպիսկոպոսն Առիբեկայ . և նա ունի
 զկարողութիւն ազատ կացուցանելոյ զքեզ ՚ի դար-
 տաւորութիւն յառի քոյ, որ է սոսկ խոստումս ինչ
 միայն . և այսպէս դու կարող լիցիս անցուցանել
 զկէանս քո ՚ի բնակութեան իմում ընդ ամուս-
 նոյն քոյ Ճակտոսի :

Ատալա ընդերկար մնաց ընդարմայեալ և ու-
 ջախեղեալ . և յորժամ եկն յուշ իւր վերատին ,
 հառաչանք նր զույանէին զսաստիկ ցաւս սրտի
 նորա : Չի՞նչ աղաղակեաց նա յուսահատութե՞
 ապա ուրեմն ո՞չ է հատեալ յոյս իմ բոլորո-
 վին . և հնար է՞ եպիսկոպոսին Առիբեկայ ա-
 զատ կացուցանել զիս յուխտէ իմոյ : Այո՞
 դո՛ւստր՝ ասաց միտոնարն : Աւա՛ղ կարի անագան
 լսեմ զայդ յոյս՝ ասաց Ատալա : Ո՛հ տեսանեմ
 զի պարտ է ինձ զրաւիլ ՚ի կենացս ՚ի ժամա-
 նակին յայնմիկ՝ յորում կարէի ես լինիլ երջա-
 նիկ : Ընդէ՛ր ես ո՞չ ծանօթացայ քեզ յառաջա-
 գոյն՝ ո՞վ սրբակրօն հայր իմ . սրբան մեծ լինէր
 ինն երջանկութիւն ընդ Ճակտոսի , եթէ սրբ-
 ակրօն այրս այս մկրտէր զնա , մսիթարէր և

քաջալերէր զմեզ զերկոսին յանապատի աստ :
 և այսպէս կարէաք մեք անցուցանել զողջոյն ա-
 ռուրս կենաց մերոց 'ի միասին . ո՛վ մեծի երևա-
 կայեալ երջանկութեա : ... Ապա ես Ճակտոսս
 կայեալ զգողդոջուն ձեռանէ Ատալային ասացի ,
 միսիթարեան զքեզ , միսիթարեան զսիրտ քո . մարթ-
 է մեզ վաղվաղակի առնուլ զճաշակ այնորիկ
 գերագոյն երջանկուէ : Բաւ լիցի՝ քաւ լիցի ,
 պատասխանեաց Ատալա : Ընդէ՛ր ո՛չ լիցի այդպի՛
 կրկնեցի ես անդրէն : Դու ո՛չ գիտես զայդ՝
 ասաց Ատալա աղաղակելով՝ յերեկեան առուր 'ի
 ժամ մըրկին ... մինչ անկեալ կայի 'ի գիրկս
 քոյ ... կամէիր դու մեղանչել ընդդէմ մօջ
 իմոյ ... պարտաւորէիր զիս առ 'ի ո՛չ պահել
 զուխտ իմ և արկանել զհոգի մօրն իմոյ 'ի խորս
 դժոխային հրոյ ... անէ՛ծք նորա էջ 'ի վր իմ ...
 հանդերձեալ էի ես ուխտագանց գտանիլ առ
 Ա՛ճ՝ որ փրկեաց զկեանս իմ : Ո՛վ Ճակտոս՝ յոր-
 ժամ առեալ էիր զիս 'ի գիրկս քո , դու ո՛չ
 գիտէիր ... ո՛չ գիտէիր զի ընդգրկէիր դու
 զմահ : ...

Ո՛վ երկինք՝ աղաղակեաց միսոնարն սոսկալով՝
 զի՛նչ ես արարեալ դու : Գործեալ է իմ ըզ-
 մեզս՝ պատասխանեաց Ատալա՝ յառեալ նորա
 անթիթ զարհուրատեսակ դէմն իւր 'ի վերայ
 ձերունւոյն . գործեալ է իմ զսոսկալի մեզս :

օղանութեան ... բայց աւանդ՝ ես միայն կո-
 րուսի զանձն իմ և փրկեցի զՏոգի մօր իմոյ :
 Խօսեանց ասացի ես նմա զարճուրեալ և ահա-
 բեկեալ : Նկատեցի ես զտկարութի անձին իմոյ՝
 ոչատաստանեաց Ատալա . և յորժամ ելեալ գնա-
 ցաք մեք ՚ի խրճթաց անտի, ես առ ի ընդիս ...
 Ձի՞նչ առե՞ր արդեօք դու զթոյն՝ ասաց
 քահանայն արտասուելով ... Այո՛ ... կրկնեաց
 անդրէն Ատալա . թոյնն ներգործեալ սաստիկ՝
 Տերձոտէ զնեղեալ սիրտ իմ : ՚Ի լսել զայս բան՝
 մոմեղէն ճրագն անկանի յերկիր ՚ի ձեռաց ճրգ-
 նաորին . ճակտոս անզգայեալ և ուշայեղեալ
 անկանի առ կողմամբ անկողնոյ ողորմելի օրիոր-
 դին . անմխիթար և տրամազգծց ծերունին գիրկս
 արկանէ հայրական սիրով երկոյունց սիրակա-
 նայս . և երեքին նոքա խառնեն զարտասուս և
 զՏեկեկանս տրամուծ ՚ի վր անկողնոյն յուղար-
 կաւորութեան, ՚ի ժամ տխրամած մթութեան
 գիշերոյ :

Կազդուրեցէք՝ կազդուրեցէք զվհատել հո-
 գիս ձեր՝ ասաց ճգնաւորն քաջասիրտ՝ լուցանե-
 լով զլագտերն իւր . կորուսանեմք մեք զամենա-
 պատուական վայրկեանս կենաց մերոց . զօրէն
 անլէհեր քրիստոնէից ընդդէմ զինեացո՛ւք զան-
 ձինս մեր մրրկաց աղետից . գեանամածեալ յեր-
 կիր տարածեսցո՛ւք զմեզ առաջի ամենախալ

բարձրելոյն . կամ խնդրեսցնուք զողորմութիւնս
 և կամ հնազանդեսցնուք երկնային կամայ նորա .
 Թերևս ո՛չ է կարի անագան ... ո՛վ դուստր
 ընդէ՛ր ո՛չ խօսեցար դու յանցեալ գիշերի : ...
 Աւա՛ղ ասաց Ատալա . հայր սուրբ ընդերկար
 խնդրեսցի զքեզ յանցեալ գիշերի . բայց բարձ-
 րեալն երկնից անտարակոյս Թագոյց զքեզ յինէն,
 առ ՚ի պատուհասել զսոսկալի յանցանս իմ ...
 ունայն և անպտուղ է այժմ օգնականութիւն քո :
 Հնդիկքն ինքեանք Թէպէտ և քաջածանօթ են ա-
 մենայն տեսակաց Թունոյ , սակայն ո՛չ կարեն յօ-
 րինել զդեղԹափ ինչ վասն Թունոյն այնորիկ
 զոր արբեալ եմ ինքնին ... ո՛վ Ճակտոս՝ մարթ
 է քեզ խորհիլ զյուսահաստութիւն իմ , յոր-
 ժամ տեսի զի Թոյնն այն ո՛չ էր կարի ներգոր-
 ծական և հզօրեղ ըստ ակնկալութե իմոյ : Սեբ
 առաւելեալ է մեծագէտ զզօրութիւն իմ . հո-
 գի իմ ո՛չ կարէ փութանակի Թողուլ լքանել
 զքեզ յաշխարհի :

Այսպէս խօսեցաւ Ատալա . հեկեկամք իմ ,
 և մոլեգնեալ կատաղութին այն՝ որ միայն յա-
 տուկ է վայրագայ՝ հատեալ ընդմիջեցին ըզ-
 պատմութիւն նորին : Գոյլով իմ վհատեալ և
 յուսահատեալ անկայ ես յերկիր անզգայեալ ,
 վիրաւորելով զբազուկս իմ և խածատելով ըզ-
 ձեռս իմ : Սրբակրօն ճգնաւորն հինաւուրց՝ երկ-

նային իմն քաղցրութեամբ դարձաւ յեղբօրէն
 դէպ առ քոյր նորին . և մատակարարեաց նմա
 զամենայն նպաստ օգնականութեան : Անկեղծութի
 սրտի նորա և վսեմութիւն կրօնի նորա ազդէին
 ՚ի նա զխորհուրդս առաւել դիւրագասն և
 առաւել եռանդոտս քան զբռնայեալ կիրս սրբ-
 օտի մերոյ : Ճգնաւորն մեծարոյ՝ որ յնթացս քա-
 ռասուն ամաց նուիրեալ էր զվաստակս իւր ծա-
 ռայութեան ԱՅ և մարդոյ՝ երևէր յաչս իմ
 իբրև պատարագ բոլորանուէր՝ անընդհատ կի-
 ղեալ առաջի Տեառն ՚ի վերայ գլխոյ լերանց ։
 Աւարդ ընդունայն ջանայր նա առ ՚ի ապաքինեալ
 բժշկել զյաւս Ատալայի . վաստակ անհնարին
 արամութի ուժգին՝ թոյն անագորոյն և կիրք մե
 առաւել հզօրեղ քան զի և իյէ թոյնս կողոպ-
 տեալ զրկէին զանապատն զայն յամենագեղեցիկ
 ծաղկանէ նորա : Իբրև ՚ի ժամ երեկորին նը-
 շանք հիւանդութեանն Ատալայի երևէին վը-
 տանգաւոր և մահազուշակ . ընդհանրական իմն
 թմբրութիւն և անզգայութի սկսաւ թագաւո-
 րել ՚ի վերայ մարմնոյ նորին : Ըօշտիւս զմա-
 տունս իմ՝ ստաց նա յիս . ո՛չ ապաքէն են նոքս
 յրտայեալ և ընդարմայեալ : Անհնարին ցաք և
 արհաւիրք կարկեալ լուսնոցին զլեզու իմ . և
 ես ո՛չ կարէի արտասանել զլսօսս ինչ բնաւին :
 Ադա կրկնեալ անդրէն Ատալա աւայ՝ յերև-

կեան առուր՝ յորժամ սիրականն իմ՝ հայեցաւ յիս օ
 բովանդակ կազմուած մարմնոյ իմոյ սկսաւ զդո-
 ղանի հարկանիլ . այժմ այլ ոչ ևս կարեմ զգալ
 զըօշափումն ձեռաց քոյ ... հազիւ երբէք կա-
 րեմ լսել զձայն բերանոյ քոյ ... ամենայն ա-
 ռարկայ ՚ի քարանձաւի աստ հեռացել աներևու-
 թանայ ՚ի մթացեալ աչաց իմոյ ... ո՛չ ապաքէն
 լսես դու զքաղցրաձայն եղանակս թռչնոյ : ...
 Արեգակն այժմ՝ խոնարհեալ հակի յարեմուտս
 կոյս ... Ճակտոնս՝ զիարդ արևն պայծառտիայլ
 ծագեսցի ՚ի վերայ գերեզմանի իմոյ ՚ի մէջ անապա-
 տին : Ատալա տեսանելով զի բանք իւր թա-
 տիանց մտանէին ՚ի խորս վհատեալ սրտից մերոյ՝
 բարեկամք իմ՝ ասաց նա՝ ներեցէք ինձ զտկա-
 րութի իմ . ժամ ըստ ժամէ տկարութիւն իմ
 սաստկանայ . թերևս փոյթ ընդ փոյթ զօրասցի
 անձն իմ : ... Աւարձ եղնկ ինձ որ մեռանիմ՝
 յայսմիկ ծաղկափթիթ հասակի, յորժամ սիրտ իմ
 վիէր եռանդեամբ սիրոյ : Հայրդ աղօթից, գթա՛
 ՚ի վերայ տկարութե իմոյ . ձեռն տո՛ւր յուսա-
 բեկեալ հիւանդութեան իմում . կարծե՛ս դու
 զի ուրուական մօր իմոյ է արդէն շատացեալ .
 և զի ամենակախն Ա՛ժ ներեալ թողցէ զյանցանս իմ :
 Դ՛ուստր՝ ասաց միտնարն բարեպաշտ՝ սրբելով
 վիրաւորեալ ձեռօք իւրովք զարտասուս հոսեալս
 ՚ի խորոշացեալ այտից իւրոյ, դ՛ուստր՝ ամենայն

անէ տք տառապանայ քոյ յառաջ գան յանգիտու-
 թենէ քումմէ . անկատար ուսումն քոյ և պա-
 կասութի օրինաւոր հրահանգութեան սրտածա-
 ուեալ են քեզ զվտանգս կորստեան : Ո՛չ գիտէիր
 դու զի քրիստոնէայ ոմն չունի զկարողութի առ-
 ՚ի վճարել զկեանս իւր ըստ հաճոյից իւրոյ .
 քաջալերեաց դուստր իմ . քաջալերեաց սիրե-
 ցեալ զաւակ իմ : Ընր մխիթարեալ ՚ի տրտմութե
 քում . քանզի Աժ թողցէ սիրով զսխալանս ան-
 կեղծութե սրտի քո : Մայր քո և անխոհեմ
 մխոնարն այն՝ որք հաստատեցին ՚ի միջոյ զայս
 ուխտ յախտենական՝ էին առաւել յանցաւոր
 քան զքեզ . հաստատելով նոցա զուխտ քո բլու-
 նադատական՝ անցին նոքա անդր քան զչափ կարո-
 ղութեան իւրեանց . այլ սակայն Տէր մեր երկե-
 նային և խաղաղութի նորին այժմ հանգչին ՚ի վճ-
 նոցին . նոքա և դու թողեալ էք յաշխարհի զս-
 հագին օրինակ աստուածազգեցուեք և անգիտուեք
 յիրա կրօնի :

Այլ սակայն ո՛չ է պարտ քեզ զարհուրիչ
 և յուսահատիլ . որ քննէ զսիրտ մարդկան և
 գիտէ զանգործս նոցա՝ դատեսցէ զքեզ ըստ մա-
 քուր դիտաւորութեան քում , և ո՛չ թէ ըստ
 յանցաւորութեան գործոյ քոյ : Սիրելի դուստր
 իմ՝ եթէ հասեալ է ժամ քո առ ՚ի ննջել ՚ի
 լանջս Տեառն երկնաւորին , ոչինչ վնաս եղիցի

Քեզ մեկնիւ Տեռանաւ յաշխարհէ աստի ։
 Աւաղ՝ դու միայն իմացեալ ես զտրտութիս և
 զվիշտս միայնակեցութեան . զի՛նչ են նոքա առ-
 բարդատութեամբ վշտաց ընկերութեան ։ Որ մի-
 անգամ բնակի ՚ի յարդակերտ խրճիթի՝ և որ մի-
 անգամ բնակի ՚ի հոյակապ պալատի , հաւասար-
 ասպէս ծնեալ են կրել զվիշտս և զտառայոյանս
 աշխարհի ։ Իշխոյք յարտասուս փղձիլն զօրէն
 այլոց հասարակ կանանց . և արքայք ՚ի կոծս և
 յորսս վարակին զօրէն այլոց հասարակ արանց ։

Զաւի՛ս դու վասն սիրահարութե՛ք քոյ՝ ո՛վ
 որդեակ իմ . մ'արթ է քեզ նոյնգունակ ցաւիւ
 վասն երազոյ միոյ . ճանաչէ՛ս դու զսիրտ մարդոյ .
 կարե՛ս դու ՚ի համար արկանել զփոփոխութիս
 սիրոյ նորա . հնար է քեզ դիւրաւ ՚ի համար
 արկանել զանհամար ալիս՝ զոր ծովն յարուցանէ
 ՚ի ժամ մըրկի , քան թէ զփոփոխութիւնս սիրոյ
 մարդկան ։ Ո՛վ Ատալա՛ շնորհք և բարերարուի
 մարդկան ո՛չ են պարտիք մշտնջենականք . գուցէ
 տաղտկութիւնն հետեւեսցի յագեցութեան . և
 ամենայն առաջին երախտիք քո ՚ի մոռացօնս
 արկյին ։ Որդեակ իմ՝ արդարեւ այն էր մաքրա-
 պոյն սէլն՝ որ զառաջինն բորբոքեցաւ ՚ի լանջս
 առաջին մարդոյ և կնոջ ։ Արարիչ նոցա ստեղ-
 ծեալ էր զդրախտ մի վասն նոցա . նոքա էին
 անմեղ և անմահ . և միամտամայն էին կատարեալ

Տոգուլ և մարմնուլ : Աղամ ստեղծաւ վանն
 Եւայի . և Եւայ ստեղծաւ վանն Աղամայ . եթէ
 նոքա ոչ կարային պահպանել ինքեանց զայն եր-
 ջանկութիւնն մշտնջենական , ո՛ր ղոք կարէ զկնի
 նոցա անձկանօք փախաքել Տասանել նմա : Ո՛չ
 յիշատակեցից աստանօր զնախնական ամուսնուիս
 մարդկան , յորժամ եղբարք ամուսնանային ընդ
 քերց իւրեանց , յորժամ սէրն և եղբայրական
 գորովն յարեալ միաւորեին ընդ միմեանս յա-
 աքինասէր սիրտս մարդկան . և ամբժութի մը-
 տայ և վարուց նոցա առաւելեալ ապահովէր
 պերջանկութիւն նոցա : Բայց աւա՛ղ փոփոխուե-
 մարդկայինս բնութեան . երջանկութիւն նոցա փոյթ
 ընդ փոյթ շփոթեալ խռովեցաւ . նախանձն
 իբրև զօձ սողոսկեցաւ ՚ի սեղանն խոտաւէտ
 ուրանօր արիւնաթաթաւ գառն լինէր պատարա-
 դեալ ՚ի փառս և ՚ի պատիւ ամենակալին . ա-
 պա մոլեկան ախտն այն սկսաւ թագաւորել ՚ի
 վրանին Աբրահամու և յանմեղ անկողինս սրբ-
 բազան պատրիարգայ : Ապա ուրեմն յուսայի՛ր
 դու՛ սիրելի՛ դուստր՛ լինել առաւել արժանա-
 ւոր և առաւել բարեբաղդ քան զայնոսիկ սք
 դերդաստանս , յորոց Քրիստոս Տաճեցաւ ըս-
 կսիլ զիւրն ազգականութիւն ըստ մարդկեղէն
 բնութեան : Ո՛չ խօսեցայց աստանօր զամենայն
 աղմկայ և զՏոգոյ և զգաղանի տրամութեանց՝

որք յառնեն 'ի վերայ մահճաց ամուսնացելոց ։
 Կինն նորոգէ զյաւա իւր յամենայն նուագի ։
 յորժամ ընկողմանի յանկողինս ծննդականի . և
 զիարդ անհնարին զաւ զգասցէ նա 'ի սրտի ։
 Եթէ նորածին տղայն զրաւեսցի 'ի վերայ լանջաց
 իւրոց 'ի կենաց աստի ։

Էտաւն բարձրացեալ կրկնէր զարձագանգա
 ողբերգութեանցն Հուաքելայ , յորժամ ոչինչ
 կարէր մտիթարել զնա սակս կորուսանելոյ ըզ-
 սիրեցեալ որդիս իւր . այնքան դառնակակիծ են
 ցաւքն՝ որք յառաջ գան 'ի սիրելութեանց մարդ-
 կան , մինչ զի մեծապատիւ տիկնայք մեծարեալք
 յարքայից՝ առանձնացեալ են յարքունական պա-
 լատաց 'ի սենեակս միայնակեցութեան , առ 'ի
 ճգնութեամբ մեռուցանել զազականեալ մար-
 տինս իւրեանց ։

Թերևս ասասցես դու՝ զի վերջին օրինակքս
 այսոքիկ ո՛չ վերաբերին 'ի քեզ . քանզի ամենայն
 ցանկութիւն և փափաք սրտի քո էր կեալ յա-
 ռանձին և յանշուք խրճթի միում ընդ սիրե-
 ցեալ առն քում , սակաւ խնդրելով զբարիս
 Հիսկենոսի՝ չնձոյն ամուսնութեան , քան թէ
 զբերկրանս յիմարութեանն այնորիկ՝ զոր պատա-
 նեկութիւնն կոչէ սէր . ո՛վ պատրողութեանս .
 ո՛վ մտայածին խաբէութեանս . ո՛վ ունայնութեանս .
 ո՛վ երևակատակն երազոյս պատրեալ և մոյր-

ընկալ մտայ : Եօ ևս կրեալ եմ զմերիկո խը-
 ուովութեան սրտի . գլուխ իմ ոչ էր յարածամ,
 այսպէս կնտակ և ճարտասպեալ . և սիրտ իմ ոչ
 էր յարածամ այսպէս անդորր և անխուով՝ որ-
 պէս տեսանես դու զայն : Հաւատա՛ դու բանից
 փորձառեալ առն միոյ : Եթէ մարդս յարա-
 տեալ 'ի գորովս կաթոգնութեան իւրոյ՝ կա-
 րէր յարածամ անփոփոխ մտօք սիրել զմի և
 նոյն առարկայն , սէրն անտարակոյս ունէր հա-
 ւասարել զնա երկնային հրեշտակայ . քանզի այս-
 պէս է յաւիտենական երջանկութիւն նոցա . սա-
 կայն հոգի մարդոյ փութով տաղտկանայ 'ի մի
 և նոյն առարկայէ . և ոչ կարէ ընդերկար սի-
 րել զայն հաւասար եռանդեամբ . գոն յամու-
 նայեալ վիճակի իրք ինչ՝ յորս սիրտք երկոցունց
 ոչ համաձայնին ընդ միմեանս . և վէճք այսո-
 ցիկ անհամաձայնութեանց սակաւ առ սակաւ
 նուազեցուցանեն զերջանկութիւն նոցա :

Ձ հուսկն ասացից՝ սիրելի՛ դուստր իմ՝ մարդո
 մեծապէս սխալի յամենայն երեակայական ե-
 րազս երջանկութեան իւրոյ , յորժամ մոռա-
 նայ զտկարութիւն մահուան կցեալ ընդ մարդ-
 կայինս բնութեան : Մեզ ամենեցուն պարտ է
 մեռանիլ , և տարածամբ բաժանիլ յազնուագոյն
 և 'ի կաթոգին ազգականայ մերոյ : Գեղեցկուի
 երեսայ քոյ պարտէր թառամեալ թարջամիլ :

և հաւասարիւ Տողոյ գերեզմանին՝ յորում ամ-
 փոփեալ դնին որդիքն Ադամայ . նա և աչք
 Ճակոտսի ոչ կարէր որոշել զքեզ յայլոյ կա-
 նայն ննջեցելոյ ՚ի Տողակերտ անկողնի : Սերն
 ոչ կարէ տարածել զիշխանութիւն իւր ՚ի վր
 ապականեալ Տողոյ : Ա՛հ՝ զի՛նչ բարբառ իմ եւ :
 Բւնայնութիւն ունայնութեանց : Ձի՛նչ էն սէր
 և կաթոգնութի ապականացու աշխարհիս այտո-
 րիկ : Եթէ հնար լինէր ումեք վերստին կենդա-
 նանալ ՚ի մահուանէ գինի քանի մի ամայ , ար-
 դեօք ողջունեալ ընդունէի՛ն զնա այնոքիկ ան-
 ձինք՝ որք հեղին զյորդառատ արտասուս ՚ի վր
 դագաղաց մահուան նորա : Այսպէս փոյթ եմք
 մեք յարիւ սիրով ՚ի նորանոր առարկայս . այս-
 պէս մեծ է փոփոխականութիւն մարդկայինս
 բնութեան . և այսպէս անյողական է գոյութի
 մեր ևս և ՚ի յիշողութեան բարեկամաց մերոյ :
 Սին իրի գոհութեամբ շնորհակալ լեր զերկ-
 նային տեսչութենէն՝ ով դուստր իմ՝ որ այս-
 պէս փութով հեռացուցանէ զքեզ յայսմիկ
 աշխարհէ տառադանաց և նեղութեան : Սպի-
 տակաոհայլ հանդերձն և երկնային պսակն կու-
 սանայ արդէն պատրաստեալ պահին վս քոյեր-
 կինս : Թուի ինձ լսել զձայն Թագուհւոյն հրեշ-
 տակաց , որ ասէ քեզ՝ Եկ առիս՝ պատուական
 ծառայ իմ . եկ առիս՝ սերովքէ իմ . եկ և բաղ-

մեայ յաթոռ փառայ 'ի մէջ բարեպաշտ անձա-
 անք կուսանայ՝ որք նուիրեալ են զգեղեցկութի
 և զառուգութիւն դիմայ իւրեանց 'ի գործս
 մարդասիրութեան, 'ի հրահանգութիւն մանկանց
 և յայաջխարանս ճգնութեան, եկ խորհրդա-
 ւոր վարդ, և միաւորեա՛ զքեզ ընդ Քրի. փե-
 աայն քոյ երկնային ո՛չ երբեք մերժեսցէ զդա-
 գադն մահուան՝ զոր ընտրեցեր դու վասն անկող-
 նոյ անուանութեան. և սէր նորա եղիցի անընդ-
 հատ և յաւիտենական :

Այսպէս խօսեցաւ ճգնաւորն հինաւորց. Ը
 որում վերջին շառաւիղք լուսոյ փարատեն 'ի
 միջոյ զհողմունս երկնից և սիւնն զպարզութի
 և զպայծառութիւն 'ի լանջս հաստատութեան,
 սոյնպէս և միսիթարական բանք ծերունի ճգնա-
 ւորին զիջուցին զմըրկայոյզ կիրս յարուցեալս 'ի
 լանջս սիրեցելոյն իմոյ Ատալայի : Զանայր նա
 սրտի մտօք առ 'ի թեթեացուցանել զբեռն
 տրտմութեան սրտի իմոյ. և գուն գործեալ
 նկրտէր առ 'ի արիացուցանել զիս զի կարիցեմ
 հանդուրժել մահուան նորա արիութեամբ սրը-
 տի ... երբեմն ասէր թէ զիարդ երջանիկ մահ-
 ուամբ մեռանէր, եթէ ես ջանայի ցամաքեցու-
 ցանել զարտասուս աջայ իմոյ ... երբեմն խօ-
 անէր նա ընդիս զկաթոգին մօրէ իմմէ. և ջա-
 նայր փարատել զանհնարին տրտմութիւն սրտի

իմոյ՝ անկողնով յուշայեղեալ միտս իմ՝ զյիշա-
տակս այլոց իրաց . և ոչ այսչափ միայն՝ այլ և
յորդորէր զիս ՚ի խոկմունս առաքինութեան և
՚ի հնազանդութիւն կամաց երկնաւորին : Ո՛չ
եղիցիս դու յարածամ այսպէս տարաբաղդ՝ ա-
սաց նա . եթէ երկնաւորն առաքէ քեզ զայս
դառնաղէտ թշուառութիւն՝ կամի նա զի եղի-
ցիս դու առաւել ողորմած և գթած առ նե-
ղեալ և թշուառացեալ անձինս : Ո՛վ Ճակտոս՝
սիրտ մարդոյ նմանի այնոցիկ ծառոց՝ որք մա-
տուցանեն զբալասան առ ՚ի ապագինել զվերս
մարդոյ , յորժամ միայն վիրաւորեալ իցէ նա
՚ի սրոյ :

Յորժամ Ատալա դադարեցաւ ՚ի խօսելոյ՝
դարձոյց զերեսս իւր առ միսոնարն . և խնդրեաց
՚ի նմանէ զայն մսիթարութիւն՝ զոր ջանայր մա-
տուցանել վշտացեալ անձինս իմում . և գոլով
նորա մսիթարեալ ՚ի ճգնաւորէն՝ մսիթարէր
զանձն իմ տառապեալ . և այսպէս մատուցա-
նէր և ընդունէր նա զբանն կենաց ՚ի վերայ ան-
կողնոյ մահուան :

Եւ անդն ճգնաւորին և ս քան զև օ ջերմացաւ
հրով ողորմութեան . և անընդհատ պատրաստե-
լով նորա զդեղորայս կամ սպասահարկելով առ
կողմամբ անկողնոյ նորա՝ քաջալերէր նա զԱտալա
ողորմութբն ԱՅ և երանութեամբն արդարոց .

ջաճն կրօնի լինելով 'ի ձեռս ճգնաւորին' առ-
 աջնորդէր Ատալային 'ի պայծառափայլ աշ-
 խարհս և ցուցանէր նմա զճանապարհ երկնից •
 անշուք քարանձաւ միայնակեցին լցեալ էր պայ-
 ծառութեամբ քրիստոնէավայել մահուան նորա •
 և երկնային հոգիքն անտարակոյս իջեալ էին
 առ 'ի տեսանել զհոգեշահ տեսարանն զայն •
 ուրանօր կրօնն միայն մարտնչէր ի սիրոյ , ընդ
 պատանելութեան և ընդ մահուան :

Հաւատն ածպաշտութեան յաղթական հան-
 դիսացաւ • և բարեպաշտ տրտմութիւնն' որ 'ի
 սիրաս մեր կալաւ զտեղի խառնութեց աղմկա-
 յոյզ կրից' էր մրցմակ յաղթութեան նորին :
 Իբրև 'ի ժամ կէս գիշերոյ Ատալա երևէր ո-
 գի առնուլ վերստին առ 'ի կրկնել զաղօթա
 սրբազան քահանային' զորս մատոյց նա առ կող-
 մամբ մահճաց նորին : Չկնի սուղ ինչ ժամա-
 նակի տարածեաց նա զձեռն իւր առիս և ասաց
 թալկացեալ իմն ձայնիւ , զոր հազիւ կարէի լը-
 սել' որդիդ Ովտալլիասեայ' յիշէ՛ս դու զգի-
 շերն զայն , յորժամ համարէիր դու զիս իբրև
 օրիորդ վերջին սիրոյ : Ով զարմանասքանչ գու-
 շակութե աղետալի վիճակին մերոյ : ... Աստա-
 նօր սուղ ինչ զկայ էառ Ատալա • ապա կրկնեալ
 անդրէն ասէ' յորժամ խորհիմ' զի պարտ է
 ինձ մեկնիլ հեռանալ 'ի քէն յաւիտեան :

սիրտ իմ այնքան նկրտի զօրոմալ անդրէն, մինչ
 զի կարծեմ թէ սէրն կարէ զիս անմահացուցա-
 նել. բայց կամք քո եղիցի օրհնեալ, ո՛վ ՏՐ իմ
 երկնային: ... Չկնի սուղ ինչ զկայ առնլոյ՝ դար-
 ձեալ ասաց Ատալա, պարտիմ թողութի խնդ-
 րել ՚ի քէն ո՛վ Ճակտոս վասն նեղութեանցն՝
 զորս պատճառեալ եմ քեզ ... մարմին իմ ՚ի
 հող փոխարկելով՝ հեռացայց յաշխարհէ աստի
 յաւիտեան. ... և զկնի քանի ըուպէից զերծցիս
 դու յամենայն աղետից և ՚ի տառապանաց իմոց:

Արդեօք մարթիցէ՞ ինձ ներել քեզ՝ աղաղա-
 կեցի ես զարմայմամբ և հարեալ յարտասուս.
 արդեօք մարթիցէ՞ ինձ ներել քեզ. ո՞չ ապաքէն
 ես էի՝ որ պատճառեցի քեզ զայսքան վիշտս
 և զտառապանս: Քաղցրիկ բարեկամ, իմ՝ ասաց
 նա ընդմիջելով զբանս իմ՝ դու արարեր զիս
 երջանիկ: Եթէ հնար լինէր ինձ վերստին սկսա-
 նիլ զկեանս իմ յաշխարհի, նախադաս համարէի
 զերջանկութի կարճատև սիրոյ մերոյ յանապատին
 ՚ի սարսափելի վայրս աքսորանաց, քան թէ կեալ
 ընդ երկար և յանդորրու ՚ի բնածին երկրի իմում:

Աստանօր ձայն Ատալայի սկսաւ նուազիլ. թա-
 ղանդք մահուան ծածկեցին զփայլուն զաչս նր.
 և կապուտակ գոյն մահուան փոխանակեաց զլարա
 կարմրերանգ շրթանց նորա. գողգոջուն ձեռք
 նորա երևէին որոնել զպատանս մահուան. և նա

ՋՋՋԵՂՈՎ խօսէր ընդ աներևոյթ Տոգւոյ : Ապա
 ընդունայն ջանայր նա լուծանել զոսկեայ խաչե-
 լութիւնն՝ որ կախեալ կայր զպարանոցէ իւրոյ .
 խնդրեաց նա յինէն Տանել զայն ՚ի պարանոցէ
 իւրմէ . և ասաց նուազեալ իմն ճայնիւ , յորժամ
 զառաջինն խօսեցայ ընդ քեզ մերձ առ փայտա-
 կոյտն մահուան քո՝ նկատեցեր դու զայս նշան
 խաչի փայլեալ ՚ի վերայ լանջայ իմոյ ... այս է
 միայնակ ստայուածն տարաբաղդիկ Ատալայի ...
 Լուպէզ՝ հայր քո և իմ առաքեաց զայս առ
 մայր իմ ՚ի ժամանակի ծննդեան իմոյ ... ընկալ
 զայս յինէն իբրև զժառանգութիւն քո ... ո՛վ
 եղբայր իմ՝ պահեա՛ զայս ընդ քեզ ՚ի յիշատակ
 իմոյ տառապանայ և թշուառութեանց : Անտա-
 րակոյս աղօթեսցես դու առ ողորմածն Աճ յըն-
 թացս կենաց քոյ ... անտարակոյս հեղցես դու
 զկաթիլս արտասուայ ՚ի վերայ գերեզմանին տարա-
 բաղդիկ Ատալայի : Ո՛վ Ճակտոս՝ տակաւին
 ունիմ հայցել զիր ինչ ՚ի քէն ... ժամանակ մի-
 առորութեան մերոյ յայամ երկրի լինելոյ էր
 ասկաւատե և դիւրանցիկ : Ո՛վ ամենասիրելի
 բարեկամ իմ ... բայց զկնի այսր կենաց պատ-
 րաստեալ կայ մեզ կեանքն յաւիտենական ...
 զիա՛րդ սարսափելի լինէր ինձ առ ՚ի բաժանիլ
 ՚ի քէն յաւիտեան : Ես միայն յառաջընթաց
 ընիմ երթալ ՚ի հանդերձեալ կեանս . և եր-

Թամ սուգասել քեզ յարքայութեանն երկնից ...
 եթէ դու սիրեցեր զիս ո՛վ պատանի կուսպաշտ,
 ընկա՛լ զայն հաւատն քրիստոնէութեան՝ ող
 ունի միաւորել զմեզ 'ի միւս կեանս անվախճան
 երանութեամբ : Երկնային կրօնն այն գործէ
 զանհնարին հրաշս, յորժամ թոյլ տայ ինձ
 հեռանալ մեկնիլ 'ի քէն առանց յուսահատու
 թեան ... Էս միայն խնդրեմ զխոստումն ինչ 'ի
 քէն . քաջայայտ է ինձ աղետալի կատարած
 այսպիսի անխորհուրդ ուխտի ... գուցէ մահա
 ուիթ երդումն այն զրկեսցէ զքեզ յայլմէ կնոջէ՝
 որ իցէ առաւել բարեբաղդիկ քան զիս ...
 հնար է՝ ումեք սիրել զքեզ զօրէն Ատալայի ...
 ո՛վ մայր իմ՝ թող զյանցանս խելագարեալ դստեր
 քոյ ... ո՛վ դշխոյդ կուսանաց ... գթացեալ
 ողորմեա՛ թշուառական անձինս ... անկանիմ վերս
 տին 'ի տկարութիւն իմ առաջին ... դարձու
 ցանեմ զխոկմունս իմ 'ի քէն ո՛վ Տե՛ր՝ յոր
 ժամ պարտիմ ուղղել զամենայն զմիտս իմ առ
 'ի հայցել զողորմութիւն քոյ երկնային :

Այսպէս խօսեցաւ Ատալա . յաղթահարեալ
 իմ 'ի ցաւոց տրտմունք, և սիրտ իմ ուռուցեալ
 հեկեկանօք և հառաջանօք՝ խոստացայ Ատալայի
 դառնալ յօրէնս քրիստոնէութեան . մեծարոյ
 քահանայն ներշնչեալ յերկնային իմն ազդեցուէ՝
 յարեալ 'ի տեղոջէ իւրմէ . և տարածեալ զբա

զուկս իւր դէպ առ յարկն քարանձաւին՝ ասաց
 թէ ասան եհաս ժամանակ առ ՚ի աղօթիւք դիմել
 առ ամենակալն Աճ: Յարտասանել նորա զայս
 բան՝ թուէր թէ աներևոյթ զօրութիւն ինչ
 ստիպէր զիս առ ՚ի գեղնամածեալ տարածել
 զանձն իմ առ կողմամբ մահճայն Ատալայի:
 Ճգնաւորն եբայ զխորշ ինչ գաղտնի, ուլանօր
 պահէր զտապան մի ոսկի ծածկեալ մետաքսեայ
 քօղով. ՚ի գուճս խոնարհեցաւ նա ջերմեռանդն
 բարեպաշտութեամբ. քարանձաւք երևէր լու-
 սաւորեալ ՚ի պայծառութենէ ոսկեայ տապանին
 այնորիկ: Թուէր թէ լսէի զձայնս երկնային
 նուագարանայ և զքաղցրահնչիւն երգս հրեշտա-
 կայ: Յորժամ սրբազնեալ ճգնաւորն եհան ար-
 տաքս զսուրբ տապանն ՚ի խորանէ անտի՝ թուէր
 ինձ թէ մեծազօր հոգին ելանէր փառօք ՚ի
 վիմէ անտի:

Քահանայն ՚ի բայ ձգեաց զքօղն տապանին.
 էառ անտի զնշխար մի սպիտակ իբրև զձիւն.
 և կալեալ զայն մատամբք իւրովք՝ մերձեցաւ
 առ մահիճս Ատալայի՝ ասելով զբանս խորհրո-
 գաւորս: Անչասպառ սրբուհին Ատալա զաչս
 իւր յերկինս ամբառնայ. երկնային խորհուրդք
 յափշտակեն զմիտս նորա. տեղի տան դադարին
 ամենայն տառապանք նորա. երկնացու հոգին
 երևի սաւառնել ՚ի վերայ գոմատեալ շրթանց

նորա • և կիտարաց բերան նորին խոնարհական
 յարգանք ընդունի զԱճ ծածկեալ ընդ տեսակա
 խորհրդաւոր հային : Բարեպաշտ քահանայն
 Թանայ զսակա ինչ բամբակ յիւղ ինչ սրբազնա
 ւործեալ • օծանէ նովա զձական նորա • առ
 ժամանակ մի հայի վերայեալ մտօք ՚ի կերպարան
 Ատալայի • և ապա ասէ յանկարծակի զայս բան
 սոսկայի , գնա՛ հոգիդ քրիստոնէի • և միառ
 բեա՛ զքեզ ընդ քումդ ցանկայի արարչի :

Ապա ամբարձի ես զգլուխ իմ նուազեալ և
 ասայի հառաչմամբ , ո՛վ հայր պատուական ,
 անոյշ իւղս այս կենդանացուսցէ՛ արդեօք զսիրե
 լին իմ զԱտալա : Այո՛ ասայ սուրբն հինաւուրց
 անկանելով ՚ի գիրկս իմ • անոյշ իւղս այս տայե
 Ատալայի զկեանս յաւիտենական : ... Զգնաւորն
 դադարի ՚ի խօսելոյ ... կենսական ջերմութիւն
 բարձեալ յԱտալայե՛ հողանիւթեայ մարմին նր
 դնի ցամաքեալ և ցրտայեալ ՚ի վերայ երկրի •
 ասա՛ երեւի յանդիման տեսարան աղետալի : ...

Աստուծո պատմանձի ՚ի ցաւոց լեզու Զակտո
 սի • վտակք երկոքին յականց սրտի նորա բըղ
 խեայ՝ առողանեն զնա ՚ի դառնաղէտ արտաս
 ուայ միջի • հեկեկանք հեղձամուղձ առնեն
 զբարբառ ՚ի նորուն բերանի : Աուրայեալն Զակ
 տոս բանայ զլանջս իւր յայսմ վայրի • և հանե
 անտի զնչան խաչելութեն Ատալայի : Տես՛ ո՛վ

Ռենի՛ ասէ նա ցորդեգրեալ Գաղղիային իւր սիրելի՛ տեն զայս առ Տաւատչեայ սիրոյ և Թըշուառութեան : Ո՛վ որդեակ իմ՝ դու կարես տեսանել զայն սակայն ինչ չէ՛ հնար տեսանել զայն աւելի : Ասա՛ ինչ թէ զկնի այսքան ընդերկար ամայ արտասուք իմ թողեալ են արդեօք զնշան ինչ՝ ի վերայ այսր ոսկեայ խաչելութեան : Կարե՛ս դու գտանել ՚ի նմա զտեղին զայն՝ զոր Ատալա յաճախակի համբուրեր շիթամբք իւրովք : Ընդէ՛ր ծերունի Ճակտունս ո՛չ է դարձեալ յօրէնս քրիստոնէից : Զի՛նչ ընդունայն պատճառք քաղաքականութեան կարեն պարտաւորել զիս առ ՚ի յարատեւել յօրէնս կռապաշտութե՛ն նախահարց իմոց : Քա՛ն լիցի . այլ ո՛չ ևս յապաղեցայց առ ՚ի դառնալ յօրէնս քրիստոնէից երկիրն գոչելով աղաղակէ առիս բարձրաձայն , երբ արդեօք իջցե՛ս դու ՚ի գերեզման : Ընդէ՛ր յապաղիս դու առ ՚ի ընդգրկել զՏաւատն քրիստոնէական :

Ո՛վ երկիր՝ ճշմարիտ են բանք քո . այլ ո՛չ ևս սպասեսցես դու ինչ ընդերկար : Յորժամ քահանայ ոմն մաքրեսցէ յաւազանին մկրտութե՛ն զգլուխ իմ սպիտակացեալ ծերուք և տրամուք , յուսամ՝ զի արժանայայց միաւորիլ է՛ Ատալային իմոյ յաւիտեան . սակայն այժմ՝ արժան է ինչ կրկնել անդրէն զպատմութե՛ն իմ թաղձողական :

ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ՝

Ո՛վ Ռեհի՛ չէ՛ հնար ինձ աստանօր նկարագր-
 րել զայն զառանցեալ յուսահատուի՛ որ պա-
 տեաց պաշարեաց զհոգի իմ վհատեալ, յորժամ
 տեսի զսիրելին իմ զԱտալա բարձեալ զբաւեալ
 ՚ի կենաց աստի • այսպիսի նկարագրութիւն կա-
 րօտի մեծագոյն եռանդեան՝ քան զոր. ունի այժմ
 հոգի իմ աղեբէկ և տրտմազգեաց • Քա՛ւ լի-
 ցի • յորժամ լուսինն դադարեսցի յաւիտեան ՚ի
 սփռելոյ զարծաթափայլ լոյս իւր ՚ի վերայ անա-
 պատին կենտուկեայ, յորժամ գետն Ո՛հիոյ՛ որ
 այժմ յառաջ մղէ զնաւակն մեր՝ դադարեսցի
 ՚ի խոխոջաձայն գնացից իւրոց, յայնժամ և
 դադարեսցին աչք իմ ՚ի թափելոյ զարտասուս
 վասն տալաբաղդիկ Ատալայի • Յաւուրս երկուս
 կայի ուշայեղեալ և ընդարմացեալ • ո՛չ կարէի
 իմանալ զմխիթարական բանս բարեբարոյ ճրգ-
 նաւորին • Այն այն աստուածագգեաց ջանայք

ամփոփանօք իւրովք փարատել զամպ տրտմութեան 'ի սրտէ իմմէ . մխիթարական բարք նորա ոչ հայէին յիրս ընդունայնս և յաշխարհայինս . այլ էին համառօտ և լցեալ հոգևով աստուածպաշտութեան : Նա միայն ասէր՝ այս է կամք ամենակալին . և ապա գիրկս էարկ ինձ հայրական սիրով : Եթէ ոչ էի զգայեալ զսփոփանս 'ի բանից բարեպաշտ քրիստոնէին այնորիկ , ոչ կարէի երբէք հաւատալ զի այսքան մխիթարական էր հաւատն քրիստոնէական :

Քաղցրութի՛ բարեպաշտութի և անփոփոխելի համբերութի ծառային մեծագոր ոգւոյն՝ 'ի վերջոյ յաղթահարեալ նուաճեցին զյուսահատութիւն իմ՝ զաւանցեալ . հեղոյր նա վասն իմ՝ զդառն . արտասուս . և ամաչեալ իմ յարտասուաց նորա ասացի , ով հայր՝ վիշտք թշուառական պատանուոյ միոյ այլ ոչ ևս խռովեսցէ զանդորրութիւն անձին քո . թոյլ տուր ինձ տանիլ ընդիս զողբալի նշխարս սիրեցելոյն իմոյ Ատալայի . թաղեալ ամփոփեցից ես զմարմինս նորա 'ի հեռաւոր տեղւոջ իմիք յայսմիկ անապատի միայնակեցութեան . և էթէ անձն իմ՝ դատաւարտեալ է առ 'ի կեալ յաշխարհի թըշուառութի , ջանայայց արժանանալ երկնային հարսանեայն՝ զոր խոստացաւ ինձ սիրելին իմ Ատալա : Զգնաւորն զուարճայեալ մեծագէս է վե-

րադարձեալ արիութիւն սրտի իմոյ՝ աղաղակեաց
 յափշտակութեամբ մտաց, ով Տէր՝ որ Տեղեօ
 զսյատուական արիւն քո վասն թշուառութեց
 անձանց մերոց, զարմանալի հրաշագործութեամբ
 ողորմիս թշուառացեալ պատանուոյս այսմիկ ։
 Փրկեսցես դու զթշուառական պատանին ։ Հա-
 ճեաց դարձուցանել զանդորրութիւն ՚ի խու-
 վեալ միտս նորին. և միայն թող ՚ի յիշողութե
 նր զօգտաւէտ և զխոնարհամիտ յիշատակ թըշ-
 ուառութեանց նորին ։

Այսպէս խօսեցաւ ճգնաւորն սրբազնեալ. ո՛չ
 կամեցաւ նա տալ ինձ զանչնչացեալ մարմին սի-
 րականին իմոյ. այլ յառաջադրեաց յողովել ՚ի
 միասին զյողովուրդ իւր ողջոյն. և թաղեալ
 ամփոփել զդուստրն Լուսեղի ըստ պատշաճաւոր
 ծիսի քրիստոնէական յուղարկաւորուն ։ Սակայն
 ընդդիմացայ ես այսմիկ յառաջադրութե ասե-
 լով առաքինութիք և թշուառութիք Ատալայի
 անձանօթ էին այլոց մարդկան. եկայք դու և ես
 ՚ի միասին բրեսցո՛ւք զգերեզման մի յայսմիկ ա-
 ռանձնաւոր անապատի. և թաղեսցո՛ւք աստանօր
 զմարմին վաղամեռիկ օրիորդին ։ Ճգնաւորն հա-
 ճեցեալ ընդ բանս իմ՝ յառաջադրեաց ելանել
 ընդիս ՚ի միւսում աւուր ՚ի ծագել առաւօ-
 տուն. և թաղել զօրիորդն ընդ բնական կամը-
 ջաւն մերձ առ անապատ մահդւան. և այսպէս

եղաք մեք 'ի մտի մերում անցուցանել զգիշերն
աղօթիւք առ կողմամբ ցրտացեալ մարմնոյ հան-
գուցելոյն :

'ի հասանել երեկոյին տարաք մեք զանկենդան
վկայուհին 'ի բերան քարանձաւին առ կողմն
հիւսիսային . ճգնաւորն պատեալ էր զմարմինս
նորա 'ի կտաւս գործեցեալս ձեռօք մօր իւրոյ
յեւրոպիա : Բերեալ էր ծա զայս կտաւ յերկրի
իւրմէ . և յընդերկար ժամանակաց հետէ պահ-
պանեալ էր զայն 'ի պէտս պատանաց իւրոյ ըզ-
կնի մահուան : Ատալա անկեալ կայր 'ի վերայ
մահճաց յօրինելոյ յամփոփուկ կամ 'ի պատկա-
ռուկ խոտոյ . ոտք , գլուխ , ուսք և կուրծք
նորա կ'սով ջափ ոչ էին ծածկեալ . Թառա-
մեալ մագնոլիա ծաղիկ մի զարդարէր զհետ
նորա այս այն ծաղիկն էր՝ զոր ես եղեալ
էի 'ի վերայ գլխոյ նորա յառաջագոյն առ 'ի
բեղմնաւոր պունել զօրհորդն զայն : Արթունք
նորա՝ որք էին իբրև զթառամեալ կոկոնս վար-
դոյ՝ երևէին ժպտիլ անզօր մեղմուք . քանի մի
ժիրանագոյն երակք տակաւին երևէին 'ի թար-
շամեալ այտս երեպաց նորին . դէմք նորին առա-
ւել սպիտակափայլ էին քան զաղաբաստր . գե-
ղաղէչ արտեւանուք նորա էին կափուցեալ .
պարկէ շտաշարժ ոտք նորա էին միաւորեալ ընդ
միմեանց . և ճիւնափայլ ձեռք նորա ունէին 'ի

վերայ ան շարժ սրտի նորա զխաչ մի աբանոսեայ՝
մահառիթ անրակն կախեալ կայր զկրծոց նորա •
երևէր նա յտիշտակեալ ՚ի հոգւոյն տրտմուեի,
և հանգուցեալ մեղմով ՚ի կրկին նինջս անմե-
ղութի և մահուան : Աչ էր իմ սեսեալ եր-
բէք զայսպիսի առարկայ իմն հրեշտակային . և
եթէ ոք տեսանէր զնա՝ ոչ գիտելով թէ էր նա
սիրով հոգիաւորեալ՝ անտարակոյս ունէր հա-
մարել զնա իբրև զպատկեր կուսութեան հա-
մակեալ ՚ի նինջս քնոյ :

Զգիշերն ողջոյն ձգնաւորն պարապեր ՚ի
պաղատանս երկնային ջերմեռանդութեան . նըս-
տեալ կայի ես անխօս անմուռնչ լուութեամբ
և թաղձութեամբ առ գլխով մահճայ յուղար-
կաւորութեանն Ատալայի : Արքան յաճախակի
եղեալ էի զցանկալի գլուխ նր ՚ի վերայ ծըն-
գայ իմոց ՚ի նինջս քնոյ նորա : Արքան յաճախա-
կի կորացեալ իմ ՚ի վերայ գեղատեսիլ կեր-
պարանայ նորա՝ ունկնդիր էի եղեալ քաղցրա-
լուր բանից նորա . և ձգեալ էի յիս զանուշա-
ւետ շունչ նորա . բայց աւարդ փոփոխեալ տե-
սարանիս . ոչինչ մեղմաճայն մնչիւն ելանէ այժմ
՚ի գունատեալ շրթանց նորա . ընդունայն լիցի
ինձ սպասել առ ՚ի տեսանել զսիրելի Ատա-
լայն իմ զարթուցեալ ՚ի քնոյ :

Իողդոջուն լուսինն մատակարարէր զայլա-

գունեալ լոյս իւր Թաղձագին տքնութեան մե-
 րում : Յարուցեալ էր նա ՚ի կամարս երկնից
 իբրև զօրհորդ մի գեղեցիկ՝ որ գայ առ ՚ի ար-
 տասուէլ ՚ի վերայ դագաղաց ընկերին իւրոյ .
 և սիւռէր ՚ի վերայ տեսարանին զաղջամուղջ
 իմն տխրագին : Երբեմն երբեմն միտնարն ար-
 կանէր զփունջս ծաղկանց ՚ի ջուր ինչ տեսունա-
 գրեալ . և լուանայր զանկողինս մահուան երկ-
 նային ցօղովն այնուիկ . ապա վաղէմի իմն եղա-
 նակաւ երգեաց նա զՏետագայ տունս ՚ի նախնի
 բանաստեղծէ միոյ՝ Յովբ անուանելոյ :

Որ իբրև զծաղիկ ծաղկեալ Թօթափեցաւ .
 խոյս ետ իբրև ստուեր և մի կայցէ :

Ընդէ՛ր տուաւ լոյս նմա՝ որ կայ ՚ի Թշուա-
 ուութեան : Եւ ընդէ՛ր տուաւ կեանք նմա՝ որ
 տառապեալ է՝ հոգևով :

Այսպէս երգեաց սուրբն հինաւուրց : Ըն-
 Թերակայ անտառն կրկնէր անդրէն զարձագանգ
 ահեղ և դողդոջուն ձայնի նորա . և մերձուկայ
 հեղեղք և շրջագատեալ լերինք կրկնէին զան-
 ուանս ԱՅ և գերեզմանի . տրտմաձայն եղա-
 նակունքն տատրակայն Վերգինիոյ , կարկաջահոս
 ալիքն գետորէից , ձայն զանգակին որ հրաւիռէր

զճանապարհորդս 'ի տեղի ապաւինի' միաւորեալ
խառնէին 'ի կեղերջական ձայն յուղարկաւո-
րութեան: Թուէր ինձ լսել յանտառս մահուան
զձայնս հողուոյ հանգուցելոյ, որք ձայնակից լի-
նէին բարեպաշտ ճգնաւորին տխրամած իմն եր-
գեցողութեամբ:

Հորիզոնն արեւելից փայլէր յայսմ ժամու ոս-
կեփայլ ճառագայթիւք. խայտափետուր բազէքն
և մեծամագիւղ որիքն ճշէին 'ի վերայ վախից և
սեպացեալ ժայռից. և սամոյրքն աճապարեալ
դիմէին 'ի ճեղքուածս վաղեմի կնձնի ծառոց.
ասն և հաս պայմանադրեալ ժամն յուղարկա-
ւորութեն Ատալայի. եդի ես զանխօս զան-
կենդան մարմին վկայուհւոյն 'ի վերայ ուսոց ի-
մոց. ճգնաւորն ճեմելով երթայր առաջի իմ'
ունելով զբահ մի 'ի ճեռին իւրում. իջանէաք
մեք ժայռից 'ի ժայռս. հասակ ծերութեան
և արհաւիրք մահուան միօրինակ յամեցուցանէ-
ին զգնացս ոտից մերոց: Յորժամ տեսանէի ըզ-
չունն զայն' որ գտեալ էր զմեզ յառաջ 'ի
մէջ անտառաց, և այժմ ընթանալով առաջի
մեր սուցանէր մեզ զճանապարհն սաւազին' հե-
ղեղք արտասուաց գետօրէն հոսէին 'ի նսեմա-
ցեալ աչաց իմոց: Երկայն հիւք վարսիցն
Ատալայի շարժեալ 'ի հնչմանէ առաւօտեան
հողմոյ' յաճախակի մթագնէին զաչս իմ. կորա-

ցեալ իմ ընդ ծանրութեամբ պատուական բե-
 ուին՝ յաճախակի պարտաւորեալ լինելի վետե-
 ղէւ զսիրելին իմ՝ ՚ի վերայ խոտոյ և նորոգել
 զկարողութիւն անձին իմոյ : ՚ի վերջոյ ժամա-
 նեալ Տասաք մեք ՚ի տեղին ողբալի . զկայ ա-
 ուեալ դադարեցաք ընդ կամարաւ բնական կամը-
 ջին : Ա՛վ սիրելի որդեակ իմ Ռենի , զիարդ
 տխրամած էր տեսարան յուղարկաւորութեանն .
 պատանի վայրագ ոմն և ծերունի քահանայ ոմն ՚ի
 գուճա խոնարհեալ Տանդէպ իրերայ՝ տրտմութե-
 պարագէին ՚ի բրէւ զգերեզման մի վասն սիրա-
 կան վաղամեռիկ օրիորդի միոյ , որոյ անկեն-
 դան զգայազիրկ մարմինն տարածեալ կայր ՚ի վր
 չորացեալ երկրի :

Յորժամ կատարեցաք զտրտմալի բրումն գե-
 րեզմանին , վետեղեալ ամփոփեցաք զգեղատե-
 սիւ օրիորդն զայն ՚ի հողակերտ անկողնի նորին :
 Աւա՛ղ ունայնութեան մարդկայինս յուսոյ . ակն-
 կալեալ յուսայի ես պատրաստել նմա զայլ իմն
 անկողին բերկրալի : Աւեալ իմ զսակաւ ինչ
 հող ՚ի ձեռս իմ՝ լռիկ և տխրամած ակնար-
 կութեամբ հայեցայ վերջին անգամ յանջնջա-
 ցեալն Ատալա . աւգա արկեալ սիւռեցի զհողն
 վաղեմի ՚ի վերայ երեսայ վաղամեռիկ օրիորդի
 որ տեսեալ էր զչլջանս ութնևտասն գարնա-
 նային եղանակի : Տեսանէի զգեղաղէ շրէմս նր .

և երկնային կերպարան նորա սահաւ առ սահաւ
աներևութայեալ չքանայր յայնկոյս առագաս-
տին յախտենականութեան. ձիւնափայլ կուրծք
նորա երեւեր ամբառնալ ՚ի սեւթոյր հողոյն
իրբև զչուշան, որ համբառնայ զչքնադատեսիլ
գլուխ իւր ՚ի սեւթոյր գետնոյ : Լոպէզ՝ ա-
ղաղակեցի ես մեծաւ հառաչմամբ՝ Լոպէզ տես
զորդի քոյ. որ թաղեալ ամփոփէ զմարմին քեռն
իւրոյ : Ասայեալ իմ զայս բան՝ ծածկեցի
զԱտալա միանգամայն հողով քնոյ և հանդստեան :

Այս ածադարեալ դարձաք անդրէն ՚ի քա-
րանձաւ միայնակեցին. և ես յայտնեցի բարեպաշտ
քահանային զդիտաւորութիւն իմ առ ՚ի բնակիլ
ընդ նմա յառանձնակեցութեան : Սուրբն այն
բարե շնորհ՝ որ կատարե լապէս ծանօթ էր փո-
փոխութեանց սրտի մարդկան՝ իսկ և իսկ ծա-
նեաւ զի անհնարին տրտմութիւն սրտի իմոյ էր
պատճառ այսորիկ դիտաւորութեան իմոյ : Նա
ասայ՝ Ճակտոն՝ որդի Ուտալիստեայ, մինչ կեն-
դանի էր Ատալա, ստիպէի ես զձեզ առ ՚ի բնա-
կիլ յանապատս յայտոսիկ. սակայն այժմ՝ փոխո-
խեցաւ վիճակ քոյ. և դու պարտիս երթալ և
բնակիլ ՚ի բնածին երկրի քում : Հաւատոն ինձ
սիրելի՛ որդեակ իմ, զի տրտմութիւնն ոչ է
յախտենական. թէպէտ և տրտմեալ իցէ սիրտ
մարդոյ, սակայն տրտմութիւն թողցէ զսիրտ նորա

'ի վերջոյ . և այնքան մեծ և սնուցատու լինի է՛ բարե-
 բարութիւն բարձրելոյն , մինչ զի չէ՛ մարթ մեզ
 լինիլ ողորմելի և ազերջանի՛լ յաւիտեան . քան-
 զի աջ բարեբարութեան նորա հեղու 'ի վերա-
 ւորեալ հոգիս մեր զբալասան մոռայութեան և
 Գնա՛ դու աստի յեզերս գետոյն Մեսեոսիպեայ .
 գնա՛ և սիրովանօք միսիթարեան զսիրտ մօր քոյ , որ
 յամ աւուրս ողբալով արտասուէ սակս պանդ ըն-
 տութեան անձին քոյ . և ոչ այս չափ միայն՝ այլ
 և կարօտի նպ օգնակամութեան քում 'ի ծաղ-
 կեալ հասակի ձերութեան իւրում : Հրահան-
 գեան զքեզ 'ի սկզբունս կրօնի սիրելելոյն քոյ
 Ատալայի . և մի՛ երբէք մոռանար զբանն զայն՝
 զոր խոստայար նմա . այսինքն է՛ յարժամ ըն-
 թանալ զճանապարհ առաքինութեան , և սրտի
 մտօք ընդգրկել զսուրբ հաւատն քրիստոնէու-
 թեան : Ես մնայից աստանօր և զգուշայայց գե-
 րեզմանի թշուառացեալ քեռն քոյ : Գնա՛
 աստի որդեակ իմ . ամենակալ տեսուչս վերին ,
 հոգի քոյոյ սիրելեալ Ատալային և բարեմաղ-
 թութիք քոյոյ հինաւուրց բարեկամին՝ ուղե-
 կից եղիցին քեզ 'ի վայրս անազատին :


Այսպիսոսեպաւ այրն սրբազնեալ և լեռնա-
 բնակ . իշնանուի նր էր կարի մեծ . և խմաստուի
 նորա էր կարի խորին , որում չէր հնար ինձ կա-
 մակորութեամբ լինիլ անհնազանդ : 'ի միւսում

առուր մեկնեցայ ես 'ի քարանձաւէ մեծարոյ
 ասպնջականին իմոյ . որ գիրկս արկեալ ինձ հայ-
 րական սիրով ետ ինձ զվերջին խորհուրդս իւր
 և եհեղ վասն իմ զվերջին զարտասուս իւր :
 Աստի մեկնեալ գնացի առ գերեզմանն ողբալի
 Ատալային իմոյ . զարմացեալ էի ես հիացմամբ
 'ի տեսանել 'ի վերայ նորին զխաչ մի փոքրիկ՝
 զոր կարծէի լինիլ իբրև վերին կայմ ինչ խոր-
 տակեալ նառու երևեալ 'ի հեռուստ : Իսկ և
 իսկ ծանեայ զի սրբակրօն ճգնաւորն եկեալ էր
 անդանօր յայնմ երեկոյի առ 'ի աղօթել 'ի վր
 գերեզմանին Ատալայի : Այսնչան բարեպաշտու-
 թեան և բարեկամութեան նորա ելից զաչս իմ
 յորդառատ արտասուօք : Կ. Լէի բանալ զգե-
 րեզմանն առ 'ի անգամ մի ևս հայիլ ակնար-
 կութեամբ յանշնչացեալ մարմին սիրականին ի-
 մոյ Ատալայի . սակայն երկիւղ ինչ կրօնի ար-
 գել զիս սու 'ի բաց դարձուցանելոյ զկախարիչ
 գերեզմանին : Բազմեցայ ես 'ի վերայ դալար
 հողակոշտի . եղեալ զարմեկունս իմ 'ի վերայ
 ծնգայ իմոյ՝ ձեռք իմ նեցուկ եղեն ծանրա-
 բեռնեալ գլխոյ իմոյ . և ես անկեալ կայի
 'ի խորին խորհուրդս ցառոյ և տրտմութեանս
 Ո՛վ Ռեհի՛ անդանօր մերձ առ գերեզմանն սի-
 րեցելոյն իմոյ խորհեցայ մտադրութեամբ զու-
 նայութենէ կեհաց մարդոյ , ևս թողաւել զմե-

Ծագոյն ունայնութենէ մարդկային յանկութեց ։
 Աւարճ սիրելի մանուկ իմ՝ ո՞վ որ իցէ 'ի վր
 աշխարհի ։ որ ջիցէ խորհեալ զունայնութենէ
 այսր կենցաղոյ և մարդկեղէն բաղձանաց ։ Եմ ես
 իբրև զհինաւուրց եղջերու մի բնակեալ 'ի մէջ
 անապատին ։ և ոչ այսչափ միայն՝ այլ և աւուրք
 կենաց իմոց երկարաձգեցան իբրև աւուրք կենացն
 ազուառու ։ յնթացս տրտմագին և տաղտկալի կե-
 նաց իմոց ոչ երբէք տեսեալ է իմ զայր մի՝ որոյ
 երջանկութ յոյնն ո՞չ էր 'ի դերև ելեալ և ունայ-
 նայեալ ։ և ո՞չ եմ տեսեալ երբէք զայր մի՝ որոյ
 սիրտն ո՞չ էր զանխլաբար վիրաւորեալ տրտմութ ։
 Աւարճ երեոյթք աշխարհային իրաց են պարզ նման
 բնական ջրհորոյն մարգագետնոյն Ալակուայի ։
 երեսք ջուրց նորա են վճիտ և հանդարտ ։ սա-
 կայն եթէ որ հայեացի 'ի յատակս նորին՝ իսկ
 և իսկ տեսցէ զզարհուրելի կոկորդիլոսն՝ որ
 կեայ և մնանի 'ի ներքոյ ջրոց նորին ։

Տեսի ես զարեգակն ծագել և մտանել յեր-
 կրին տրտմութ ։ 'ի միւսում առաւօտու՝ յոր-
 ժամ հաւալուան զառաջինն ճշիլով աղաղակել
 մութացեալ աճապարեցի ես առ 'ի մեկնիլ հե-
 ռանալ 'ի սրբանուէր գերեզմանէ անտի ։ Թողի
 ես զգերեզմանն զայն իբրև զսահման ինչ՝ յորմէ
 պարտէի մտանել 'ի ճանապարհ առաքինութ ։
 Երեցս ողբագին ձայնիւ՝ ետաւ զողջոյն հրո-

Ժարական սիրեցելոյն իմոյ Ատալայի . և երկոյս
կամարն բնական կամրջին կրկնեաց անդրէն զտխրա-
գին արձագանգս ձայնի անմիտիթար Ճակոտ-
սին : Ետու ես զողջոյն նորածագ առաւօտուն . և
նկատեցի ՚ի հեռուստ ՚ի խորտաբորտ ճանա-
պարհս լերին զհինաւորց ճգնաւորն սրբազնեալ
որ աճապարելով երթայր յօգնութիւն ուրումն
անտերունչ քրիստոնէի : Յայսմ վայրի գետ-
նամածեալ անկայ ՚ի վր գերեզմանին Ատալայի .
և աղաղակեցի արտասուածայն՝ հանգիւր աստանօր
յանդորրու յայսիկ օտար երկրի՝ ո՛ր օրիորդ
ոլորմելի և արտասուելի . իբրև զպարգև վասն
սիրոյ քոյ , վասն տարագրութեան և տարաժամ
մահուան քոյ՝ Ճակոտս ևս պարտի թողու
լքանել զքեզ յախտեան : Յորժամ տայի Ա-
տալայի զվերջն ողջոյն իմ՝ հրաժարական , գետք
արտասուաց հեղուին յորդառատ յուռուցեալ
աչաց իմոյ . զատեալ բաժանեցի զանձն իմ ՚ի
թաղձագին տեղոջէ անտի առանձնութե՛ն թող-
լով առ ստորոտով հոյակապ մահարձանին բնուե՛
ղմահարձան մի առաւել հոյակապ և շքեղ՝
զխոնարհ գերեզմանն ասեմ առաքինութեան :





Յիշիր տարած եւզ զանձն իմ ի վերայ գերեզման,
 Երև' համբարեցի գայն:



ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ:

Ճակտոս՝ որդի Ուտալիսեայ յազգէն Նատ-
 ջեայ, պատմեայ զայս պատմութիւն յականջս
 Ռենւոյ՝ որդեգրին իւրոյ Եւրոպացւոյ: Ամերի-
 կայի Տարք պատմեալ են զայն՝ ի լսելն որդւոյ
 իւրեանց. և ես ճանապարհորդեալ յայտսիկ
 օտար սահմանս Ամերիկոյ՝ լուայ զպատմութիւնս
 զայս ի բերանոց արեւմտեան հնդկաց. և ի գիր
 արձանայուցի զայն հաւատարմութեամբ՝ յօգուտ
 և ի զբօսանս ընթերցողաց:

Գտի ես զբազում օգտաւէտ պարագայս
 յայտսիկ պատմութեան. տեսի ի սմա զնկարա-
 գրութիւն որսորդին, հողագործին, կրօնին,
 առաջին օրէնսդրին վայրենեաց, և վտանգայն
 անգիտութեան և կոյր նախանձայուզութե կրօնի.
 տեսի զնոսա հակադրեալ ընդ լուսաւորեալ
 բարեպաշտութեան, ընդ համբերութեան և ընդ
 ճշմարիտ հոգւոյ աւետարանին. տեսի ի սմա

զբազմապատիկ մրցմունս կրից և առաքինութե
յասպարիզի անխարդախ սրտի . և ՚ի վերջոյ տեսի
զկրօնս քրիստոնէական յաղթական հանդիսացեալ
՚ի վերայ խռովայոյզ խորհրդոց և ՚ի վերայ
սարտափելի երկիւղի սիրոյ և մահուան :

Յորժամ լուայ զայս պատմութիւն ՚ի բերա-
նոյ Սիմիղոնի ուրուք , համարեցայ զայն կարի
ազդողական և պիտեան . քանզի ցուցանէր նա ՚ի
բանս իւր զայն վայրենի պերճախօսութիւն և
զայն ազդողական պարզմտութի , զոր շեղե ինձ
հնար ցուցանել ՚ի նկարագրուե այսորիկ պատ-
մութեան : Սակայն պակասութիւն ինչ գոյր ՚ի
պարագայս պատմութե նորին . քանզի զոչինչ
պատմեայ նա զկատարածէ կենայն հայր Աբ-
րուոյն՝ բարեպաշտօն ճգնաւորին . թէպէտ և
բազմիցս կամեցայ իմանալ զվերջին զանցս կենայ
նորին , բայց ոչ ոք կարայ տալ ինձ զճանօթու-
թիւն ինչ զնմանէ . և տակաւին ունէի մնալ
անճանօթ կատարածի ճգնաւորին , եթէ վերին
տեսչութիւնն՝ որ տնօրինէ զամենայն ինչ յաշ-
խարհի՝ ոչ էր ըստ պատահման յայտնեալ ինձ
զվախճան կենայ նորին :

Ըրջեալ էի ես ՚ի գետեզերս Մեսոսսի-
պեայ մինչև յայնտսիկ կողմանս հարաւոյ՝ որք են
հոյակապ սահմանք նորոյ Գաղղիոյ . սիրտ իմ
բորբոքեալ էր եռանդեամբ հետազօտութեան

առ ՚ի տեսանել զկարկաչասահանս Նիագարայ՝
 որ է հրաշալի գործ բնութեան հիւսիսային Ա-
 մերիկոյ: Ժամանեցի ես մերձ յայն անհուն կար-
 կաչասահանս . և երեկօթս արարի յերկրին յայն-
 միկ՝ որ ՚ի հնուքն էր ընդ իշխանութբ Ագոն-
 նոնսիոնի: Մինչ յառաւօտու միում ճեմէի
 ՚ի զուարճալի մարգագետինս, տեսի զմատաղա-
 ւուրց կին ոմն նստեալ ընդ հովանեաւ ծառոյ
 միոյ՝ ունելով ՚ի գոգս իւր զմարմին վաղամե-
 ուիկ երեխայի միոյ. շարժեալ իմ ՚ի թաղձա-
 գին տեսարանէ անտի՝ մերձեցայ առ կինն տրտ-
 մեալ և ունկն մատուցի ողբերգութեանց նորա և
 խօսէր նա ողբաձայն լը վախճանեալ երեխային
 և ասէր, եթէ կենդանի մնայիր ընդ մեզ սի-
 րելի երեխայ, զիարդ շնորհաշուք ձեռամբ քով
 ունէիր արձակել զնետն յաղեղանէ. զօրաւոր
 բազուկք քո ունէին ըմբռնել զարջն ասեղա-
 ձայն. և երագընթաց ոտիւք քովք ունէիր յա-
 ռաջ ընթանալ առաւել քան զսրընթաց եղ-
 ջերուս որջայեալս ՚ի մէջ լերանց: Ո՛վ սպիտա-
 կաւիայլ աքիսդ լեռնաբնակ՝ ընդէ՛ր այսպէս
 կանուխ ելանես յերկիր զուարթուն հոգւոյ ՚ի
 ծաղկափթիթ հասակի քում: Չի՛արդ հնա՛ր լի-
 ցի քեզ կեալ անդանօր: Ո՛չ ունիցիս դու անդը
 զհայր քո առ ՚ի կերակրել զքեզ մտով որսեալ
 կենդանեաց, կրեսցես դու զսաստկութիւն ցըր-

տոյ. և ոչինչ ողորմած հոգի 'ի գութ շարժեցի 'ի վերայ քո՝ տալով քեզ զմուշտակս առ 'ի ծածկել զմերկուի անձին քո : Ա՛հ՝ պարտ է ինձ փութալ հասանել քեզ 'ի տեղին՝ յոր դու գնացեր տարածամ. անդանօր պարտիմ դիեցուցանել զքեզ և երգել քեզ զերգս քաղցրանուագս՝ զորս երգէի մերձ օրօրոցի քում 'ի ժամ քնոյ քոյ :

Մատաղաւուրց և որդեկորոյս մայրն երգեաց զվերոյին երգն սգոյ վայրենի բարբառով և դողդոջուն ձայնիւ. շարժէր նա զանչն չացեալ մարմինն 'ի վերայ ծնգաց իւրոց. թանայր զգունատեալ շրթունա նորա ձիւնտիայլ կաթամբ. և յուրանէր զմայրական ինամն զրտացեալ հանգուցելոյն՝ զոր պատշաճ է յուրանել կենդանւոյն : Կամէր նա շորացուցանել զմարմինն 'ի վերայ ծառոյ միոյ ըստ նախնի սովորութեն հնդկաց. և աղա թաղել զնա 'ի գերեզման նախահարց նորա : Այսպէս կատարեաց նա զբարեպաշտ և զազդողական արարողութիւնն զայն : Մերկացուցանելով նորա գերեխայ իւր և ձգելով զշունչ իւր 'ի բերան նորա ասայ՝ ո՛վ հոգիդ երեխայի իմոյ, ո՛վ քաղցրագին հոգիդ՝ քաղցրիկ համբոյր հօր քոյ անգամ մի ստեղծ զքեզ 'ի վերայ շրթանց իմոց : Աւա՛ղ՝ համբոյրք իմ այժմ ո՛չ կարեն տալ քեզ զնորդ կեանս վերստին : Աստ-

ցեալ նորա զայս բան՝ անդմեայ զցրտայեալ մարմինն ՚ի վերայ կրծոց իւրոց • որ գուցէ կենդանանայր անգրէն ջերմութեամբ մայրական սրտի • էթէ ոչ Աճ պահեալ էր ինքեան միայն զկարողութիւն պարգևելոյ զշունչ կենդանական :

Յարեաւ նա ՚իտեղոջէ իւրմէ • և յանապատի անդ փայլեալ ճիրանագոյն ճառագայթիւք նորածագ առաւօտու՝ որոնէր նա զճառ մի առ ՚ի զետեղէլ ՚ի նմա զմարմին որդւոյն իւրոյ • ընտրեաց նա զճառ մի մնայել՝ որոյ ծաղկունքն է ին կարմրափայլ և զուարթերանգ՝ ծաղկայօրէն զարդարեալ Տիւտածովք և պսակօք ապիտակս (47) որք բուրբէին զՏոտ անուշաւտ և ամենաքաղցր • միով ձեռամբ ՚ի վայր խոնարհեցոյց նա զստորին ձիւղս ծառոյն • և միւսով ձեռամբ զետեղեաց ՚ի վերայ նոյա զանչնչայեալ մարմին անկենդան երեխային • ապա ՚ի բայ թողեալ նորա զձիւղսն՝ նշխարք անմեղ երեխային ամբարձեալ Տիային ՚ի վերայ ծառոյն ընդ ամուշահոտ տերևովք նորին : Ո՛վ ազդողական սովորութեանս Տնդկաց : Մարմինք ննջեցելոյ զետեղեալ ՚ի վերայ օդային գերեզմանայ իւրեանոյ՝ ծծեալ զնիւթն եթերական՝ թաղեալ ընդ շեղջիւք գեղափայլ ծաղկանոյ և զուարթագեղ տերևոյ՝ զուարթայեալ ցօղով առաւօտու և խընկեալ անուշաւտութեամբ՝ տարօրբերեալ շար-

ժին 'ի հնչմանէ հողմոյ 'ի վերայ ուսոյ ծա-
 ուոյ, ուրանօր քաղցրաձայն սոխակն եղանակէ
 զթաղձագին երգս սգոյ . և այսպէս նշխարք
 հանգուցելոյ մնան ազատ յամենայն գարշուէց
 և յազականութեց գերեզմանի : Ո՛րքան առա-
 ւել ազդողական է տեսարանն , եթէ սիրե-
 լի և գեղեցիկ կին ոմն մեռանիցի . յայնժամ
 տրամազգեաց այր նորին զետեղէ դողդոջուն
 ձեռօք զմարմին սիրականին իւրոյ 'ի վերայ սար-
 փինայից մահուան . կամ ո՛րքան առաւել աղե-
 տալի երեւոցի տեսարանն , եթէ զուարթաճա-
 դիկ և կաթոգին մանուկ ոմն մեռանիցի . յայն-
 ժամ որդեկորոյս և անմխիթար մայր նորին բար-
 ձեալ զդին անշնչացեալ 'ի վերայ անգօր բազ-
 կաց իւրոյ՝ զետեղէ զայն մերձ առ բնակարանս
 թռչնոյ : Ո՛վ գեղալիայլ ծառքդ Ամբիկոյ ,
 որք փոխադրելով զանշնչացեալ մարմինս մեռե-
 լոյ 'ի բնակարանաց մարդկան՝ ածէք զնոսա մերձ
 առ բնակարանս ամենակալն , ո՛րքան յաճախակի
 հանգստացեալ է անձն իմ ընդ սրբանուէր
 հովանեօք ձերովք : Յուցիք դուք ինձ զկարեւ
 գերագոյն և վսեմական իմն այլաբանութիւն .
 տեսի ես 'ի ձեզ զճառն առաքինութեան . ար-
 մատք նորա զօրայեալ աճին 'ի հող աշխարհի .
 գերամբարձ գլուխ նորա ամբարձեալ հասանէ
 'ի հաստատութիւն երկնից , և ճիւղք նորա եմ

տանդուղքն՝ յորոյ վերայ մարդս ճանապարհորդեալ յայսմիկ հողագնտի՝ կարէ ամբառնալ յերկրէ յերկինս : --- Յորժամ տրամազգեաց վայրենին զետեղեաց զորդի իւր ՚ի վերայ ծառոյն՝ խզեաց նա զմի ՚ի խոպոպեաց հերայ իւրոյ և կապեաց զայն ընդ ոստ ծառոյն . մինչդէռ առաւօտեան հողմն շարժէր զանչնչացեալ զերեսայն , ՚ի վերջին նինջս քնոյ նորա զոր կաթոգին մայրն եղեալ էր ՚ի մամռապատ օրօրոյի նորին : Գնացի ես առ կինն այն տրտմազգեաց . եզի զերկուս ձեռս իմ ՚ի վերայ գլխոյ նորա , և երիցս արձակեցի զձիջս տրտմութեան . զկնի այնորիկ առաք մեք զձիւղս ինչ ՚ի ձեռս մեր . և լուելայն ՚ի բաց վանեցաք ՚ի ծառոյ անտի զճանձս՝ որք կուտակեալ բզզէին շուրջ զանկենդան մարմնով վաղամեռիկ երեսային . սակայն խնամով զգուշայաք ո՛չ երկեցուցանել զտատրակ մի վայրի՝ որ երբեմն երբեմն թռուցեալ ՚ի բունոյ իւրոյ՝ խլեալ կորզէր զհերս յանչնչացեալ երեսայէն , առ ՚ի կազմել նովառ զփափուկ մահիձս վասն փոքրիկ ձագուց իւրոյ : Յայնժամ հնդիկ կինն ստաց զտատրակն այն՝ եթէ դու ո՛չ ես հոգի հանգուցեալ երեսային իմոյ , անտարակոյս մայր ոմն ես դու՝ որ խնդրելով որոնես զնիւթս առ ՚ի կազմել զբոյն մի վասն քո և ձագուց քոյ : Առ քեզ

զհերս զայս • այլ ոչ ևս լուսայից ևս զայն ՚ի ջուրս Թանթրլենեայ • առ զայն ՚ի պէտս փոքրիկ ձագուս քոյ • և իցէ՞ Թէ մեծագլօր հոգինս սմբողջ պահեայի զձագս քոյ •

Տրամազգեայ վայրագն շնորհակալ եղև զինէն վն մարդասիրուէ իմոյ • յայսմ վայրի հնդիկ օմն մատաղաւորց եկեալ առ նա ասայ դիւստը կելուայ • առ զերեխայ քո ընդ քեզ • այլ ոչ ևս մնայոք մեք աստանօր • պարտ է մեզ չուէլ աստի ՚ի ծագէլ միւսոյ աւարտումն • ՚ի լսել իմ զայս բան՝ ասայի հնդիկ պատանոյն • եղբայր ջանկամ զի կապուտակ երկինքն փայլեայի ՚ի վերայ գլխոյ ձերոյ • ջանկամ զի ունիջիք դուք զբազմութիւն այժեմանց և զվերարկուս յօրինեալս ՚ի մազից կղբոյ • ջանկամ զի յայս և անհալուի ձեր յարաժամ ՚ի բարին յաջողեային • ապա արեմն դուք ո՞չ էք բնակիչք անապատիս այսորիկ • Ո՞չ պատասխանեայ պատանի հնդիկն • մեք էմք ապերջանիկ Թախտակամք • որք որոնեալ ննդրեմք զերկիր մի ՚ի պէտս բնակուէ մերոյ Յարեայ նա յերկիր զաչս իւր տրտմութեամբ մեծաւ • և աղեղամբ իւրով ՚ի բայ եհատ զգլուխ ծաղկանց • Ես մնայի լուս և անխօս միանգամայն • Տրամազգեայ մայրն ՚ի բայ էառ զդի մանկանս իւրոյ ՚ի ծառոյ անտի • և տրտմեալ այր նորին առեալ տարաւ զայն ՚ի վերայ ուսոյ իւրոյ •

Մատարաւորաց ամուսինքն Տայեին անթիթ աջօք
յան շնչայեալ մարմին որդւոյ իւրեանց . և ժլաշ-
տէին ՚ի վերայ նորա ամենայն դառնութեամբ
ցաւոյ և տրամութեան : Թոյլ տաջիք ինձ
ասացի ցնոսա՛ առ ՚ի լուցանել զՏուր ձեր յայսմիկ
գիշերի : Մեք չունեմք զխրճիթս ՚ի պէտս բը-
նակութեան մերոյ՝ պատասխանեաց պատանին .
ասկայն եթէ Տաճեացիս դու գալ զկնի մեր ու-
ղեկցութիւն , մեք երեկօթս արասցուք մերձ առ
կարկաշատասանս մեծի գետոյն : Հաւանեցայ ես
զՏրաւեր նոցա . և այսպէս աճապարեալ մեկնե-
ցաք մեք անտի ՚ի միասին :

Փոյթ ընդ փոյթ լսելի եղև ՚ի ճանապարհին
կարկաշատասանս ձայն գետոյն . սովաւ ծանեաք զի
մերձ էաք մեք Տասանել ՚ի տեղին մեր նշանա-
կեալ . կարկաշատասանքն այն ելանէ ՚ի գետոյն
Նիագարայ՝ որ բղխի ՚ի լճէն Երեայ և ընթա-
ցեալ Տոսի ՚ի լիճն Օնտարիոյ . ուղղաՏայեաց
բարձրութի նորին է մի Տարիւր քառասուն և
չորս ոտնաչափ : Ի լճէն Երեայ մինչև ՚ի կար-
կաշատասանս մեծի գետոյն՝ ջուրն ընթանայ ՚ի
զառ ՚ի վայրս մեծաւ երագութեամբ . և յոր-
ժամ Տասեալ ժամանէ ՚ի տեղին սասանայ .
փոխի ՚ի ձև յորձանայ . որոյ փրփրայեալ ալիքն
անկանին սուզանին սաստկապէս ՚ի խորս տարա-
ծեալ անդնդոյ : Կարկաշատասանքն բաժանեալ

արոճի յայտ՝ վայրի յերկուս յառաջս կիսա-
 բողբոսակս իբրև զգայտ ձիոյ . և ՚ի մէջ երկուց
 սահմանացս այսոյիկ կայ կղզի մի փայտաբեալ
 ստորև , որոյ տերևախիտ ծառքն հովանի առնեն
 ՚ի վերայ լեռնակոճակ անդնդոյ : Յորդութիւն
 ջրոյ հոսեալ ՚ի հարաւոյ՝ թափի սաստկութիւն
 ՚ի ձիւնս թանձրապատս . և ճառագայթք արե-
 դական փայլեալ յորանան ՚ի վերայ ջրոյ ազգի
 ազգի զուարթագեղ երանգօք : Եւ յարևելից
 կուսէ հոսանք ջրոյ ընթացեալ սաստկապէս՝
 թափին զարհուրելի ձայնիւ ՚ի խառարային ան-
 դունդս և երևին իբրև ջրային սիւն ջրհեղե-
 դին : Ծիածանք ձգեն զհաստածակողմեան ա-
 դէղնաձև երանգս իւրեանց ՚ի վր անդնդոյ ջրոյ .
 կոճակք զկոճակօք ելևէջս առնեն ՝ի վերայ
 վիմաց . և ամբարձեալ հարկանեն զփրփրայեալ
 զալիս իւրեանց ՚ի վերայ գլխոց անտառայ . յո-
 րոց երևին ելանել ծուխք ընդ հանրական հրկի-
 զութեան : Սարոյքս ընկուղենիք և սեպայեալ
 Գայռք նմանեալ խօլական երևութից՝ զարդա-
 րեն զտեսարանն ահագին : Արծիւք վարեալք ՚ի
 մղանայ օդոյ՝ խուճապին ՚ի լայնատարած ան-
 դունդան . և կարկաջովք կախեալ զերկայնա-
 ձիւք ձեռոց իւրեանց ՚ի կորայեալ ստեղանոյ՝ ջանան
 բղձակաթ ունիլ զգիտակունս վայրենի չորքոտա-
 նեաց և արջուց անկելոց ՚ի ստորոտս անդնդոց :

Նկատեալ իմ ուշի ուշով և զարմայմամբ
 մեծաւ զտեսարանն զարհուրելի և վսեմական ,
 ընթացայ յեզերս գետոյն ՚ի խնդիր երկոցունց
 հնդկացն այնոցիկ . և գտի զնուա ՚ի հեռաւոր
 տեղուց իմիք , որ քաջայարմար էր տառապեալ
 և թաղձողական վիճակի նոցա . ընկողմանէ ին նք
 ՚ի վերայ խոտոյ ընդ ոմանց ծերունի արանց ,
 մերձ առ շեղջակոյտ մի մարդկային ոսկերաց
 պատելոց ՚ի մորթս վայրի գազանաց : Չարմա-
 ցեալ իմ ընդ տեսարանն այն ահագին՝ բազմե-
 ցայ մերձ առ մայրն որդեկորոյս և հարցի ցնա .
 զի՞նչ են ոսկերքս այսոքիկ՝ քոյր իմ : Նա պա-
 տասխանեայ՝ եղբայր այսոքիկ են նշխարք նա-
 խահարց մերոց՝ զորս մեք շրջեցուցանեմք ընդ
 մեզ ՚ի տարագրութեան մերում : Չի՞նչ պար-
 տաւորեայ զձեզ՝ ասացի ես՝ առ ՚ի թողու-
 լքանել զբնածին երկիր ձեր : Շաւաւիղեալ
 եմք մեք յազգէն Նատչեայ՝ պատասխանեայ կինն
 այն՝ և սակաւք ՚ի մէնջ զերծեալ ճողոպրեցան
 յընդհանրական սրածութենէ Գաղղիսցւոց . որք
 զամենայն զեղբարս մեր մաշեցին ՚ի սուր սուսերի
 ՚ի վրէժ խնդրութի մահուան եղբարց իւրեանց :
 Փախուցեալ մեր ՚ի հարուածոց պատերազմի
 ապաստան անկաք առ ազգն Ճիկասոսայ , որք
 բնակին ՚ի մերձակայս երկրի մերոց . և կեցաք թ
 նոսա յանդորրու և միսիթարութեամբ . բայց

T

սակայն այժմ եօթն ամիսք են՝ յորմէ հետէ բազմութիւն սպիտակ մարդկան ի շխանութք տիրեցին երկրի մերում, ասելով թէ Եւրոպայի իշխան ոմն տուեալ է զայն ՚ի ձեռս նոցա: Այսպէս գոլով մեր տարագրեալ և վտարանդեալ ՚ի խաղաղաւէտ բնակարանաց մերոյ՝ միանգամայն և ծանրաբեռնեալ սրբանուէր նշխարօք նախահարց մերոյ՝ յուսահատութեալ ելեալ գնացաք ՚ի հեռաւոր վայրս անապատին: Յընթացս ճանապարհորդութեան մերում հասին ՚ի վերայ իմ երկունք ծննդականի. մեծազօր հոգին պաշգևեաց ինձ զորդի մի ցանկալի. սակայն՝ որովհետեւ կաթն իմ կծուեալ էր ՚ի դառնութենէ տրտմութե, և փոխանակ մատակարարելոյ նմա զկերակուր սնունդարար, մատակարարեաց նմա զթոյն. մահարար և Ասայեալ որդեկորոյս մօրն զբանս զայս՝ սրբեաց զարտասուս յաչաց իւրոց լուծեալ վարսիւք գլխոյ իւրոյ. սիրտ իմ ՚ի գութ շարժեցաւ ՚ի վերայ վշտաց նր. և հեղեղք արտասուաց հոսեցան յաչաց իմոց: Ապա կամեցայ մխիթարել զտրտմեալ սիրտ նորա ասելով՝ քոյր իմ, արժան է մեզ հնազանդել կամաց մեծազօր հոգւոյն. որ տնօրինէ զամենայն ինչ ըստ անսրխալ կամաց իւրոյ. տարաբաղդութիւն տառապելոյ ոչ եղիցի մշանջեանական. և գոյ տեղի ինչ ուր դադարեացին հառաչա՛ք և բուք մարդկան:

և այլ ոչ ևս հոսեցին յաչայ մերոց արտա-
 առք տրամութե : Ասիմ հարցանել զի ինչ
 ՚ի քէն . սակայն երկնչիմ զի համարեցիս զիս
 իբրև սպիտակ այր ոմն անխոհեմ . և մեղադրեա-
 ցես զանձն իմ սակա հարցանոց իմոց : Բայց և
 այնպէս քաջալերեալ ՚ի քաղցր վարուց քոյ
 ուրախ եղէց լսել ՚ի քէն զճանօթութիւն ինչ
 յաղագս Ճակտոսի համազգւոյն ձերոյ : Մա-
 տաշաւուրց հնդիկն յաղուշ կրթեցաւ զարմայ-
 մամբ ՚ի լսել զանուն Ճակտոսի . և եհարց հի-
 այմամբ թէ ո՞վ էր պատմեալ ինձ զանցս Ճակ-
 տոսի : Ես պատասխանեցի իմաստութիւն : Պատ-
 մեցից քեզ զոր միանգամ գիտեմ ես՝ կրկնեաց
 անդրէն կինն՝ քանզի մարդասիրութեամբ վարե-
 ցար դու ընդիս ՚ի բաց վանելով զճանձս ՚ի մար-
 մնոյ որդւոյն իմոյ , և բարեոք խօսելով զանօ-
 լիութենէ մեծազօր հոգւոյն : Ես եմ դուստր
 դստերն Ռենւոյ՝ Գաղղիացւոյն այնորիկ , զոր
 Ճակտոս որդեգրեալ էր հայրական սիրով :
 Ճակտոս բազմօք յառաջ վերածնեալ յաւազա-
 նին մկրտութեան՝ անկաւ յընդ հանրական սրածու-
 թեան և Ռենի որդեգիր իւր ընդ ինքեան :
 Մարդս անկանի ՚ի թշուառութենէ ՚ի թշուա-
 րութիւն՝ սասայի ես ցնա խոնարհեցուցանելով
 զգլուխ իմ յերկիր : Արե՛ս տալ ինձ զճանօ-
 թութիւն ինչ զկատարածէ հայր Աբրուոյն՝ բա-

րեպաշտօն ճգնաւորին : Ո՛չ է եղեալ նա առաջ
 ւել բարեբաղդիկ քան զճակտոս՝ պատասխա-
 նեաց կինն : ... Կուաք մեք զի Ճերովկիք՝ Թըշ-
 նամիք Գաղղիացւոց հրապուրեալ 'ի ձայնէ զան-
 գակին՝ որ հրաւիրէր զուղեորն թափառական 'ի
 տեղի ապաւինի , մտին 'ի ներքս 'ի գետոյն քրիս-
 տոսէից : Հայր Աբրին կարէր փախստեամբ զեր-
 ծանիլ 'ի հարուածոց ասպատակաւորացն այնոցիկ .
 սակայն ո՛չ երբէք հաճոյ էր նմա թողուլ լքա-
 նել զհոգեւոր հօտ իւր 'ի վտանգ թշնամեաց .
 մնաց նա անդանօր առ 'ի քաջալերել և սրտա-
 պնդել զնոսա յորդորանօք իւրով , զի կարիցեն
 ըստ օրինակի անձին իւրոյ կրել զմահ մարտի-
 րոսութեան արիութեամբ սրտի : Թշնամիքն կա-
 լեալ վնաս կենդանւոյն՝ հրոյ ճարակ ետուն ըզ-
 մարմին նր մեծաւ չարչարանօք և հարուածովք .
 սակայն չարչարանք և հարուածք նոցա ո՛չ կա-
 րացին պարտաւորել զճգնաւորն առ 'ի խօսել
 զբան ինչ լնդդէմ ԱՅ և երկրի իւրոյ . և 'ի
 ժամ տանջանաց և չարչարանաց իւրոյ անդուլ
 անդադար աղօթէր նա առ Աճ վասն հալած-
 չաց իւրոյ և վասն փրկութեան անմեղ ժողովը-
 գոցն շրջագատելոյ վնովաւ : Ճերովկիքն կամե-
 լով պատճառել զնշան ինչ երկիւղի յանձն
 հրեշտակամանս պատերազմողին՝ բերին առա-
 ջի նորա զքրիստոնէաց վայրագ զոմն , զոր վի-

բաւորեալ էին շարաշար : Հարուածեալ քրիս-
տոնեայն անկաւ գետնամածեալ առ ոսո Տինա-
ւուրց ճգնաւորին և համբուրեաց զվէրս նորին :
Ճգնաւորն անդորր և անխառն հայեցուածովք
ասաց յնա՝ ո՞վ որդեակ իմ , շարշարանք անձանց
մերոց յայտնի են մարդկան և հրէշտակաց . ՚ի
լսել զայս բան՝ կատաղի բարբարոսքն միտցին
զհրաշէկ երկաթ մի ՚ի կոկորդ նորին . և այս-
պէս ողորմելի ճգնաւորն այլ ոչ ևս կարացեալ
արտապնդել զթշուաւացեալ շարշարակիցս իւր
յորդորական և միսիթարական բանիւք՝ փչեաց
զհոգի իւր ՚ի սաստկութենէ տանջանաց անտի :

Թեպէտ և ճերովկիք սովոր են անդրդուե-
լի արիութեան վայրագաց , սակայն ասի թէ
անհնարին զարմացմամբ հիացեալ էին նորա ընդ-
խոնարհամիտ և գերբնական արիութիւն հայր
Աբրահն . և ոչ այսչափ միայն՝ այլ և բազումք
սքանչայեալ ընդ բարեպաշտ մահ մարտիրոսու-
թեան նորա՝ ընդգրկեցին զսուրբ հաւատն քրիս-
տոնէութեան :

Ճակտոս գնացեալ էր յերկիր սպիտակ մար-
դոց . և սուղ ինչ զկնի դառնալոյ ՚ի ճանապար-
հորդութենէ իւրմէ , յուեալ նորա զարեւտալի
վախձան բարեպաշտ ճգնաւորին՝ չոքաւ առ ՚ի
Ժողովել զոսկերս նորա և ամփոփել ընդ ոս-
կերացն Ատալայի : Էանց նա ընդ անապատն ընդ

արձակ • եհաս 'ի գեօղէ քրիստոնէից • և հաս
 զիւ կարէր ճանաչել զայն վերստին • ջուր լին
 յորդեալ էր ընդ երկիրն ողջոյն • և ջրասպատ
 մարգագետինն ելեալ էր ճահիճ' անանցանե-
 լի • բնական կամուրջն յերկիւր կործանեալ 'ի
 սաստկութենէ հողմոյ՝ ծածկեալ էր ընդ փլա-
 տակօք իւրովք զգերեզմանն Ատալայի միանգա-
 մայն • և զանտառս մահուան • Ճակտոս սակա-
 ւիկ մի թափառեալ շրջեցաւ թ տեղին ամայա-
 ցեալ • գնաց նա 'ի տեսանել զքարանձաւ ճրգօ
 նաւորին • որ լցեալ էր մոռենովք և փշալոյ
 թփովք • Ետես նա 'ի կեդրոնի քարանձաւին
 զեղն մի՝ որ դիեցուցանէր զձագ իւր մատաղ •
 բազմեցաւ նա 'ի վր վիսին տրտմութեան • սա-
 տանօր եգիտ միայն զքանի մի փետուրս թա-
 փեալս 'ի թռչնոյ 'ի թռիչս իւրեանց • մինչ
 նա ողբալով արտասուէր 'ի վերայ թաղձողական
 աւերածոց քարանձաւին՝ օձն ընտանի արտաշս
 եկեալ յընթերակայ փշալից թփոյն՝ կծկեալ
 սլատեցաւ զոտիւք Ճակտոսի • որ ընդգրկեալ
 շերմայոյց 'ի գիւրկս իւր զվաղէի բարեկամն
 զայն՝ ճողոպրեալ յընդհանրական կործանմանէ
 քարանձաւին • Որդին Ովտալիստեայ ասէր • թե
 տեսեալ էր նա 'ի ժամ գիշերոյն զճոգիս Ատա-
 լայի և հայր Աբրուոյն թափառիլ 'ի վայրս
 առանձնութեան • և տեսին այն լցեալ էր

զսիրտ իւր երկնային իմն երկիրդիւ . ընդունայն
 որոնեալ խնդրեաց նա զգերեզմանն ճգնաւորին .
 և նոյնգունակ անպտուղ եղէն ջանք հետազո-
 տութեան իւրոյ առ ՚ի գտանել զգերեզման
 անհրականին իւրոյ Ատալայի : Ընկղմեալ նորա ՚ի
 խորս յուսահատութեան՝ կամէր ելանել մեկնիւ
 անտի տրտմութեամբ . սակայն յայսմ վայրի եղև
 ելեալ ՚ի քարանձաւէ անտի՝ ուտեալ առաջի
 նորա և զկայ էառ առ ատորոտով մեծի խաչին ,
 ուրանօր երջանիկ ճգնաւորն կատարէր զերկնայ-
 ին խորհուրդս յառաջնում ժամանակի : Խաչն
 յայսմ ժամանակի շրջապատեալ էր ՚ի ջրոց .
 կործանեալ անտառն պատեալ էր ՚ի մամուռոյ .
 և թռչունն անապատին նստէր ՚ի վերայ շորա-
 ցեալ ստեղանց ծառոց անտառին : Ճակտոս
 խորհելով զի գերեզման բարերարին իւրոյ եղև
 ցի մերձ առ տեղին սրբազնեալ՝ բրեաց զգետինն ,
 յորոյ վերայ հաստատեալ էր նշան խաչին , և
 ուրանօր յառաջագոյն կանգնեալ կայր անզարդ
 և անտաշ սեղան պատարագին : Եգիտ նա յայսմ
 վայրի զնշխարս առն և կնոջ միոյ . և համա-
 րեցաւ զնոսա լինիլ նշխարք սրբազնեալ քահա-
 նային և ողորմելի օրիորդին . էհան նա զոս-
 կերան գայնոսիկ ՚ի խոնաւ երկրէ անտի . պատեաց
 զնոսա ՚ի մորթս արջուց . և աճապարեալ ջո-
 ցաւ մեկնեցաւ ՚ի քարանձաւէ անտի՝ ունելով

'ի վերայ ուսոյ իւրոյ զբեռն տառուական : 'ի
 մերձենալ գիշերոյ հանգոյց նա զխոնջեալ ան-
 դամս իւր 'ի վերայ բարձին մահուան . և ետես
 զերագս սիրոյ և առաքինութեան : 'ի վերջոյ
 ժամանեալ եհաս նա յերկիր Նատչեայ : Ո՛վ
 օտարականդ դու, այժմ տես աստ զսրբանուէր
 նշխարս ճգնաւորին և Ատալային միանգամայն և
 զոսկերս Ճակտոսին : 'ի կիֆել մատաղաւուրց
 հնգկին զտրտմալի պատմութիւն իւր, փութա-
 ցայ առ 'ի գետնամածեալ անկանիլ առաջի ցրը-
 տայեալ նշխարայն առաքինութեան և սիրոյ .
 և ապա աղաղակեցի՝ ուրեմն այսպէ՛ս անհետ ե-
 դեալ չքացան յերկրէ այնոքիկ անձինք, որք
 էին բարեբարոյ, իմաստուն և ողորմած : Ո՛վ
 մարդ՝ դու ես երազ իմն թողձողական . դու
 ես տեսիլ իմն անցողական : Պայծառափայլ ա-
 ւուրք քոյ մթագնին յաճախակի մղտապատ ամ-
 պովք տրտմութեան . և աղէտք տառապանայ
 յարձակին 'ի վերայ քո յարածամ :

Ապա զգիշերն ողջոյն անցուցի 'ի խորին մը-
 տախորհութե՛ն նկատելով լուսով լուսնի զա-
 հեղաձայն կարկաջասահանս գետոյն : 'ի միւ-
 սում առաւօտու վաղ քաջ ընդ արշալոյսն հըն-
 դիկքն թողին զիս միայնակ, և շարունակեցին
 զճանապարհ իւրեանց 'ի մէջ անապատին : Մա-
 տաղաւուրց պատերազմողքն առաջնորդ լինէի՞ն

խմբի իւրեանց . և կանայք նոցա երթային զՏես
նոցին . արքն բարձեալ տանէին յուսա իւրեանց
զան շնչայեալ նշխարս նախահարց և սիրելեաց
իւրեանց . և կանայքն բարձեալ ունէին 'ի գիրկս
իւրեանց զնորածին զաւակս իւրեանց . արք ծե-
րունիք յամբ գնային 'ի մէջ նախահարց և ապա-
գայ սերնդոց իւրեանց . այսինքն 'ի մէջ նոցա
որք զրաւեալ էին յաստի կենացս . և 'ի մէջ
նոցա որք ունէին փթթիւ 'ի կեանս աշխարհի .
'ի մէջ դառն յիշողութեան և 'ի մէջ քաղցր
յուսոյ . 'ի մէջ կորուսեալ երկրի իւրեանց և
'ի մէջ հանդերձեալ աշխարհի : Աւանդ որ-
քան կաթիլք արտասուաց հոսին յաչաց մերոյ
և թանան զերկիր արքորանաց և տարագրութեան
մերոյ , յորժամ թափառական և տարագիր ե-
ղեալ 'ի բնիկ երկրէ մերմէ՝ շրջիմք 'ի վայրս
պանդխտութե . որքան ցաւք տագնապեն զմիտս
մեր , յորժամ 'ի գագաթանէ լերինն արքորա-
նաց մերոյ թաղձողական հայեցուածովք ակնար-
կեմք 'ի տունն մեր հայրենի . յորժամ ցաւօք
նայիմք 'ի վտակն յայն՝ որ երևի տրտմութեամբ
հոսելով ընթանալ շուրջ զամայայեալ խրճիթաւ
մերով , և 'ի մէջ անմարդաբնակ դաշտաց թո-
ղեալ լքեալ երկրի մերոյ : ... Ո՛վ ողորմելի
հնդիկք , զորս տեսի թափառել և շրջել յա-
նապատս նորոյ աշխարհի՝ տանելով ընդ ձեզ

զյամաքեալ ոսկերս նախահարց ձերոց • աւանդ
 ընկալայք դուք զիս այնպիսի սիրով Տիւրքնկա-
 լութեան • զորոյ ոչ կարացի ես առնել ձեզ
 զդարձ փոխարինի • քանզի նման ձեզ թախառա-
 կան շրջիմ ես յաշխարհի՝ հալածեալ և նե-
 ղեալ յանգթութեանց մարդկան • Չեմ ես բա-
 րեբաղդ իբրև զձեզ • քանզի ոչ եմ տարեալ
 ընդիս զնշտալս նախահարց իմոց ՚ի թաղձողա-
 կան վայրս աքսորանաց և արանդխտութեան իմոյ •



ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆԻՔ

1 — Յոյն լոյս ծոյր : Կիճեղք փայտից
 երևին ծածանելով երթալ 'ի բերան գետոյն
 Մեսսեօհայեայ եբրե երկու հարիւր միոնօք հե-
 ուի 'ի մէջ ծովուն . սք լինին առաջորդ մարդ-
 կան առ 'ի մտանել 'ի բերան գետոյն դիւրաւ
 և ապահով . քանզի բազում աւազուտ և ծան-
 ծարուտ տեղիք գոյ 'ի նմա՝ որք յոլով անգամ
 պատճառ են անծանօթ նաւորդայ զսեճ մնաս և
 զդժուարութիւն :

2 — Պիպիտ : Զրային պրաս եգիպտոսի :

3 — Նուռ-թար : Զրային ծաղիկ գնտագլուխ :

4 — Քլաֆեգոյ : Այս է թռչուն ինչ
 նման սաղի . պարանոց և ոտք նորա են կարի յոյժ
 երկայն . հասարակ գոյն նորա է կարմիր կամ
 ծիրանագոյն :

5 — Բիգնոնեայ : Այս է տունկ ինչ կար-
 մրագոյն . զոր հորնեփորտ անուանեայ բիգնո-
 նեայ 'ի պատիւ Աբբի Բիգնոնի՝ գիւանապետին

Լուրովիկոսի չորեքտասաներորդի : Սա յոմանց
կոչի ևս ծիրանագոյն յասաման կամ փողածե
ծաղիկ :

6 — Կալոսի^{հեռոյ} : Այս է տունկ ինչ բժշկ
կական . որ բերե զպտուղ նման խնձորոյ , և է
դառնասամ յոյժ :

7 — Դալար^{հեռոյ} : Այս է ծառ բարձ-
թիւտ և ոստալից . որ տայ զծաղիկ սպիտակ
զօրէն կակաչի : Հնդիկք կոչեն զսա ծառ խա-
ղաղութեան :

8 — Աւի^{հեռոյ} : Այս է տունկ ինչ ազնիւ և
մշտադալար . ձղօտ նորա հաստատուն պահէ
զբարձր գլուխ նորա . որ զարդարեալ է բազ-
մապատիկ մեծամեծ և գեղափայլ ծաղկամբք :

9 — Մագ^{հեռոյ} : Այս է տունկ ինչ բարձր .
որ ամբառնայ զգլուխ իւր ուղղակի իբրև եօթա-
նասուն կամ ութսուն ոտնաչափ 'ի վեր' զար-
դարեալ մշտադալար տերևովք . բերէ սա ըզ-
մեծամեծ մաքուր սպիտակ ծաղիկս , յորոյ բու-
րի հոտ անոյշ և զուարթարար յոյժ :

10 — Կապ^{հեռոյ} : Այս է տե-
սակ իմն թռչնոյ գրեթէ նման տորդկին . սա-
կայն ազնիւ և գեղեցիկ է սա կերպարանօք քան
զտորդիկն . գոյն նորա է թուխ և մոխրանման .
կտուց և ոտք նորա են սեաւ : Եղանակք ձայնի
սորա են քաղցր և զուարճալի . և ոչ այսչափ

միայն այլև կատակերգութեամբ եղանակէ լա-
օրինակի բազմաց այլոյ թռչնոյ . և ձայնս ար-
ձակէ լաօրինակի կենդանեաց և ս և մարդոյ : Չօ-
րէն կարմրալանջ թռչնոյ սա փութով ընտելանայ
մարդոյ և յոյժ սիրէ զնա :

11 — Կարճերանէ Կարճիւն : Այս է տե-
սակ իմն թռչնոյ՝ որոյ մարմինն է բոլորովին
կարմիր . կոկորդ նորա է սեաւ . և փետրիկ բը-
բուկ ինչ գոյ ՚ի վերայ գլխոյ նորա . կտուց նր
է կարծր և կարմիր : Նմանի արտուտի մեծութե
մարմնոյ . և յամառնային եղանակի սուլէ զօրէն
սեաւ թռչնոյ :

12 — Մրճիչօղ Բազուէ : Այս գեղեցիկ
Ամերիկեան թռչունն է այնքան փոքրիկ , մինչ
զի երկայնութիւն ոտից նորա մինչև յարունս է
միայն կէս բթաչափ . և բովանդակ երկայնութի
մարմնոյ նորա ոչ է բթաչափ մի : Ծանրութի
նորա է իբրև տասներորդ մասն միոյ ունկոյ :
Բոյն նորա յօրինեալ է ՚ի բամբակէ . և կա-
րի նման է ձևով և մեծութեամբ բթի թաթ-
պանի մարդոյ : Չու նորա մեծութեամբ նմանի
ոլեւան : Հնդիկք ոմանք կազմեն նովաւ զգինտա
պկանջայ իւրեանց :

13 — Հոռբերտոս Կավալիէր Կասալէ
յառի Տեառն 1684 մեկնեցաւ ՚ի Գաղղիոյ Տան-
դերձ չորս նաւօք և մեծաւ պատրաստութեամբ

և զնայ յեզերս Մեսեպոտամիայայ առ ՚ի հաս-
տատել անդանօր զհատուած ժողովրդեան : Լա-
սալէ տեսեալ զանձն իւր ՚ի գերակայ պատուի՝
մեծամտեցաւ ամբարտաւանութեամբ . և անագո-
րոյն բռնաւորութեամբ սկսաւ տառապեցուցա-
նել զնոսա՝ որք էին ընդ իշխանութեամբ իւ-
րով . սակայն իշխանութիւն բռնաւորին ոչ տե-
կայ ընդերկար . քանզի արք ոմանք դարան գոր-
ծեալ ընդդէմ նորա՝ բարձին զնա ՚ի կենաց մերձ
՚ի լեառն կենիս յամի տեառն 1687 :

14 — Պոպեւոշճոշ : Յորժամ հնդիկքն
ընդունին զպատանի զոմն ՚ի թիւս պատերազմո-
ղայ , զառաջինն նստուցանեն զնա ՚ի վերայ մոր-
թոյ վագեր . այրեն նորա զյարդ լնչ . և զմո-
խիր այրեցածին լռծեալ ՚ի ջուր՝ նկարեն նովաւ
զկերպարան այժեման ՚ի վերայ աղդեր նորա՝
կտկտելով զայն մեծալեծ ասղամբք . արիւնն հո-
սեալ ՚ի սաստիկ խայթումսն ասղանյ՝ խառ-
նի ՚ի մոխիրն անիւնացեալ . և կտեալ նիշքն
և գիծքն այնպէս տպաւորին ՚ի մարմնի նորա՝ զոր
ոչինչ կարէ ասղա եղձանել կամ ջնջել . յայն-
ժամ նորեկ զինուորն ծխե զեղէզն խաղաղու-
թեան . և ընթանայ ՚ի վերայ սպիտակ մորթոյ
սփռելոյ ընդ ոտիւք նորա ՚ի պատիւ զինուո-
րական համդիսադրութեան նորին :

15 — Մոսիսոշ : Է առաւայելեալ ջաստ-

Թուած մի Տնդկաց . որք պաշտեն զնա յազգի
 ազգի կերպարանս չորայեալ ազոաւու , օձի
 կամ այլոյ կենդանեաց : Տնդիկքն ոչ երբեք գը-
 նան 'ի պատերազմ առանց խորհուրդ Տարցա-
 նելոյ 'ի Մանիսովէ իւրեանց 'ի չաստուածոյն
 պատերազմի : Կարծեն սոքա թէ ամենայն յաջո-
 ղութիւնք և ձախողութիւնք մարտի յառաջ գան
 'ի սմանէ . և եթէ կատարած մարտի իւրեանց
 ոչ լինիցի յաջողակ , սոքա իսկոյն թողեալ լի-
 քանեն զՄանիսովն և խնդրեն զպաշտպանութի
 այլոյ ուրուք չաստուածոյ :

16 — Ըստն գիշտուել : Տնդիկք սովոր
 են ուտել զմիս շան միոյ ասելով թէ որովհետեւ
 կենդանիս այս 'ի մահ մասնէ զանձն իւր առ 'ի
 փրկել զկիւանս տեառն իւրոյ , յայն սակս պար-
 տի լինիլ արի և աներկիւղ . և ինքեանք ուտե-
 լով զմիս նորա՝ յինքեանս ձգեսցին զաշիութիւն
 և զքաջութիւն նորին : Որ միանգամ բերիցէ 'ի
 բանակէ թշնամեաց զգագաթնամաշի շան միոյ ,
 ընկալցի զայնպ'սի պարգև 'ի զօրագլխէ իւր-
 եանց , որպէս եթէ բերեալ էր զգագաթնա-
 մաշի միոյ 'ի թշնամեաց իւրեանց :

17 — Ահարտի է անուն միոյ 'ի գաւառաց
 աշխարհին Աերգենիոյ : Յակոբոս Բրայդ եգիտ
 զայս գաւառ յամի տեառն 1754 . քանզի ան-
 ցանկելոլ նորա կանուլայիւք ընդ գեան ՈՏիոյ՝ ե-

Հաս 'ի բերան գետոյն կենտուկեայ . և անդառ
նօր իջեալ 'ի ցամաք՝ քանդակեայ 'ի վերայ ծառ-
ուոյ միոյ զգլխագիրս անուան իւրոյ և զթուա-
կան ժամանման իւրոյ յայն երկիր . և այս յի-
շատակարան անջինջ մնայեալ է մինչև ցայս օր :

18 — Սագմիր : Է սա տեսակ իմն փոխըն-
դոյ՝ յօրինեալ ծաղկամբք ցորենոյ հնդկայ և
քաղցրացուցեալ օշարակաւ մապել ծառոյ :

19 — Օրմէցի ռոյն : Այս է ժժմակ ինչ
փոքրիկ և սակաւակեայ . կեանք նորա ոչ տե է
աւելի քան զօր մի . սմին իրի և կոչեցաւ օրա-
կեցիկ 'ի սակաւութէ կենաց իւրոյ : Յայս փոք-
րիկ կենդանի ևս փայլին յայտնապէս հրաշք ա-
մենազօր արարչին . քանզի՝ թէպէտ և կեանք նր
ձգի 'ի քանի մի ժամս միայն , սակայն մնայ նա
անապական զերկուս կամ զերիս տարիս ոսկե-
գոյն տեսլեամբ շերամոյ :

20 — Հոսանուտ ասլ : Սովաւ նշանակին
քաղցրիկ ծառք խժաբերք . որոյ դեղնագոյն
հոսանուտ խիժքն նմանին սաթի (+ արեւել) :
Բուսանին սոքա մերձ առ վտակս և ակունս
աղբերաց :

21 — Այծեմուտ : Հնդիկք նորասքանջ
իմն եղանակաւ որսան զայծեմունս : Որսորդն ա-
ռեալ ընդ ինքեան զգլուխ և զմորթ այծեման
միոյ՝ գնայ յանտառս մերձ առ բնակարանս այ-

Տեմանց . ծածկէ նա զքամակ իւր մորթով նորա .
 պատէ զձեռս իւր 'ի մորթ պարանոցի նորին .
 և ապա նստեալ 'ի վերայ ծնոցայ իւրոց՝ ձայն
 արձակէ զօրէն այսոցիկ կենդանեաց : Անմիտ այ-
 ծեմունքն պատրեալ 'ի կեղծեալ ձայնէ որսոր-
 դին՝ մերձենան առ նա աներկիւղ . որ և իսկոյն
 կալեալ սպանանէ զնոսա :

22 — Կիզողոյտի ոռօթ : Հնդիկքն սպանանեն
 զկալանաւորս պատերազմի իւրեանց չարաչար իմն
 եղանակաւ . քանզի արկանեն զնոսա յանօթ ինչ
 կիզողական՝ յօրինեալ յերկուց ցոցոց , ընդ որ
 անցուցանեն զձող ինչ խոտորնակի . և այսպէս
 այրեն զնոսա կենդանւոյն :

23 — Սուր : Կոկորդիլոսքն գետոյն Մեսսեա-
 սիոցեայ ունին զպարկս մշկահոտս , որք բուրեն
 զհոտ սաստկագոյն քան զմուշկն արևելեան հնդ-
 կաց : Արևմտեան հնդիկքն ունելով 'ի ձեռս
 իւրեանց զերկաթ մի սրեալ յերկուց ծայրից՝
 լուղան 'ի ջուրս գետոյն տարածեալ բազկօք : Կո-
 կորդիլոսքն հրապուրեալ 'ի տեսլենէ որսոյն՝ յա-
 ռաջանան կլանել զլուղորդան կենդանւոյն . սա-
 կայն սրածայր երկաթն թափանցեալ ընդ ծնօտս
 նոցա՝ լուղորդքն իսկոյն քարչեալ ամեն զնոսա
 'ի ցամաք :

24 — Յարեուպոյտի : Սովաւ նշանակին խե-
 ցիք փոքրիկք՝ փոխեալ 'ի մանր գլանաձև գըն-

տակիկս : Արեմտեան Տնդիկք 'ի կերարկանեն
զնոսա փոխանակ դրամոյ և զարդուց :

25 — Ելէ 4^ն Իսաիա Եսայ : Այս է տե-
տակ իմն եղեգան . որոյ գլուխն յօրինեալ է 'ի
կարմիր , 'ի սպիտակ և կամ 'ի սեաւ կճոյ : Զար-
դարեալ է սա փետրովք սպիտակ արծուոյ . և
է նշան խաղաղութեան առ Տնդիկս Ամերիկոյ :
Այլ թնիք Տամարին զայս եղէ գն կարի սուրբ և
նուիրական գից իւրեանց :

26 — Ճեմիկ : Սա է գործի ինչ երաժիշ-
տութեան յօրինեալ 'ի դդմէ . յորում Տըն-
դիկք արկանեն զգնտակիկս . և շարժեալ զայն
'ի ձեռս իւրեանց' նշանակեն նովաւ զժամանակ
և զՏնչիւն ձայնի նուագարանաց :

27 — Չեմսոս : Սոքա կատարեն զգործա-
քահանայից , բժշկաց և կախարդաց . և բա-
զումք 'ի սոցանէ կեղծեն զանձինս իւրեանց իբ-
րև զկիւսս և զաղթարմոյս :

28 — Խրոյնան ոգւոյ : Յորժամ Տնդիկ
ոմն մեռանի , ազգականք նորա դնեն զմարմինն նո-
րա 'ի վերայ դագաղաց յօրինելոյ 'ի կեղևոց
նոճեաց . յորժամ միս ննջեցելոյն գլխովին ծա-
խեալ սպառի , ազգականք նորա ողջոյն ժողո-
վին 'ի միասին և յօշոտեն զոսկերոտին . զետե-
ղեալ պահպանեն նոքա զոսկերսն յարկեղ միոջ .
զինի գունաւորելոյ զգլուխ նորա կարմրափայլ

Ներկիւ : Ի սկզբան ամսեանն նոյեմբերի հնդիկք
կատարեն զտօնախմբութիւն մի՝ զոր կոչեն
Իրախմբոն տգւոյ :

29 — Խաչ գնորակի : Արեւմտեան հնդիկք
խաղան զխաղն գնտակի ըստ հետագայ օրինակի :
Հաստատեն նոքա զնշան ինչ՝ ի տեղոջ իմիք՝ որ
իցէ իբրև վաթսուն գրկաչափ հեռի . և կանգ-
նեն զերկուս ձողս ի միջոյ՝ ընդ որ գնտակն ունի
անցանել . ապա յերկաքանչիւր կողմանէ կանգ-
նին արք քառասունք՝ ունելով ի ձեռս իւրեանց
զթիակն գնտակախաղութեան, որք են երկայն իբ-
րև երկու ոտնաչափ . ծերունի այր ոմն կանգնեալ
յոտին ի կեդրոնի տեղոջն գնտակախաղութեան՝
ձգէ ի վեր զգնտակ մի պատեալ ի մորթոյ այծե-
ման . յայնժամ խաղացողքն ընթանան փութանակի՝
իւրաքանչիւր ոք ջանալով հարկանել զգնտակն
թիակաւ գնտակախաղութե . որ միանգամ յա-
ջողաձեռն երագութեամբ ըմբռնէ զգնտակն .
առաքէ զայն առ խաղացողս խմբին իւրոյ . մինչ ք
հակառակն խաղացողք միւսոյ խմբին ջանան մի-
ջամուխ լինելով արգելուլ զայն : Հասեալ միոյ
խմբին խաղացողաց զվեշտասան խաղս՝ յաղթա-
կան հանդիսանան ի վերայ միւսոյ խմբին :

30 — Կիճիմանի տոն : հեղինակն երևի սխա-
լեալ յայսմ բանի . քանզի Պիկարտ ասէ ի մա-
տենի արարողութեանց կրօնի, թէ Կիճիմանիտոն

է հոգի բարեաց . և Մաճիմանիտոն է հոգի
չարեաց ըստ հաւատոյ վայրագացն հիւսիսային
Ամերիկոյ :

Հաւատան նորա ըստ ասից հայր Հանեպինին ,
թէ աշխարհս այս ստեղծաւ 'ի կնոջէ միոջէ , որ
արար զերկինս , զերկեր և զմարդիկ : Ի շէտ նա
հանդերձ որդւով իւրով 'ի վերայ տիեզերաց :
Մասովն յաւուր միում պարապեալ 'ի զբօսանա
որսոյ՝ կորոյս զշունս իւր 'ի մեծի լծի միում .
որոյ ջուրքն յորդեալ սաստկապէս՝ ծածկեցին
զերեսս երկրի ողջոյն . սակայն ձեռնտուութի
կենդանեաց ոմանց զիջոյց նա զյորդութիւն ջրոց
և դարձոյց զաշխարհ 'ի նախկին վիճակ նորին :

Նա և բնակիչք եզերացն Մեսսեօսիպեայ և
գետոյն սրբոյն Լորենտիոյ հաւատան , զի կին
ոմն անկաւ յերկնից 'ի վայր և նստաւ 'ի վերայ
քամակի կրիայի միոյ . և կաւ ծովու ժողովեալ
շուրջ զկենդանեաւն զայնուիկ՝ ձեացոյց զայս հո-
ղագունտ մեր : Յաւուր միում կինն այն գոլով
հնչեալ՝ հոգի մի էջ յերկնից 'ի նա , և նա յը-
ղայեալ յերկնային զօրութենէ՝ ծնաւ զեր-
կուս որդիս : Յորժամ հասին նորա յարբունա
հասակի՝ սկսան հետեիլ զբօսանաց որսոյ . սա-
կայն մի 'ի նոցանէ ամստութեամբ նախանձեալ
ընդ քաջութիւն եղբօր իւրոյ՝ այնքան չարաչար
վարեցաւ ընդ նմա , մինչ զի նա պարտաւորեցաւ

Թողուլ լքանել զայս ենթալուանեայ աշխարհ
 և վերանալ ելանել յերկինս : Ապա հոգին
 միւսանգամ էջ յերկնից 'ի խոնարհ . և կինն
 այն յղայեալ վերստին՝ ծնաւ զդուստր մի . որ
 է առաջին ծնող հիւսիսային Ամերիկացոյ :

Լապովտեր ասէ , թէ վայրենի բնակիչքն
 Ամերիկոյ համարին զինքեանս շառաւիղեալ 'ի
 կենդանեայ : Միկապոս ստեղծ զնոսա 'ի Ժամա-
 նակի ջրհեղեղին . և նորքա կեցին 'ի վերայ ծա-
 ծանեալ անտառայ՝ յորոց կազմեացնա զկամուրջ
 մի մեծակառոյց . ապա աղաչեացնա զՄեքենիսի՝
 զչաճն ջրոյ առ 'ի տալ նմա զկալուածս ինչ
 սակայն Մեքենիսի անտես արար զաղաչանս նորա :
 Ընդ այս գժդմեալ Միկապոսի՝ առաքեաց
 յերկիր զկուղբն , զջրչունն և զմուկն ինչ առ
 'ի որոնել զերկիր 'ի յատակս ծովուն : Սորքա
 ամենեքեան դարձ արարեալ գնացին առ Միկա-
 պոս . մուկն միայն տարաւ թիւր զսակաւ աւագս
 ինչ յերկրէ , որով Միկապոս ստեղծ զլեառն
 մի մեծ : Ապա հրամայեացնա աղուխառն ընթա-
 նալ շուրջ զնորաստեղծ լեռամբն զայնուիկ և
 յօրինել զհողագունտն . յայսմ վայրի վէճ իմն
 պատահեցաւ 'ի միջի կենդանեայ : Միկապոս
 զայրացեալ ընդ վէճ նոցա՝ սատակեաց զնոսա
 բոլորովին : 'ի նեխեալ մարմնոց կենդանեայս
 պսոպիկ ծնան մարդիկ : և մին 'ի օրցանէ եգիտ

զխրճիթն Միկազոսի՝ որ ամուսնացոյց զկին մի
ընդ նմա :

Այլք հաւատան զի Աճ տնկեաց զբազմութի
նեանց յերկրի , և անտի՝ ստեղծ զայր և զկին :
Բաժանեն նորա զաստուածային էութիւն 'ի չորս
անձինս . որք են՝ հայրն Աճ , որդին , մայրն ,
սկիզբն չարեաց , և մոլորակն արեգական :

32 — Պատիւ : Է պտուղին չ հնդկացնր
ման սելսի . գոյն սորա է դեղին . համ սորա
քաղցր է միանգամայն և տտիպ : Այս պտուղ
յաճախ գտանի յԱմերիկա և ս առաւել յարեւե-
լեան հնդիկս :

33 — Հեռ ողնոյ : Ողնին կանադիոյ կա-
րի տարբեր է 'ի հասարակ ողնեաց գտելոյ յայլ
և յայլ տեղիս : Կարճ է սա մարմնով . կեր-
պարան նորա ունի զնմանութիւն կղբոյ . հերք
սորա են երկայն և թանձր . գոյն սորա է սեւ
խառնեալ լէ սպիտակի : Ողնաշարք այսր կեն-
դանոյ գրեթէ ծածկեալ են հերովք՝ զոր միայն
հնար է նկատել հետազօտ տեսութեամբ :

34 — Մշուհոյ ճիւղ : Սորա են տեսակ իմն
միտքրիկ կղբոյ , և ամենայն մասամբ նման են նմին .
սակայն սուլին չ տարբերին 'ի ձեռս իւրեանց :
Բուրեն սորա զսաստիկ հոտ մշկոյ :

35 — Աշուէ : Է կանգուն տունկին չ յաճ
ձախագիւտ յԱմերիկա : Ծաղկունք սորա բու-

անին շուրջ զծղօտիւ նորին . և ունին զմոյգ
կամ զբայ կարմիր գոյնս :

36 — Արեւոյ : Սա է թռչուն ինչ այս-
պէս անուանեալ յազգէն կարեբբեայ : Նմանի
սա մըմնջող թռչնոյն . և փետուրք սորա են փայ-
լուն և գեղեցիկ յոյժ : Սակայն մարմնով մեծ է
սա քան զմըմնջող թռչունն :

37 — Աշոր : Է սա օտուղ ինչ մանր և
կարմիր իբրև զգոյն վարդոյ . ունի զնմանութի
խաղողոյ և է թթուաշ յոյժ . զոր և ՚ի կիր ար-
կանեն ՚ի հանդերձանս կերակրոյ : Հնդիկք հիւ-
թովք տերևոյ սր ներկեն զկտաւս և զհանդերձս
յօրինեալս ՚ի մորթոյ կենդանեայ : Ռամիկք հա-
սարակօրէն կոչեն զօտուղս զայս՝ «Էմի» :

38 — Արեւոյ եւ շէր : Է սա տունկ ինչ
կարի նման լուտասի միանգամայն և նուսուֆարի :
Տունկս այս ունի զբազում ծղօտս տերևապատս .
տերևքն ՚ի բնէ ծալեալ լինին ՚ի ձև եղջեր յա-
ռաջ քան զփթթիլ իւրեանց : Զծղօտս սոցա
պսակեալ զարդարեն սպիտակ ծաղկունք գեղա-
փայլք . որք ՚ի ժամ գիշերոյ ցածուցանեն ըզ-
գլուխս իւրեանց ՚ի մէջ ջրոյ . և ապա սակաւ
առ սակաւ ամբառնան զնոսա վերստին ՚ի ծա-
գել արևուն :

39 — Նոնայրի : Է սա տեսակ իմն թռչ
նոյ նմանեալ թութակի :

40 — Սպիտի ծուռ : Է սա տեսակ իմն գի-
Տւոյ, որ յաճախ բուսանի 'ի կողմանս Եւրոպիոյ
'ի մէջ պարտիպայ : Բուն սորա է ոստոտ և
անհարթ . և կարի պիտանի է 'ի յօրինուածս
բժշկական դեղորէից :

41 — Սիւռ : Է սա բոյս ինչ պատատու է
Պատատի սա զճառուլք , զտնկովք և զոտիւք
մարդոյ . այնպէս զի կարի դժուարին է գնալ
'ի ճախինս և յանտառս՝ ուր յաճախ գտանի այս
տունկ :

42 — Ըսպիտի օձի : Գտանին օձք ինչ
յԱմերիկա , որք ունին 'ի ձեռս իւրեանց զչորս
կամ զՏինգ բոլորակ ոսկերս . յորժամ նորքա
չիեն ընդ միմեանս զձեռս իւրեանց , արձակեն
զսաստիկ շաչիւն զօրէն շառաջման քոժոժայ
մանկանց : Արմատ ինչ կոչեցեալ Պողիգալա Սի-
նեգա է զօրաւոր դեղթառի վասն թունոյ շաչիւն
օձից :

43 — Կարիւղոյ : Է սա կենդանի ինչ գի-
շակեր և կերպարանօք նման է յոյժ կատուի . ունի
զձեռ երկայն յոյժ , զոր հնար է մարդոյ բազում
անգամ փաթութել զմիջով իւրով : Ասի թէ
կենդանիս այս պատատեալ զինքն զճառուլ միով
յարձակեսցի անտի 'ի վր անզօր չորքոտանեաց .
փաթութեսցէ զձեռ իւր զմարմնով նր . և 'ի մի-
ում վայրկենի հերձեալ պատառեսցէ զորկոր նր :

44 — Թուղուն էրնչոյ : Այս է քաղցրախօս
Թուղուն ինչ որ յաճախ գտանի 'ի Լուսիսիանա
'ի ժամանակի հնձոց բրնձոյ . երկայնութիւն
նորա է վեց բթաչափ . գոյն նորա է սեաւ .
բայց ձեռնորա է դեղին :

45 — Զերանճոնդ : Այս է տեսակ իմն դրդ-
մի՝ զոր Գաղղիացիք կոչեցին այսու անուամբ :
Ունի սա զհամ կիտրոնի :

46 — Երեւ պայծառափայլ արեգակունիտ : Պատ-
կեր արփուոյն տուգաւորեալ յամպս՝ երեւի իբրև
մետէ որայ մի փայլուն , և զանհնարին շառաւիղս
արձակէ առ կողմամբ նորին . քանզի ճաճանջք
արփուոյն ցոլանան 'ի հանդիպակաց ամպս , և
ցուցանեն զնոսա իբրև զպայծառափայլ արե-
գակունս : Ասի թէ այսպիսի մետէ որայք յաճախ
գտանին 'ի հիւսիսային Ամերիկա . տեւն զբա-
զում աւուրս անընդհատ լուսով . և երևին ա-
չայ մարդկան 'ի ծագմանէ արևու մինչև 'ի ժամ
երեկոյին :

47 — Ապիոս : Է սա տունկ ինչ դալարի՝
որ ունի զպատաստուկ ծղօտս և զազնիւ ծաղկունս :
Հնդիկք ուտեն զարմատս նորա՝ որ նմանի գետ-
նախնձորոց :

ՎԱԽՃԱՆ :

